

1879—ՀՐՏԿ. ԴՈՒՐԵԱՆ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ—1929

ՆՈՐ ՇՐՋԱՆ  
Գ. ՏԱՐԻ

1929—ՓԵՏՐՈՒԱՐ—ՄԱՐՏ  
ԹԻՒ 2-3

# ՍԻՆԱ

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԵՐԱՎՈՒԱԿԱՆԻՐ ՀԱՅ ՊՈԼՏԲՈՐԲՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԿՐՈՆԱԿԱՆ . Մարդկութեան Տառապամբը Բ. Ե. — 2. Աւետարանի Ծառայութիւնը . Ե. Ե. Դ. — 3. Կրօնի և Գիտութիւն . — 4. Ասունածք . Արակե Երկար . — 5. ԽՄԲԱԴՐԱԿԱՆ . Հայաստանաց Եկեղեցոց Բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ . — 6. Օսւարանը . Սիւլի Բրիտուն . Թրզմ . Բ. Ե. Գ. — 7. Պ.Ս.Մ.ԱԿԱՆ . Քողիբայի Վաճը և անոր հայ միաբանները . Մ. Ե. Ա. — 8. Կիլիկիոյ Կարողիկոսները . (ԺԲ) Խայտանոր Բ. Զերոնցի . (ԺԲ) Ազարիս Զուղացի . Բ. Ե. — 9. Ասաղազործ աշակերտը . Թրզմ . Մ. Նուպարեան . — 10. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . Մեր Թարգմանիչներուն կարծեցեալ Երաշաղիսութիւնը . Ե. Ե. Դ. — 11. Մանկակունիկ մասերուն մեկ նոր ձեռապիրը . Ե. Ե. Դ. — 12. Պարագունիք ի Ս. Գիրս Նոր Կանգառանի . Ֆ. Յ. Մ. — 13. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . Առ Աստուած . Alfred De Musset . Թրզմ . Բ. Ե. Գ. — 14. ՄՈՍԵՆԱԽՈՍԱԿԱՆ . Վ. Լ. Խուսկուրեան . Օրագրութիւն ուղեւորութեան յեւրոպա Սահակ Բ. Կարողիկոսիմ Կիլիկիոյ . Բ. Ե. — 15. Խաղաղական կամ Պոջնանի Հայոց Պատմութեան մէջ . Արտաազդ Վրդ . — 16. ՆԵԽՈՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՍԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ . Ս. Եվրեակի Ասունոյ Վեշտանան Ասացուամբ լիսան Նիկոլիցեայ բաղաժին . Ֆ. Յ. Մ. — 17. Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ . Տեղեկացիր Կարկուռեան դատին , Աւագ Տօներու , Ամանորի և Ծննդեան հանդիսութիւնին , եւայլի :

The S I O N an Armenian Monthly of Religion  
Printed in JERUSALEM - PALESTINE

# ՍԻՐՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1929-Ի ՀԱՄԱՐ

ԵՐՈՒՍԱԼԵՄԻ Հայրապետուան Տ. Մառշեղ  
վրդ. Մասիկեան Զաքարին՝ Գահիրէ,  
Խորայէլեան Տ. Կիւրեղ վրդ. Խորայէլեան  
Տ. Մալթոց Քնյ.ին՝ Ապօնան, Պիւլպիւլ-  
եան Տ. Գարեգին Արեղայ՝ Թօփալեան  
Քիւզանդին՝ Հալէպ, Աշամեան Աջոտ՝  
Քիւրքնեան Ատեփանին՝ Աօփիս և Քէօ-  
լէնան Տէ. Բարիսին՝ Երուսաղէմ, Քէշի-  
եան Զարմայը՝ Փիրանեան Տիգրանին՝  
Հալէպ, Եազուպեան Յակոբան՝ Ֆէր-  
մանեան Գրիգորին՝ Խոկէնտէրուն և Համ-  
քիւզանդին՝ Հալէպ, Աշամեան Աջոտ՝

## ՍԻՐՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բալոր երկիրներու համար՝ Սի՛նի Տարեկան բաժնեգինն է
Եղիպտական Դրամ 30
Անգլիական Եվր 6
Ամերիկեան Տուն 1, 50

Եռամսեայ կամ վեցամսեայ բաժանորդագրութիւն չկայ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԱԿԻ Է

Սի՛նի իւրաքանչիւր թիւը Երուսաղէմի մէջ կը վաճառուի 2, 5 Գնինի.

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Գործառնութեանց դիւրութեան համար կը խնդրուի Սի՛նի աշխատակիցներէն և  
բաժանորդներէն որ բաժանորդագրական, տպարանական, գրամական, ևայն խնդիրնե-  
րու և գործերու համար զիմեն ուղղակի մեր Տպարանի Տեսչութեան, առ' հասցէով.

Direction de l'Imprimerie du Patriarcat Arménien  
JÉRUSALEM—Palestine

Իսկ խմբագրական գործերու համար զիմեն ուղղակի Խմբագրութեան, սա՛ հասցէով.

Rédaction de la Revue Arménienne ՏՅՈՆ  
Patriarcat Arménien  
JÉRUSALEM — Palestine

## Յ Ա Գ Ե Տ Ե Խ Ա

### ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆԻ

Զերմօքն կը ձայնակցիմ անոնց, որ ինվարդեաբաս զեղեցիկ ամակելաշ մը ծրագրեցին ուրսունաւեայ Նուպարեանին, հոչակեռու համար անոր Յորեկեանը եւ այս կերպով բարգևան հանդիսացած եղան հայ մատուականուրեան եւ հայ ուսանող սերունդներու յարգանին եւ երաժամագիտուրեան հանդիս ա'յն ազնիւ անձին, որ իր բոլոր կեանքը նույրած է մեր աշխարհաբար վեորի մշակման, իրեւ Բ-Ա-Շ-Հ-Ե-Լ- եւ իրեւ Թ-Ա-Շ-Հ-Ե-Լ-։ Մերնոց Նուպարեան մեկն է այս հեռասեւ եւ դրական միտերեան, որ վարոց բարոնուցին մեր աշխարհաբարի կարեւորուրինը, իրեւ ծողովդրական վեզու, որով պետք էր զրկել, բարգանեա, դասախոսել, բարգիզ, երազաւակացրել, երգել, եւային, եւային, հակառակ նորայր Բիւզանցացիի, որ սիրանա մը գրաբարին, իր կեանքին կարեւոր մասը նույրած էր յօրինելու իր ԲԱՌ-Ո-Գ-Ի-Բ-Ը ։ Գ-Ա-Շ-Ե-Շ-Ե-Ն- Ե-Ն-Ե-Շ-Ե-Ն- ։ Տա. Կ. Պոլիս, 1884), այն հաւաքով որ Հ-Ա-Շ-Հ-Ե-Լ կարելի պիտի ըլլար ընել ինչ որ իրաւունքն էր աշխարհաբարին։ Մ. Նուպարեան, ընդհակառակն, շիսայ տևած էր իրազուրինը և զրծեականութեան ցոյց տուա իր հաւաքով՝ հաւաքանկերով 1892ին Բ-Ա-Շ-Հ-Ե-Ն- Ե-Ն-Ե-Շ-Ե-Ն- ։ Բառագիր մը, որ գուանեւեանով գրալող անձն հայու գրաւաղանին փրայ կը զենուի. Եւ մեր աշխարհաբարին պաօրուան վիճակը, զերծ անձն նախապաշտութեան, իրաւունք կուտայ Նուպարեանի։

Սյնափոսի անձ մը — որ ոչ միայն իր ասքող կեանքը նույրած է իր ազգին, իրեւ համես մշակ, առանց պոռուախօսուրեան եւ առանց շշուկանին, բառագիրներ յօրինելով եւ գնաւաներեան զիրքար հայացներով, այդ անձ իր ոմեցածը ձգած էր Բարեկործականի զանձանակը — իր այսուուան վիճակին մեջ, երբ իր կեանքին արեւը իր վերշին ոյս սերուն մէջ կ'ամփոփուի, սուզգի պիտի զզայ այն անուշ միիրականը, որ արդար իրաւունքն է անշահանութիւն վասակուրի մը, ազնիւ հայորդի մը, անձնի նայորդի մը, անձնանձիր աշխատի մը՝ իր մայրենի լնուին զեղեցիուրեան եւ պահպանուրեան համար։

ՄԻՈՆ արտաց կ'ողջունե պատուակն Յորեկեաւը եւ կը շնորհառէ Յորեկեանը ծրագրող եռաւուն հայրենակիցները եւ կը մարդ կատաւագ յաջողուրին իրենց յուրինեան ծրագրին զրծադրուրեան։

### ՅՈՐԵԼԵԱՆ ԳԵՈՐԳ - ՄԵՍՐՈՊՈՎԻ

Դերգ-Մերնոց, Հայ երիսաւարդուրեան կրուրեան եւ դասիարակուրեան նույրած մշակ մըն է, եւ իր հաւաքին ու աշխատուրեան անհենն հոյսկան յուշաւանը պիտի ըլլայ իր շանինով հաւաքուած ՄԵ-Ր-Պ-Ե-Ն- Ճ-Ե-Ր-Ե-Ն-ը, Պոլիարիո մէջ, որ վասահ ելիք ըստի տես եւ խորհրդաշանը պիտի ըլլայ Պոլիարիո Հայ զաղուրին մէջ անաւա հայացնուրեան, զերծ մասնաւոր ներսունեւեր եւ շաներ, եւ պիտի պաշտպան աղը պառական զաղուրին երիսաւարդուրինը օսաւացման եւ այսաւերման վասնենուն դեմ։

Սյու անխոնց կրուրան Մշակը խաչվելուու եւ զեանատելու համար՝ Յորեկեանական Կերունական Յանձնանորով մը կազմուած է Գեր. Տ. Ստեփանոս Ս. Արենսու. Յոլակինեանի նախապահուրեան ներքի, որ որշած է հանդիսաւոր կերպով տօնել Տիւար Դերգ-Մերնոցի ուսուցչակն եւ գրական զրծունակուրեան Քանձնինական Յորեկեանը՝ յառաջիկաց Մայիս 26ին։

Դրուրիւններ կ'ուղղուին Յորեկ. Կյրենին. Յանձնախումքի հասցեին, Մերնոցեան ձեւաւասն, իսկ դրամական առավելութ Գանձապետի հասցեին։

Mr. ARAM AJDERIAN

Trésorier du Comité du Jubilé Mesrob; Collège Mesrobian  
PAVLOVO, SOFIA (Bulgarie)

1879

ՀՈՒՐԵԱՆ ՑՈՒՑԵԱՆ ՑԻՇԱՏԱԿԻՆ — 1929

# ՍԻՐԱ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Գ. ՏԱՐԻ — ՆԱՐ ՇԲԶԱՆ

1929 — ՓԵՏՐՈՒԱՐ — ՄԱՐՏ

Թիվ 2—3

## ԿՐՈՆԱԿԱՆ (ԴԱՍԵՐ ԱՒԵՏԱՐԱՆԸՆ)

### ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Անհատներու տառապանքին չէ որ կ'ուշ զեմ տկնարկել, այլ համայնքներու և անոնց ամբողջութեան տառապանքին, թէև անհատական տառապանքին վերլուծումը կրնայ օգնելմեզի՝ հասկնալու համար մարդկութեան տառապանքը:

Անհատներ կրնան տառապիլ և կը տառապին չքաւորութենէ, հիւանդութենէ, և այլն, ուղղակի իրենց ֆիզիքական կհանքին հետ կապ ունեցող անհաւասարակըշուութիւններէ. անհատներ կրնան տառապիլ նաև իրենց զղձանքներուն և կիրքերուն չիրագործուելէն. նոյնպէս կը տառապին երբ զրկանքի կը հանդիպին, երբ իրենց իրաւունքները կապտուին, եայլն, որոնք հոգերանական իրազութիւններ են:

Մարդկային ընկերութիւնն ալ, անհատի պէս ունի իր ֆիզիքական և հոգերանական տառապանքները, զորս փարատելու համար ճիգեր կ'ընէ ան, բայց չի յաջողիր:

Այն որ կը տառապի երջանիկ չէ: Ուշրեմն ինչ է երջանիրինը, սին խօսք մըն է, թէ իրականութիւն մը: Մին խօսք մը չէ անշուշտ, բայց շատ դժուար է սահմանում երջանիրիան: Ան կախուած է տառապանքի բնութենէն, տառապովին ըմբռուամենէն ու զգացումներէն: Մէկու մը երջանիրինը ուրիշի մը տառապանքն է: Թագաւոր մը ամէն բան ունի և երջանիկ չէ բոլորովին, բայց մշակ մը երջանիկ է իր ունեցածով և չունեցածով:

Երջանիկութեան շապկին պատմութիւնը շատ իմաստալից է: Կրկնենք զայն, առեւելեան վեհապես մը կը տառապի: կ'ուշ զէ երջանիկ ըլլալ. բայց իր զիրքին և իր իշխանութեան բոլոր զիւրութիւնները չեն կրնար մեղմացնել անոր տառապանքը: իր իմաստուններէն մէկը կը կարծէ նար մը գտած ըլլալ և կ'ըսէ, պէտք է երջանիկ մէկը գտնել և անոր շապիկը հազցնել վեհապետին: Բարձրագոյն հրամանը կը տրըուի: ամէն կողմ զործակալներ կը զրկուին որպէսզի երջանիկ մարդ մը զանեն և ընթերն անոր շապիկը: Սակայն որու որ կը հարցնեն թէ երջանիկ ևս զուն, ժխտական պատասխան կ'ընդունին:

Ամէն մարդ գգոռն է իր վիճակէն, ամէն մէկը իր տառապանքն ունի: չկայ երջանիկ մարդ մը: Հուսկ ուրիմն կը հանդիպին աղքատիկ մշակի մը և կը հարցնեն թէ երջանիկ ևս զուն: — այս կը պատասխան մշակը, փառք Աստուծոյ, երջանիկ եմ. բայց ի՞նչ կայ, ի՞նչո՞ւ կը հարցնէք, — ոչինչ, կը յարեն վեհապետին զործակալները, ոչինչ. շուտով հանէ շապիկդ և առուր, ան պէտք է մեր վեհապետին: Շատ լու, կ'ըսէ, մշակը, բայց ևս շապիկ չունիմ... որ հանեմ տամ ձեզիր....

Շատ ազուոր ըննուած է այս պատմութիւնը, և պերճախօս է ինքնին: Վեհապետ մը ամէն բան ունի, բայց երջանիկ չէ. մշակը շապիկ իսկ չունի, երջանիկ է սակայն:

Ուրիմն . . .

Ուրիմն... երջանիկ է այն որ չի տառապիր աւելորդին բաղձանքով:

Ուրբ Աւետարանը աւելի զործական բարոյագիտութիւն մը ունի այս մասին, որուն պէտք եղած ուշադրութիւնը չեն ը-

ներ մարդիկ։ Քրիստոս կ'ըսէ, նախ Աստուծոյ թագաւորութիւնը ձեռք բերէք, և յիսոյ ձեր բոլոր ուզածները պիտի տրուին ձեզի։ Այս է, քրիստոնէական գաստիւրակութեան մէջ, առաջին և վերջին պայմանը երջանկութեան։

Այսօր քրիստոնէայ մարդկութիւնը տառապանքի մէջ է։ Այս տառապանքը կը քաշէ ան՝ պարագերու և իրաւունքներու նուիրականութեան անունով։ Ասոր համար է որ, զոր օրինակ, պատերազմը օրինաւոր հոչակուած է, պատերազմը, որ բայ ինքեան մարզկացին ընկերութեան ամէնէն յիմար հաստատութիւններէն մէկն է, վասն զի տափիկա մեծագոյն տառապանքն է ժարդակութեան, զիսաւոր ազդիւներէն մէկը անոր ապերջանկութեան։ Իրականին մէջ ի՞նչ է պատերազմը որ կը մղուի իրաւունքի և արզարութեան, հայրենիքի և արժանապատութեան, և զես չոտ մը ուռուցիկ նուիրականութիւններու անունով։ — Ոյժի գերակշռութեան մրցանք մը լոկ, այսինքն ուրիշներու արիւնին և ինչքին գնոյ աւելորդին ավրապետելու բուռն տենչանք մը։ Պաշտօնական աւազակութիւն մը, յափշտակութիւն մը, կողոպուտ մը անորակիլի։

Աւելորդին տիրելու տենչանքը հօգեկան տառապանք մըն է, մոլեզին կիրք մը, մարդու անասնական բնապղներուն մէկ արտայաջտութիւնը։ Թէ և բնապատումներ կ'ըսեն մեզի թէ անասններուն թագաւորը, առիւծ, չի յարձակիր երբ կուշտ է, պարզապէս իր անօթութեան պէտքը լրացնելու համար է որ կ'որսայ . . . : Ան պէտք չունի աւելորդին . . . : Բայ Ասկերեանի կերակուրի պէտքէն աւելին՝ ապականութիւն է կերողին համար։

Մարգկացին կարողութիւններուն զարգացումը, ուզեղային թէ հոգեկան, կ'ուժաւորէ մարդը, և իրաւունք կուաց անոր միշտ նոր նոր նուաճումներ ընկելու բընութեան ծոցը։ Սակիա ազնիւ ձգտումն է մարգուն։ բարձրացումն է յառաջիմութեան ձգտումը, որ կ'առաջնորդէ զէպի երջանկութիւն և ո՛չ թէ կը տառապեցնէ։

Աւետարանին դառը մեզի այս մասին սա՛ է որ մարզիկ հօգեկան արժէքներու պէտք է ընծայեն առաջնութիւնը իրենց կեանքին անաւասութեան մէջ, և յիսոյ նիւթականին, և նիւթականին մէջ աւ կա-

րեւորներուն, և ո՛չ թէ աւելորդին։ վասն զի աւելորդին ձգտելու կիրքը նոյն ինքն ազահութիւնն է, սուրնութիւնն և հպարտութիւնն է, հոգեկան տառապանքին այդ աւելի արտայայտութիւնները։

Խորհրդակուր պատկեր մը կայ Աւետարանի մէջ։ քիչ մը մօտէն զիտելու համար զայն վերցնենք քօղին մէկ ծայրը։


Ահա Փրկիչը և սատանայ կեցած են դէմ դիմաց։ Յիսուս մկրտուելի հտքը, քաշուած էր առանձին տեղ մը քառասուն օր, առանց ուտելու և խմելու, «Վորձեալ ի սատանայէ»։ Երկար բարակ չէ նկարագրուած թէ ի՞նչ էին այդ փարձութիւնները։ միայն նկարազրուած է վերջին տեսարանը։

Սատանան կ'ուզէ փորձել թէ ՅիսուսՔրիստոս իրօք Որդի Աստուծոյ է, և այս նպատակով իրենք բան կ'առաջարկէ Անոր. — հաց, փառք և անկախութիւն։

Ա. — Յիսուս քառասուն օր ծոմ էր, և յետոյ անօթեցած։ Սատանան կ'օգտուի առիթէն և կ'առաջարկէ Անոր, զուն քառասուն օր կրցար անօթի ծարաւ կենալ, և քանի որ հիմայ անօթութիւն կ'զգաս, եթէ զուն իրօք Աստուծոյ որդի ևս, հրամայէ սա քարերուն, թող հաց ըլլան։

Քրիստոս չի հերքեր հացին պէտքը։ իրօք քառասունք մը պէտք բանող մէկը պէտք է ուտէ և կշտանայ, ահա բոլոր իւրղութիւնը։ մարդ ծոմ բանած ըլլայ կամ ո՛չ, երբ նօթի է, պէտք է ուտէ։ Ապրելու համար հացը անհրաժեշտութիւն մըն է։ Եւ ասոր համար բաւական է քիչ մը բան։ Աւետարանի բանն ու բացատրութիւնը զորձածելով, հացը պէտք է, հացերը աւելորդ են։ Մանաւանդ օր ազգելու համար եթէ հացը անհրաժեշտութիւն մըն է, բայց ամէն բան չէ։ մարդ ուտելու համար չէ որ կ'ապրի. մարգուն թէ՛ւն զործն ու կոչումը ուտել չէ. ուրիշ կարեւոր բաներու ալ պէտք ունի ան, զոր օրինուի, Աստուծոյ խօսքին։ Եւ Աստուծոյ խօսքին տակ մինք կը հասկանանք ամէնէն կենասկան, ամէնէն աղնիւ սնունդը, որուն ամէն ատեն պէտք ունի մորգը, մինչ հացը պէտք է օրուան մէջ քանի մը ժում, և ի հարկին մէկ ժում, և նոյն խոկ, բայ Փրկչին, եթէ մարդ ստիպուի քառասուն օր ալ անօթի մասը, կրնայ ազգիւ անհաց, բայց չի կը

140-98



702-66

նար բոպէ մը իսկ իր ուղեղն ու հոգին անանունդ թողուււ:

Հացի խնդրին մէջ պէտքէն աւելին փնտուելը նոյն ինքն ազանութիւննեն է:

Երբ անհատը ազան է, կը տառապի միշտ, երբ ազան են պետութիւններ՝ կը տառապին արդ պետութիւնը կազմող ժողովարդները, երջանկութիւն չկայ, պատերազմ կայ, արիւն կայ, յափշտակութիւն կայ: Աստուծոյ թագաւորութեան սահմաններէն գուրս է հաց վաստկելու այս կերպը: Ասոնք աւելորդ են: Բայց ազանութեան տառապանքովն է որ կը տապնապին անհատներ ու ազգեր, ուրիշ խօսքով երջանկութիւնը իրենք կը վասրեն իրենց մէ իրենց իսկ կամքով:

Բ.—Սատանան վատի կ'առաջարկէ աւելորդ հացը ժխտող Յիսուսին, պայմանաւ որ գլուխ ծուէ իրեն: Ան լեռան մը բարձունքէն մատնանիշ կ'ընէ հեռուուր հորիզոնները. կը աւենին, ասոնք բոլոր ի'մա են կ'ըսէ փորձիչը Փրկչին, և այս բոլորը քեզի պիտի տամ, քեզի որ մաս մը հող չունին այս աշխարհի վրայ. օ՞ն խոնարհէ առջես:

Ո՞րչափ հրապոյր ունի այսպիսի տուաջարկ մը, գիտէք, հասարակ մահկանացուներու համար: Մարդիկ իրենց հոգին, իրենց պատիւն իսկ կուտան այսօր աւելորդ հարսութիւններու համար: Զէ՞ որ, կ'ըսնեն անոնք, երջանկութիւնը հարսութեան մէջ է, երբ հարուստ ես, ամէն բան քեզի համար. մնացածը պարապ խօսք: Բայց նոյն իսկ մէնք մեր մէջ կը ճանչնանք շատ հորուստներ որ երջանիկ չեն: Մշակի շապիկն կարստ վեհապետներ կան մարդկութեան հարուստ զաստկարպին մէջ. անոնք ճախ են, հարուստ են, երջանիկ չեն սակայն. երջանկութեան շապիկի մը պէտք ունին և չեն կրնար գտնել դայն:

Եւ Յիսուս կը պատասխանէ փորձիչին, չե՞ս գիտեր որ ճշմարիտ մարդիկ՝ միւյն մէջ կ Սատուծոյ կ'երկրապոցէն: Անոնց պաշտամունքի առարկան մէկ է, ճշմարտութիւնն է ան. այս քու մատնանիշ ըրած իշխանութիւնը, փառքերը հաստատուն չեն: Մարդիկ այս անկայունութիւններէն վեր հաստատութեան մը պէտք ունին: Ինչ որ զուն տալ կ'ուզեն մարդուն, տառապանքն է ան, երջանկութիւն չէ: Մարդ երջանիկ

է այն ատեն երբ հաւատարիմ է իր Աստուծոյն: Անհաւատարիմը ստորին մարդն է: Դուն փառքի եւ իշխանութեան հրապոյրով ստորեւրին կ'առաջարկես, բայց գիտցիր որ ճշմարիտ մարդը չ'ստորնանար քու առջեւ: Թու փառքդ տառապանք կը բերէ մարդուն, քու իշխանութեանդ մէջ չկայ երջանկութիւն:

Գ.—Փորձիչը իր երբորդ եւ վերջին փորձը կ'ընէ: Շատ աղէկ, զուն կրցար քառասուն օր անօթի ծարաւ ապրիլ և անօթանալէ հետքն ալ կարեւորութիւն ընտայեցիր հացին. քեզի հարսութիւն եւ փառք առաջարկեցի, զուն զանոնք ալ մերժեցիր, հիմայ վերջին խօսք մըն ալ ունիմ քեզի. զուն կ'ըսիս թէ Որդի Աստուծոյ ես, եթէ իրաւ է ասիկա, եկուր ստացարակէն վար նետէ ինքզինքդ, տեսնենք թէ ճշմարիտ է ըսածդ: Զէ՞ որ զուն պահապան հրեշտակներով պաշտպանուած ես, ոտքդ քարի անզամ պիտի չզարնես հասարակ մահկանացուներու պէս, որոնց սուքերը ստէպ քարի կը զարնուին երբ կը քալին սա՛ փոլոցներու կամ ատ ձորերու մէջ:

Այսո՛, պատասխանեց Յիսուս, մարդիկ երբ քարկի չեն զիտեր, իրենց սուքերը կ'արիւնեն քարերու զարնելով, ուր որ ալ քարին: Յանցանքը իրենց է և ո՛չ թէ քարերուն: Աստուծած բոլոր մարդիկն ալ օժտած է այնպիսի կարողութիւններով, որոնք թանկազին են, եւ կրնացին չըսիկի քարի պէս զժուարութիւններու եթէ միայն ուղեին: Քանի որ զուն Սուրբգիրքէն կը խօսիս, չե՞ս զիտեր որ հոն զրուած է նաեւ, Զփորձես քու Տէր Աստուծդ: Մարդիկ անկախ չեն, և պէտք չէ որ փորձանքներու առջեւ ուրանան իրենց պաշտած ճըշմարտութիւնը:

Սատանան, յուսահատ իր փորձերուն մէջ, կը հրաժարի հետապնդելէ Յիսուսը:

Բայց կարելի է հարցնել քրիստոնեաւուն թէ զուք ո՞ր աստիճան հաւատարիմ մնացած էք հրապոյրներու և փորձանքներու մէջ ճեր Փրկչին և չէք մեծամտած հրպարտութեան թափին տակ:

Հպարտութիւնը ուրիշ տառապանք մըն է մարդուն համար, որ կը տանջէ զայն, եւ կը մեղցնէ անոր ներսը երջանկութեան զգացումը հեռացնելով զայն իր Աստուծմէն:

Մարդկութիւնը երջանիկ չէ, որովհետեւ հոգեկան են իր տառապանքները, ուրովհետեւ Փրկչին հետ չեն խօսիր, փորձիչին հրապարաներէն և զրգիւներէն կը տարուին:

Սիսմի նախորդ թիւին մէջ խոստացեր էինք Լեռան Քարողը առարկայ ընել մեր Աւետարանի դասերուն:

Ցիսուսի փորձութիւններուն այս հաւկիրծ վերլուծումը, իրքն նախորապատրաստութիւն, վատահ և՛ որ օգտակար պիտի ըլլայ մեր ընթերցողներուն հասկնալու համար Լեռան Քարողը:

Բ. Ե.

## ԱՐԵՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Ամեն. Ա. Պատրիարք Հօր Յնդր. 10 Եշ. Որդոց Արուման տօնին տորիւ տուած Քարողը, ամփոփուած իւ սարկուագ աշակերտներու կողմէն:

Այսօր առաքելական խումբէն դոյդ մը եղբայրներու տօնական հանդէսը կը կատարէ եկեղեցին, Յակոբի և Յովհաննու, ուրոնց առաջինը իր ընկերներէն նախկին նահատակին եղաւ, և երկրորդը իրքն աւետարանիչ. Տիրոջ պատգամները կը խօսի միշտ Աստուծոյ բամէն, Երկուքն աւ ինչպէս զիտէք արդէն, պարզ ձնորուներէն և Տէրը արժանի համարեց կանչել զիւրենք իր խակ գործին: Անոնք սիրով հետեւցան իրենց Վարդապետին և կատարեցին իրեն ցապարտականութիւնը, մինչեւ որ հնչեց վիրջին ժամը: Իրքն մարդկը՝ չէին կրնար ունենալ բարձրագոյն կատարելութիւնն մը, եւ աստուածային առաջնորդութեան հրաւիրուելու ատեն, չունէին այն մեծ պատրաստութիւնը զոր հոգիները միայն կ'զգան: Անոնք մարմնական մատծում մը յարած էին Յիսուսի, և Անոր երկու կողմերէն կը քալէին երբ վիրջին անդամ Երուսաղէմ կուգուիին: Կամ իրենք ուղղակի՝ կամ իրենց մօրը միջոցաւ, ինչպէս աւետարանիչները կը զրեն, խնդրանք մը ներկայացուցին Տիրոջ փափաք յայտնելով որ անոր թագաւորութիւնն մէջ ա-

ռաջին տեղը տրուի իրենց՝ աջէն ու ձախէն բազմելու համար: Բիշ մը փառասիրական այս տառաջարկը հաճելի չեղաւ Յիսուսի: բայց ան ըսաւ, զուք կրնաք ընել ինչ որ ես պիտի ընեմ, խմել այն բաժակը՝ զոր ես պիտի խմեմ, այսինքն՝ մեռնի:

— Այո՛, ըստին, կարող ենք: Այս յայտարարութիւնը կը մեկնէ երկու եղբայրներուն ամբողջ արժանիքը, բարձրութիւնը՝ ուր կրնայ մարդ թեակուսել, երբ պատրաստ է ինքինքը զոհելու: — Այո՛, ըստին անոնք, կարող ենք համբերելու այն տանջանքներուն զոր անիրաւները պիտի ուղեն տալ մեզի: Կարող ենք մռոնալ ամէն ինչ, մի միայն ուրիշներուն ծառայելու համար, թէ իսկ անոնք թքնեն մեր ճակաբին: — Այո՛, կարող ենք:

Այս խոստառավանութիւնը, ինչպէս ըսի, անոնց աղնուագոյն զգացումներու խորերէն գուրս կուզար: Բայց գես բան մը կը պակսէր: Մարդկի ընդհանրապէս մեծ ցանկութիւններ կը սնուցանեն իրենց ներսիդին, սակայն այդ փափաքները մարդունը ըլլալով մարդկային չեն բոլորովին: Եթէ մէկը խորհի որ աշխատանքէ վերջը պէտք ունի հանգիստի, մտածումը մարդունն է, բայց մարդկային չէ, վանդի ո՞ր անասունն է որ խարազանի կամ խթանի տաժանքին տակ տանջուելէ վերջ, պիտի չուզէր հանդիլ: Ո՞գ պիտի չուզէր միշտ մէջէն վայելել աշխարհը՝ ունենալով միշտ առատ սեղան մը իր զաւակներուն և իր սիրելիներուն համար: Բայց ո՞ր անասուն պիտի չուզէր ունենալ իր որսը անտառին մէջ, կամ կերը մուռքքին մէջ: Ինչ որ մարդուն կը ներուի՝ նոյնը մարդկային չէ ապահովաբար: Այս աւետութեամբ ուրիմներկու եղբայրներուն յայտարարութիւնը տակաւին կրթուար ըլլալ մարդունը, բայց ո՞չ այն մարդկայինը՝ զոր Յիսուս սորվեցոց և պահանջեց իրեններէն: Վասնդի թէկ անոնք յանձն կ'առնեին խմել այն բաժակը զոր ինքը պիտի խմել և միլուուիլ այն մկրտութիւնը, որով ինչ պիտի միշտ միլուառէք: . . . բայց զես ժամանակը չէր եկած որ բուն մարդկայինը խմանային իր գերազոյն նշանակութեամբ:

Երբ միւս տոսը առաքեալները ուրբանեցած էին՝ թէ ասոնք երկու քը ազգականութեան շնորհիւ քիչ մը երկու գտած՝

լաւագոյն զիրք մը կ'ուզեն զրաւել, Յիսուս ըստ ասու. «Զաւակներս, ստուգին անտեղի է ասոնց մտածումը, բայց զուքալ ունիք նոյն սխալ բմբոնումը. ձեզի համար չկայ իշխանութիւն, մեծութիւն, բոնաւորութիւն, ինչպէս կ'ուզեն ունենալ աշխարհի իշխանները. ձեզի համար կայ միայն ծառացութիւն, սպասուարութիւն: Եթէ ուրիշ ժողովուրդներ իւրենց գրայ մեծամեծներ ունին, որոնք կը տիրապետեն, կը հարստահարեն իւրենց չահուն համար, ձեր մէջ անանկ չէ, և պէտք չէ որ ըլլայ. ո՛վ որ ձեր մէջէն մեծ ըլլալ կ'ուզէ՝ ծասալ պիտի ըլլայ. ո՛վ որ ձեր մէջէն առաջնն ըլլալ կ'ուզէ՝ պաշտօնայ պիտի ըլլայ ուրիշներուն: Սոով առաքելական խումբը նոր դաս մը առաւ. այդ բարոյական վսիմ առաքինութեան առջև՝ ամէն փառասիրութիւն պիտի կործանէր կորանքով. ո՛չ աթոռ իշխանութեան և ո՛չ կամք տիրապետելու, այլ ամէնուն սպասաւորելու չքնար յանձնասութեամբն էր որ պիտի կրնացին հաւատարիմ ըլլալ իրեն ու Աւետարանին:

Ի՞նչ կայ ասկէ աւելի խորոնկ և աւելի աստուածացին ներշնչում մը, զոր մարդկութիւնը կրցած ըլլայ սորվեցնել իր զաւակներուն, որոնք փառքն ու աշխարհիկ վայելչութիւնը մեծութիւն և իմաստութիւն կը համարին անմարին՝ անմիտ յաւակնութեամբ:

Պէտք չունիք զուք պատմութեան զիտութիւնը ունենալու՝ հասկնալու համար թէ ի՞նչպէս շրջուեցաւ հին մարդուն կատարած գերը, երբ Աւետարանի ձայնը խուցաւ. «Ո՛վ որ մեծ ըլլալ կ'ուզէ, ծառայ և սպասաւոր պիտի ըլլայ:» Եւ առաքելական խումբին ամերող զաստիարակութիւնը զլուխ եւալ այդ վայրկեանին. քըրիստոնէական զալոցին նոր ու սքանչելի վայրկեանն էր ան:

— Այսունետեւ ծառաներ պիտի ըլլաք զուք, ուրիշները կերծ պահելու համար չարիքէ ու նախապաշարումներէ: Գերի պիտի ըլլաք, ազատազրելու համար փրկութեան մեծագոյն զազափարը. լուծձի տակ պիտի հեծէք, որպէսզի ուրիշներու հոգերը անզատաններն ակօսուին ու պտղարերն. և ամէն զոհողութիւններէ զերչ ձեր ըսելիքը պիտի ըլլայ. Յանուն

պարտաւկանութեան ի՞նչ ըրինք որ, իբրև անպիտան ծառաներ ինչ որ մեր պարտքն էր: զայն կատարեցինք:

Դիւրին էր սակայն՝ մեծ ըլլալու այդ ընդոծին փառասիրութիւնը թողուլ մէկ վայրկանի մէջ և նուիրութիւն Աստուծոյ: Հարկ չկայ վարունելու. այդ նուիրումը մէկ վայրկանի մէջ կ'ըլլայ արդէն. օրերու կամ տարիներու գործը չէ այդ: Ավ որ Աստուծոյ խօսքը կը լսէ մի անզամ, կը տարուի անոր ուժէն: կը բանուի իր մազերէն. խել հազար անզամ կը կնուուելով նոյնը՝ կրնայ մնալ տըկար ու անզօր՝ եթէ լսելու ականջը պակսի մարգուն մէջ: Երկու եղբայրներուն, և իւրենց ընկերներուն անպարտելի հաւատքն ու համոզումը եթէ չնորհք մըն էր՝ որ իւրենց արուեցաւ. վասնզի չնորհները չեն ուրացուիր, բայց չնորհքն ալ իր բնակինքը անդուր կը փնտու: Մարդուն մէջ կամքը ատո՞վ է որ կարաղութեան կը փոխուի. ամէն մարգուն խօսքը թագուն կայծեր ու մեծութիւններ կան թաղուած, և եթէ ասիթ չունենայ զանոնք վեր հանելու: կը մարին անոնք կամ կը մոխրանան: Զայն մը պէտք է խօսի իրեն. «Կրնաս, կրնաս», ու սահմուկած մարգը՝ այդ պահուն՝ ինքնինքը զօրաւոր պիտի զգայ պատասխանելու, «Կրնամ, ինչո՞ւ չէ»: ու այն ատեն է որ պիտի լծուի մարգը իր գործին, իր նմաններու սիրոյն, գերազոյն բարիին, իւմաստութեան զազափարին, որոնք վեհ ազդակներն են մարդկային ճակատագրին:

Գուք ալ կրնաք այս պահուն նոյն օրինակ փորձի մը ենթարկութիւն ձեզէն. երբ այն ձայնը՝ որ անձանօթ չէ ձեզի հարցնէ. «Կրնաս ընել ինչ որ կը պահանջուի: — Եթէ զգաս որ զօրաւոր ես, ու քու մէջդ բան մը կայ, որ կրնայ փայլատակիլ, կամ նոր ոյժ մը որ կրնայ վեր բարձրացնել զգեզ, եթէ անձնաւէր ես, անձնուէր պիտի ըլլաս, եթէ փառանէր ես, համեստ պիտի ըլլաս, և եթէ առաջին ըլլալ կ'ուզեն, սպասաւոր պիտի ըլլաս:

Մարդեր կան որոնք գրեթէ անհոգ ու անտարբեր կ'անցընեն իրենց կեանքը, կը կարծեն թէ մեծ բան մը չունին գլուխ հանելիք. բայց ընկերացին պայմանները չեն ներեր որ ապրին անոնք առանց գործելու, աշխատելու և կամ առանց ուրիշ մը ունէ կերպով օգտակար ըլլալու:

Պարզ խօսինք. մէկը կ'ուզէ ընտանիքի հայր ըլլաւ. կուզայ հանգիստուոր վայրկեանը ուր իրեն կը հարցուի. Կրնա՞ս այս անմիշ աղջկան ճակատագրին տէր ըլլաւ, կընա՞ս պատուաւոր բոյն մը կազմել քեզի. կընա՞ս ճակտիզ քրտին քովը զաւոկներուդ նուրիբեկ քու անձդ հոգիսկ ու մարմնով: Եթէ անկեղծօրէն պատասխանեց. Կրնա՞մ. երջանիկ է այնպիսին, և չի վրիզիր իր նպատակին: Բայց ամէն մարդ այդ արիստիւնը չունի: Շատեր յանգգնաբար կը լծուին այս կամ այն զործին, առանց զիւցազնութեան մը պէտքն զգալու: Անոնք ոչ թէ ուրիշներու ծառայել, այլ ուրիշները իրենց կ'ուզեն ծառայցնել: Անոնք չեն կընար հասկնալ այսօրուան սուրբերուն կիանքն ու առաքինութիւնը:

Գալով այն վարձատրութեան՝ զոր ծառայութեան մը փոխարէն կը պահանջեն մարդիկ՝ աւետարանական արգարութիւնը զայն չի զլանար երեկք: Եթէ գթութեան գաւաթ մը պազ ջուրն անզամ չի թողուր անլարձ, ո՞րչափ աւելի պիտի արժեցնէ ուրեմն արիւնի տաք տաք հեղումը՝ անձին և ուրիշներու փրկութեան համար: Բայց տառվ իսկ երկինքի արքայութեան մէջ առաջին տեղը չի տրուիր մարդուն:

Արդ՝ երբ երկու եղբայրները հարցուց ցին, Պիտի նստեցնէ՞ս զմեկ քովիկդ, աշխին ու ծախէն, երբ թագաւորութիւնդ գայ: Յիսուս պատասխաննց իրենց՝ թէ սակարկութիւն չէք վերցներ աստուածային հատուցումը: Ու փառքի մը տիրանալու որոշ ակնկալութեամբը իրեն մօտեցողներուն պիտի ըսէ ինքը. Մէկդի՛, դուք Աւետարանին անպայման ծառայելու կամքը չունիք, վարձատրուելու յոյսով միայն կ'ուզէք յանձնառու ըլլալ մնձ զոհողութիւններու: Սակայն Աստուծոյ կամքին կախում ունի ամէն տնօրինութիւն՝ հանգերձեալին մէջ... .

Ճիզն ունենանք ուրիմ, եղբայրներ և քոյլեր, կարող ըլլալու կատարել այն ամէն սուրբ ու նուրբական բաները որ կը պահանջուին մէզմէ. աւետարանական պատգամները հոգեկան ճշմարտութիւններ են մեզի համար: Պիտանա՞նք թէ՝ երբ շատ անդամներ կը թուլնայ մարդկային կամքը, Աստուծածայինը փեր կը բանէ զայն:

Երբ կը ծառայենք բարիին՝ իշխած կ'ըւլւանք չարին Տէրն ալ ըստ իրեններուն. «Զէ՞ք զիսեր թէ ևս ալ մարդու որդին եմ, բայց եկած եմ ոչ թէ ուրիշները ծառայեցնելու ինձի, այլ ուրիշներու ծառայելու: Եթէ կարող ըլլանք զործելու և նըւիրուելու, Աւետարանին կը բղիմ մեր վարձքը: Այս համոզումով կընանք ճշգել մեր կիանքին գերը, ըլլայ եկեղեցին, ըլլայ ընտանիքին և ընկերութեան մէջ, այն ստեն միայն այսօրուան սուրբերն ալ պիտի ժամուն մեր երեսին, որպէս թէ ըսել ուզեկին մեզի. Մենք ալ միամիտ շահախնդիւններ էինք երբեմն, մենք ալ մեր սխալ ըմբռնումներուն հետեանքով ցուցուցինք մեր Տէրը, բայց երբ հրամայեց մեզի որ ծառայենք մարդկութեան, ա՛լ ձայն չհանեցինք, մեր բոլոր էութեամբը հպատակելով իրեն:

Ահա՝ իր մարմէն անջատուած այն գլուխը՝ որ մեզի կը խօսի թէ ի՞նչ կ'արժէ նուրիրուած կիանք մը, ու իր եղբայրն ալ, որ թաղուեցաւ կամ ի՞նքինքը թաղել տուաւ գերեզմանական լուսթեան մէջ, նոյնը կը կրկնէ մեր ականջին... Այսպէս բոլոր առաքելական խումբը ձայնակցելով անոնց՝ իրենց պատգամաւորութիւնը կը բերեն մեզի սա բառերով. Տկարներ էինք ու զօրացանք, ախմաբներ էինք ու իմաստացանք. Աւետարանին լոյսովը միայն լուս ու մունջ ծառայեցինք Անո՞ր՝ որ աղքատ մըն էր և աշխարհն հարստացուց, զերի մըն էր ու մարդկեն արձակեց իրենց կապանքներէն, ստրուկ մըն էր ու զմեզ աղջուականներ ըլլա, որպէսզի ապակունութեան ծառայութենէն աղատուած՝ ծառայենք Աստուծոյ: Այս հաւատաքը որ մերն ալ է՝ կը գնէ զմեկ այն միճակին մէջ՝ ուր կարող պիտի ըլլանք սպասաւորելու Աւետարանին ճշմարտութեանը, ի փառս Աստուծոյ Որդւոյն, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:



## ԿՐՈՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ֆուանական Figaro թերթին վարիչը, Robert de Flers, Գիտուրիանց Սկավեճայի հարիւր աւելի անդամական դիմու երկու տարի առաջ հարցվուր մը (ըպատե) կատարելու համար՝ րի Գիտուրիանց համար է էր իշխանութեան գործունեան: Աննեցին շատերուն տուած պատասխանը համարավուեցան վերոյիշեալ թերթին մից (1926, Մայիս 2-25), բայց ակադեմիան գրագիտին մանեն յետոյ (Փ 1927) իր բարեկամները յուրենեցան առանձին զրեցոյի մը մեց ամփոփել այդ գրուածները, որոնցին միկ հանդիները կուտանք մեր ընթեցողներուն, բարգմանուրիամբ Վանուց Բնածայանին Կիւլպիմիկան Պասարամի Սարկանական կազմերուն:

Խմբգր. Միթնի

Ինձի կը հարցնէք՝ թէ արգեօք գիտութիւնը հակառակ է կրօնական զգացումին:

Այս պարզ հարցումը կը բաւէ խնդիրը լուծերու: Գիտական միտք եւ կրօնական զգացումը երկու տարրեր բառեր են, սակայն ո՛չ հակառակ իրարու: անոնք մեր անձին երկու տարրեր հանդամանքներուն հետ կապ ունին, որով իրարու ներհակ չեն կրնար ըլլաւ, թէ կը կրնան անտարբեր ըլլաւ իրարու հանդէպ:

Ես լսած եմ նշանաւոր մարդու մը ըստը՝ թէ «ո՛քքան աւելի յառաջդիմէ զիտութիւնը»՝ նոյնքան աւելի կատարելուութեամբ կը հասկնանք տիեզերքը եւ մասնաւորապէս մարդու ու անոր յօրինուածքին սքանչելիքները, եւ աւելի կը փորձուինք ճանչնալ ատոնց մէջ ձեռք մը ամենազօր եւ անհունապէս իմացական, որ է Աստուած՝ կրօնքին զերազոյն առարկան: Եւ ես կը հաւանիմ այդ տեսութեան:

Ահա՛, սիրելի եղբայրակից, իմ կարծքու զոր կը յայտնեմ ձեզի ամենայն համաստութեամբ:

PIERRE BAZY

Մարդկային զիտութիւնը անկարող է լուծերու լսու ինքիան էւութեան խնդիրը, եւ մասնաւորապէս ինդիրը մեր ճակատագրին: Գիտութիւնը ընդունակ ըլլաւով բարեկամները մեր զոյութեան նիւթական պայմանները և նուազեցներու այն ֆիզի-

քական չարիքները, որոնցմով կը տառապինաք, չի կրնար թափանցել մեր զիտակացութեան զազանիքներուն, ո՛չ աւ ամոքել մեր բարոյական թշուառութիւնները, որոնք կամում ունին իրե՛ն անմատչելի կալուածէ մը:

Յաճախ կը յեղյեզուի սա զազափառը թէ Գիտուրիան և Կրօնի անհաշտելի են, վասն զի կրօնքը մեզի կը պարտազը հրամանակարդ հաւատալիք մը՝ զոր կը հերք պարզ բանականութիւնը: Բայց կարելի է հաստատել՝ թէ մարդկային զիտութիւնը այն աստիճանն ստուգութեան հասած է որ կը ներուի իրեն զատումներով վեհուարդիս այն իսկ այնի մեզի չի պարտազեր հրամանակարգեր՝ որոնք ամէն ապացուցումներէ կը խուսափին, և զորս պէտք է ընդունիլ՝ թէ իսկ չունենան որ ևէ հակակչիու, և անկարելի ըլլայ ստուգութիւններ:

Սակայն և այնպէս, կրկնենք թէ Գիտութիւնը կը կերպափոխուի շարունակաբար. այնպիսի ճշմարտութիւններ, որոնք այսօր մեզի անժխտելի կ'երեկին, թիկոս վաղը տարակուական նկատուին փորձաւութիւններու կամ նոր տեսութիւններու հետեւանքով. պէտք է զգուշանալ անոր ընծայելէ իր չունեցած արժեքը:

Անոնք որ յաճախ կը զատապարտեն կրօնքը, հզարս ոգիով է որ կ'ընեն զայն, որպէս թէ մարդկային զիտութիւնը կարող ըլլար լուծում մը տալու կեանքի բոլոր հանելուկներուն: Որպէս թէ զոյութիւն չունեար իրերու կարգ մը, որմէ չենք կրընար բան մը փոխել. մենք կ'զգանք թէ զերազոյն կամք մը կ'իշխէ մեր կամքին. իմը ու ին յաւիտենական խնդիրը կը ակէ զմել ու կը հաւածէ, խնդիր մը՝ որուն միայն մեր բանականութեամբը չենք կրնար պատասխան մը տալ. խոստովանինք մեր անկարողութիւնը:

Տառապողներու անհուն բազմութեան թողովնք այն յոյսի նշոյլը, որ լաւագոյն աշխարհի մը համար կը միսիթարէ զանոնք եւ կը կազզուի: Ազա թէ ո՛չ կ'իյնանք նիւթագաշտութեան մը մէջ, որ զործն է տղիտութեան և յանձնապաստանութեան:

G. ANDRÉ

Գիտութեան և կրօնական գաղտփառքին միջեւ հակամարտութիւն կայլ: Ես, իմ մասիս, այդ կէտը բնաւ չեմ նկատած, և փորձառութիւնը կ'ապացուցանէ որ ամէն դարերու մէջ եղած են ամուր հաւատացողներ, նշանաւոր զիտուններ ըլլալով: Ասոր պատճառը պարզ է. երկու կալուածները տարրեր են իրարմէ: առաջինը իրեն սահման ունի մեր զգացարանքներուն մատչելի ցուցակութիւնները, իսկ երկրորդը նշութէն վեր կը բարձրանայ զգացումի անսահման ոլորտին մէջ:

Հարկ չկայ ըսկելու որ կ'ակնակրէմ ֆիզիքական և բնական զիտութիւններուն, որոնք ինձի համար շատ ընտանի զիտութիւններ են, և որոնց մէջ տիրապէս իրենց փաստերը կը փնտուն կրօնական գաղափարին հակառակորդները: Դիտական միւս ուղղաւթիւններուն մէջ երկու կալուածներուն տարրերութիւնը նաւազ խորունկ է՝ իրենի, բայց ատիկա աչքի պատրանք մըն է. վասն զի զիտական ամէն ուղղութիւն իրեն մեկնակէտ ունի, նիւթական կարգի զնոնութիւն մը կամ զնոնութիւններու շարք մը:

Երկու կալուածները տարրեր են, սակայն անհազորդ չեն իրարու, զէթ մարդուն մտքին մէջ, ուր անոնք կրնան հակադգել ու բռնի կը հակադգեն մէկը միւսին վրայ: Այս հակազգումը կը փոխուի իւրաքանչիւր անհատին վրայ իր ի զործ դրած կարուկապով (emprise)- ումանք կ'ուրանան զգացումի կարողութեան բովանդակ արժէքը տրամախոհութեան մէջ. ուրիշներ նոյն կարողութիւնը կը նկատին իրեք մըտքին ամէնէն աղնիւ ուժերէն մէկը: Առաջինները չեն ուղեր նիւթական կալուածէն զուրս ելեւ, ուր զիրենք կ'առաջնորդէ զնոնութիւնն ու զիտական փորձառութիւնը. երկրորդները՝ նոյն իրազութեամբ՝ ամենաբարձր գաղափարներու կը վերանան, բոլոր իրերու ծազումին, մարդուն բնութեան և Աստուածութեան վերաբերմամբ: Այս երկու հակառակ ծայրերուն միշեւ միշանցքներ շատ կան, բայց ասիկա զգացումի հարց մըն է, ուրիէ չի կրնար հակամարտութիւն մը ծազիլ զիտական յառաջիմութեան և կրօնական գաղափարին միշն:

Ես կը կարծեմ որ կրօնական գաղա-

փարը աւելի ատակ է նպաստելու զիտական յառաջիմութեան. վասն զի անփկա կը ձկափ զէպի ակը, զէպի ծազումը իրերուն, ու զէպի այդ նպատակն է որ կը նկրաի Գիտութիւնը անդոււ անգագար: Յունուական Ակադեմիայի անդամակցիկուն առթիւ Henri Poincaré կ'ըսէր Pascalի համ: «Աստուած վինակել, զայն արգէն զտած ըլլալ է»: Ճշմարիտ վինակել՝ միթէ Աստուած վինակել չէ, այսինքն զերազայն ճշմարտութիւնը, և ասով չի՞նչ կրնար կրօնական գաղափարը նկատել իրը զօրուոր ազդակ զիտական յառաջիմութեան: Մինչեւ հոս զանց ըրի միշել որ ևս է եկեղեցի: Գիտութիւնը կրօնք չունի, բայց զիտունը կրնայ ունենալ զայն և այդ կրօնքը չի կրընար հակառակորդ ըլլալ անոր աշխատանքներուն, վասն զի կրօնական սկզբունքները՝ ինչպէս փիլիսոփայուկան գաղափարները՝ միշտ զիրենք ընդունող միտքերու բարձրութեան կը համապատասխաննեն:

E. L. BOUVIER

Մարդկային իմացականութեան մէջ, կրօնքը և զիտութիւնը բացարձակապէս երկու որոշ յարկարածիններ կը գրաւեն: Ոչ մէկ զիտութիւն ունէ կրօնքի դէմ թշշնամութիւն չունի, անշուշա այն պայմանով՝ որ այդ կրօնքը չյարձակի զիտութեան դէմ: Մարդկի կրնան կրօնական ողի և զիտական ողի ունենալ միանգամայն, կամ միայն կրօնական ողի և կամ միայն զիտական ողի ունենալ: Ոչ մին և ոչ միւսը պատճառ չունին զիրար բացարձակապէս տարամերծելու:

PAUL APPELL

Գիտութեան նպատակն է ճշմարտութիւնը վինակելի իրազութիւններու այն կալուածին մէջ, զոր մենք կրնանք զննել, բայց ո՛չ երեքք զգացումի կալուածին մէջ, ուր բոլոր զիտական օրէնքները ո՛չ մէկ զեր և ոչ ունէ զործ ունին: Ուրեմն, զիտութիւնը չի կրնար հակառակ ըլլալ կրօնական զգացումի:

FERRIÉ

Այսօր հարց չի կրնար զրուիլ զիտական թէ զիտութիւնը հակառակ է կրօնական զգացումի: Կրօնքը, իր ևս աւելի

դիտական ուսումնասիրութիւններով է որ կը պարուրուի: Եւ զիտութիւնը, իր յաջորդական գիտական գիտական գաղափարը, չի հաստատեր բան մը որ կրօնական վարդապետութեան հակասէ: Առո՞ք երկու գործունէութիւններ են, որո՞ք կը բարգաւաճին առանց ընդհարումի: Նախապաշարումէ աղաս ամէն միտքի համար՝ անո՞ք պարախն նոյն իսկ մերձեցումի կէտեր գտնել իրենց հասագութիւններու անկեղծութեանը մէջ:

F. FOCH

Դիտութիւնը՝ ճիզ մըն է գէպի արարչագործութիւն, կրօնքը՝ ճիզ մըն է գէպի Արարիչը:

EDOUARD BRANLY

Հարցը՝ զոր ինձ կ'ուզզէք՝ կը թուրթէ ընդունակ է երկու տարրեր պատասխաններու, հոգեբանական կամ ընկերական ահսակէտներէ զիտուելով:

1. Փորձառական իրողութիւն մըն է թէ հոգեբանական ոչ մէկ անյարմարութիւն կայ կրօնական զազցումի և զիտական այն զգացումին միջև՝ զոր կրօնանք զիտութեան ճաշակն ու ոէրը անուանել: Երկու զգացումներն ալ միենոյն մտքին մէջ կրօնան համագոյակցիլ կատարելապէս:

2. Հակառակէն՝ մարգիկ կրնան երրեմն զործնական ընդդիմադրութիւն մը տեսնել կրօնական զգացումի ընկերային ինչ ինչ ցուցակութիւններու եւ խորհելու աղատութեան եւ զիտութեան անհրաժեշտ վիճումներուն միջև: Գալիլիոսի տիեզերանութեան եւ կամ Տարվինի կենսաբանական տեսութիւններու մասին ինչ որ ալ ըլլայ զիտունի մը կարծիքը, իրեն իրաւունք կը համարի խորհի՛թէ այդ տեսութիւնները կրնան աղատօրէն բանաձեւութիւնի և վիճաբանութեան առարկաց ըլլալ, առանց որ Հաւատաքննական ատեանը կամ Գայտոնի զատաւորները իրաւունք ունենան անոր հակառակելու: Այսուամենայիւ, կը թուի թէ այսօրինակ ընդդիմադրութիւններ երթալով կը պակօին եւ հաւատութիւն չեն գտներ հասարակաց կարձիքն:

EMILE BOREL

Կրօնական զազափարը, ի՞նչ որ ալ ըլլայ իր ձեւը, բնական է մարդուն. իր ձեւը միջավայրի ազգեցութիւնը կրելով հանգերձ՝ կախումը ունի նաև միտքէ, զգայնութենէ, կեանքի փորձառութիւններով ընդունուած անձնական հակագդեցումէ, ուրիշներու կեանքի տրուած օրինակներէ, համոյնքներու և անհատներու կողմէ զըննուած բարոյական կատարելութեան մակարդակներու բազգատութենէ:

Կրօնական զազափարին ազգեցութիւնը բարոյականին վրայ անվիճելի է:

«Առանց պարապրութեան և առանց հապուցումի (sanction) բարոյականը, ինչպէս նաև անգլիական եղափոխականներու օգտախնդիր բարոյականը, մտաւորականներէն և իպէտու իրենց՝ չինուած գըրութիւններ են ամէն մասերով»: Մենք կ'ընդունինք այս կարծիքը զոր վերջերս արտայայտեց Դամոն Wildon(\*):

Մաքուր բարոյականի սնանկութեան այս լուրջ հարցը սկսած է զբագեցնել այն մեծ միտքերը՝ որո՞ք զիրծ են ամէն նույազաշարումէ եւ նոյն իսկ, ինչպէս կ'ըսնէն, կրօնական ամէն ստրկութենէ:

Գալով ինծի, չևմ կարծեր՝ թէ բարոյականին վերականգնումը կարելի ըլլայ ձեւոք բերել առանց օժանդակութեան կրօնական զազափարի:

E. QUÉNU

Դրուած հարցին պատասխաննել՝ քանի մը տողերով՝ զրիթէ անկեղծ է: Պիտի փորձեմ սակայն, թէկ շատ թերի պիտի ըլլայ ան:

Բազմաթիւ են օրինակները մեծ գիտուններու որո՞ք անկեղծ եւ եռանգուն հաւատք մը ունէին, այսինքն կրօնական զգացումէ շատ աւելի բան մը:

Եւ իրօք, գժուար չէ հասկնալ ասիկա: Երբ քիմիաբան մը ուսումնասիրէ գայլախափական իթերները, շատ գեղեցիկ զիւտեր կրնայ ընել սիլիկունի բազազլութիւններուն վրայ, առանց ատոնցմով ասրաւելու եղափակցութեան մը յանգիլ սկզբնական մեղքի վերաբերմանը: Առո՞ք երկու անջատ կալուածներ են, և ինք կը բաժնէ զանոնք: Իրաղութիւններն ալ կը հաստա-

(\*) Mercure de France, 1925:

տեն՝ թէ այս բաժանումը կարելի է կարգ մը միտքերու համար:

Գալով կրօնական զգացումին, ոչ մէկ աշղիս չունի ան՝ ո՛չ այս կամ այն ձզրիտ յայտնութեան և ո՛չ ալ որեւէ մեթուաւոր հրամանակարդի հետ։ Արդ, հնա՞ր է ուսումնասիրել գիտութիւնները, առանց ըլունուելու տեսակ մը կրօնական սարսափէ սահզօր բնութեան հանգէպ, որ կը վարէ ամէն ինչ անողոք օրէնքներով, և որուն բոլոր մանրամասնութիւնները, որչափ զրծուարաւ խելամուտ ըլլանք անոնց, նոյնափ կը հարկադրեն մեզի անսահման ոքանչացում մը։

Որքան խորը թափանցինք, այնքան աւելի պիտի տեսնենք՝ թէ ոչինչ զիտենք անհանդ տիկիրէն (cosmos)։ Սակայն, մեր տպիտութեան տարածութիւնը արգելք մը չէ մեր հիացումին խորութեան։

Charles RICHET

Ահբանաւոր կը նկատեմ ես ընդդիմադրել կրօնքն ու զիտութիւնը, որոնք, ինչպէս ինձի կը թուի, պէտք է մասն իրենց որիշ կարւածներուն մէջ։ Անոնցմէ մէկը միւսին գէմ լարել ո՛չ մէկ օգուտ կընայ ունինալ, եւ ասիկա, մանաւանդ զործն է անոնց՝ որոնք լաւ չեն սորված ո՛չ մին և ոչ միւսը։

Paul SABATIER

Անկարելի կ'երելի ինձ՝ քանի մը տողերու մէջ՝ իր ներկայացուցած տարրեր կողմերովը քննել այն հարցը, զոր ինձ ուղելու պատիւը կ'ընէք։ Հարկ էր արդարեւ սահմանել թէ ինչ պէտք էր հասկընալ զիտութիւն կամ կրօնական զգացում ըսելով։ յետոյ հետազոտել թէ ինչո՞վ կը զանազանին զիտութիւնն ու կրօնական զգացումը ա'յս կամ այն ժամանակներու եւ միեւնոյն թուականի մարդոց, եւ նոյն իսկ մէկ մարզու մէջ՝ իր տարիքին համաձայն։ ապա նկատի առնելու իրավագութանական աստիճաններուն մէջ։

Կը խորհիմ թէ այդպիսի ուսումնասիրութիւն մը չէք սպասեր ինձմէ, այլ պարզապէս կը հարցնէք՝ թէ ումանց հաստատած եւ ուրիշներու ժխտած զիտու-

թեան եւ կրօնական զգացումի ներհակութիւնը՝ համաձանցին է տափակ իրականութեան թէ ո՛չ։

Այդ հորիզոնը միայն աչքի առջև ունենալով կը կարծիմ թէ սապէս կարելի է պատասխանել, զիտութեան և կրօնական զգացումի միջն խմատ կախումը մը չի կրոնար ընդունուիլ գծուակականապէս, և հարկ է խոստվանիլ, տեղեկանալով այլեւայլ երկրներու մէջ համբաւուած զիտուններու կենսազրութեան՝ թէ նոյն իսկ հակակրօն զազափարներ ունեցողները կրցա՞ծ են մեծաքայլ յառաջանալ զիտութեան գեանին վրայ, եղած են նախ ուրիշներ՝ ոչ անընդանեալ ինչպէս՝ Newton, Cassini, Herschell, Faraday, Biot, եւալին, որոնց զիտութիւնը իրենց բան զրուածներուն կամ իրենց ժամանակակիցներուն վկայութեան համաձայն՝ լծորդուած է կրօնական անժիստելի զգացումներուն հետ։

G. BERTRAND

## Ա Ս Տ Ո Ւ Ս Մ Է

Տեսողութեան ծիրեն մէջ բայ առանձին է բայ կանքելի մը խօսանին մոք մասնաւեն, մուշ կը մասին բիւր եւեօսակի մուխ թեւելն Լոյսին եւամ ու ձայներուն բիւրեղը որ։

Այ վիրաւոր լրութիւնն է գումանանա Ազօրին պէս ու կինց ա'լ օրուններուն Թափանձաւէս անոնց զայտնիքը պինդուն Վրայ կ'իցն բախեներուն բայ խօսա։

Մէկը միւսին ձեռք քրոյ կրյա մ'է նորանի Փոզես ամէն պին ինք պարի մէջ եւական։ Չի ձալիկեցաց յե նունումնար լուսնինան։

Բազկառած եր յայ խաչին վայ կ'արինի Ասուածին՝ ամէն եւայի համար առասի մը բար, Լոյսին արեւն ու ձայներուն բիւրեղը որ . . .

Գանիրէ

ԱՐՈՒՆ ԵՐԿԱՐ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՔԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱՆ ԽՆՋԻՔՆԵՐ

Զ.

3. — ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԱՄԱԱՆԻՐՆ ՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Բարեկարգութեան ամէնէն փափուկ կէտան է Դաւանանիը, որուն հետ սերտ կապ ունի նաև Պատամունիը։ Թէհ մեր մէջ Բարեկարգութեան վրայ խօստած ատեն դաւանանին չեն մօտենար, ոչ անոր համար որ այդ մասին ըսելիք կամ ըսելիք չկայ, այլ անոր համար որ դաւանանքի խնդիրը կարծես թէ միաբերու մէջ լուծուած խնդիր մը կը նկատուի արդէն։ այսինքն՝ ոմանց համար աստուածաբաններու և եկեղեցականներու վերաբերեալ գործ մըն է դաւանանքը, որմէ բան չի համենար ժողովուրդը։ ասկէ զատ ժողովուրդին կրօնականացումի կողմէն էական չէ դաւանաբանական զիտութիւնը։ ոմանց համար դաւանանքի վերաբերեալ խնդիրներ այժմէութիւն մը չեն ներկայացներ զործնական կրօնքի մէջ և հետեւաբար ատոնք կրնան պահուիլ եկեղեցւոյ մէջ այնպէս ինչպէս որ ընդունուած են։ ոմանց համար ալ կարեւորութիւն չունին ատոնք, որովհետեւ ժամանակիս զիտական և քննադատական ոգիին հետ չեն հաշտուիր։ Եւ, մեր կարծիքով, այս է պատճառը որ Հայոց եկեղեցւոյ Բարեկարգութեան վերաբերեալ գրուածներու և եղած թելադրութիւններու մէջ ոչ մօտեցաւ դաւանանքին։ Տարակոյս չկայ որ, ինչպէս ըսինք, խնդիրը շատ փափուկ է ըստ ինքեան, ասոր համար ոմանք երկիւղածօրէն, ոմանք գաղտնամտօրէն, խորհրդաւոր լուսութեան մը կը մատնեն զայն։

Բայց պէտք է մեկդի նետել գաղտնամտութիւնը, և երկիւղածութեամբ օծուն համարձակութեամբ մօտենալ խնդրին, և քննել թէ երօք մեր այս օրուան Հայոց։ Եկեղեցւոյ հոդեւորականութիւնն ու ժողովուրդը հաւատարիմ մնացած են քրիստոնէական մի և ընդհանուր եկեղեցւոյ դաւանանքին, կամ Առաքելական բացատրութեամբ, արդեօք նոյն հաւատքի մէջ կեցե՞ց ենք (Բ. Աբք. Ժ. 5)։

Եկեղեցին հաւատքի դպրոց մըն է. կեզծիքը և երկմատութիւնը գործ չունին հան։

Լուտեր և իր նախորդները երբ սկսան քննադատել իրենց (հռոմէական) եկեղեցւոյն կարգնուասարքը, որուն մէջ կեզրոնական տեղը կը բռնէր պապին վերաբռուած անսահման հեղինակութիւնը, չկրցան խուսափիլ դաւանաբանական շատ մը խնդիրներու մէջ միրճուելու հարկէն և ասոր հետեւանքներէն, այնպէս որ աստուածաբանական վէճերը իրենց բնական ընթացքով յանդեցան դաւանաբանական նորութիւններու, և սակայն հռոմէ եկեղեցին չբարեկար-

գուեցաւ այնպէս ինչպէս կ'ուզէր Լուտեր, այլ բացուեցաւ անկարկառելի ճեղքուած մը բարեկարգիչներուն և Հոռոմի եկեղեցւոյն միջնէ ։ Մայրայեզութիւնը իր գագաթնակէտին հասաւ, Հոռոմ ամուր մնաց իր աւանդական գիրքին մէջ և գա անաբանական խնդիրներու վրայ անդրագոյն յաւելումներ ըրաւ. իսկ Լուտերական շարժումը անկուպար ասպարէդ մը զտաւ իր առջեւ անդրադրյն ազատութիւններու, իսպառ թօֆափելով եկեղեցւոյ վարդապետական հեղինակութեան լուծը և ծնունդ տալով բազմաթիւ յարանուանութիւններու ։ Մեր ուսումնասիրութեան սկիզբը շատ լաւ պարզեցինք Բողոքականութեան ծագումը և նկարագիրը, իրքեւ հետեւանք անհայիւ բարեկարգութեան ։ Բայց կ'արծէ անդրագաւնալ սա կէտին վրայ թէ Լուտեր երբ ճամբայ ելաւ Բարեկարգութեան սկզբունքավ, յանդեցաւ այնպիսի եղբակացութեան մը որ իր մարէն անդամ չէր անցած. և եթէ կարող ըլլար նախատեսել թէ ուր պիտի յանդէր իր ձեռնարկը, թերեւս պիտի սոսկար՝ իրքեւ հաւատարիմ պաշտօնեայ իր մայրենի եկեղեցւոյն՝ և ճամբայ պիտի չելլէր . . . Սակայն անդամ մը ելած էր ճամբայ և նախատեսուած ու չնախատեսուած իրոզութեանց հոսանքը այնքան բուռն եղաւ որ այլեւս անօդուտ վասառակ մը պիտի ըլլար իրեն համար հոսանքն ի վեր թիւալարիլ. ինքն պիտի քշուեր հոսանքէն, զգոյշ ըլլալով միայն որ չընկղմէր և այսպէս ալ ըրաւ նշանաւոր Բարեկարգիշը. մերթ ինքն էր որ կըրցաւ ուղղութիւն տալ գէպքերուն, բայց յաճախ գէպքերն են որ ուղղութիւն տուին իրեն, և ինքն հպատակեցաւ գէպքերուն առած ուղղութեան, և վերջապէս ան փակեց իր աշքերը՝ տեսնելով իր մայրենի եկեղեցւոյն կողքին վըրայ բացուած խոշոր և խորունկ վէրքը, որուն ցաւը գեռ մինչև հիմայ կ'զգոյ Հոռոմ։

Եթէ պատմութեան փորձերը դաս մը ունին աղագայ սերունդներու համար, Հայց, եկեղեցին պէտք է որ օգտուի այդ դասէն։ Ամէնքս ալ կը փափաքինք որ բարեկարգութիւն Հայց, եկեղեցին, ոչ ոք կ'ուզէ վէրքեր բանալ անոր զգայուն կողերուն վրայ, բարեկարգութեան սիրուն։ Եւ շատ ուրախալի պարագայ մըն է որ Լուտեր մը չտնինք մեր մէջ, ոչ ալ անոր շարժառիթները կան փափաքելի բարեկարգութիւնը իրաղործելու համար։

Ուրեմն ինչ պիտի ըլլայ դաւ անանքի խնդիրը բարեկարգութեան մէջ. վասն զի կենսական խնդիր մըն է ան։ Այսօր հայ մտաւորականութեան և երիտասարդութեան մեծագոյն մասը, քսաներորդ գարու կրթութեան և գաստիարակութեան աղդեցութեան տակ, բոլորամին տարրեր «աշխարհահայացք» մը ունի։ Թո՞ղ քրիստոնէական դաւանանքը, մարդիկ քրիստոնէական կրօնքով իսկ չեն զբաղիր, և ինչպէս կ'ըսուի ուամկօրէն – «ըսան մըն է կ'երթայ»։ Միւս կողմէն ժողովրդային զանդուածը, որ պահապանն է իր պապենական բարի հաւատքին, իր մտայնութեան հարկովն իսկ չի կրնար հետաքրքրութիւ գտանանքի և համարքի վերաբերեալ խնդիրներով, իր հոգեկան շինութեան համար բաւական համարելով ժամն ու պատարազը, բարեգործութիւնը, և այլն։ Գալով՝ եկեղեցականութեան, յարդելով թանկագին բացառութիւնները, մեր եկեղեցականներն ալ ընդհանրապէս չեն պատրաստուած դաւանաբանական խնդիրներու ուսումնասիրութեան։

Այս է պատկերը իրականութեան և կարծենք թէ սխալ կամ չափազանց

դիմեր չկան տառը մէջ։ Եւ սակայն Բարեկարգութեան տեսակէտէն կարելի չէ լուսութեան տալ դաւանանքի խնդիրը։

Բայց ի՞նչ է դաւանանքը, և ի՞նչ է անոր կարեւորութիւնը եկեղեցիի մը համար, — նախ և առաջ ասիկա դիտնանք պիտի ըսեն հետաքրքիրներ։ Գուշացում տանք այս հետաքրքութեան։

Դաւանանքը, աւելի ծանօթ բառով Հաւատամբները, եկեղեցւոյ կողմէն պաշտօնապէս բանաձեւուած վարդապետական (doctrinal) խնդիրներ են, որոնք պիտի ընդունուին առանց քննութեան և առանց բանապէճի, կամ կ'ընդունիս կը հաւատաս և կը մնաս եկեղեցւոյ մէջ և կամ չես ընդունիր, չես հաւատար, դուրս կ'ելլես եկեղեցիէն։ Պատմական բացարարութեամբ դպրոցականութիւնն է ասիկա (Scholasticism), այսինքն դպրոցի մը վճիռը, որ վերաքննութիւն չունի, տարբեր բան՝ եթէ նոյն ինքն դպրոցը ինքն կը վերաբնէիր վճիռը և բարեփոխիչ զայն։ ուրիշ խօսքով՝ եկեղեցւոյ անդամները անձնական, աղատ կարծիք չունին Հաւատամբներու մէջ։ Լուտերեան Բարեկարգութեան վերջին և վճռական նկարագիրը այս եղաւ, այսինքն՝ քրիստոնեայ անհատ աղատ է իր կարծիքներուն մէջ, ան կը ժխտէ նոոմի եկեղեցւոյն պաշտօնական բանաձեւները։

Հայց. Եկեղեցին իր դաւանանքին մէջ թէկ դպրոցական (scholastic) է, բայց աղատամիտ է ուրիշ եկեղեցիներու հանդէպ, և մեր պատմութեան պահպանուցական աղատամութեան փայլուն և հեղինակաւոր ներկայացուցիչն է ներսէա Շնորհալի։

Բայց նոյն ինքն Շնորհալի խիստ է իր եկեղեցւոյ անդամներուն հանդէպ, և կը պահանջէ որ Հայաստանեայց Եկեղեցւոյ անդամներ լաւ գիտնան իրենց Եկեղեցւոյն Հաւատամբը, և այս է պատճառը որ ան իր կաթողիկոսական առաջին կոնդակին (Ճանօթ Քեզինանցականին) սկիզբը դրած է Հայց. Եկեղեցւոյ դաւանանքը, իր պատուէրները և հրահանգները տալէ յառաջ։

Այսօրուան միաքերու հետ կը հաշտուի<sup>3</sup> այդպիսի պահանջ մը, կարելի<sup>4</sup> է հաւատաւ Յիսուս-Քրիստոսի մարդեղութեան աւետարանական պարզուկ պատմութեան, ինչպէս նաև այդ մասին խմբագրուած պաշտօնական բանաձեւներուն, այսինքն Հաւատամբներուն։ Զէ<sup>5</sup> որ Հայն ալ իր զաւակները կրթած ու դաստիարակած է զարու լուսամիտ դպրոցներուն ողջութեամբ, չէ<sup>6</sup> որ անոնք ալ սորված են ոնէ խնդրին մէջ ինչո՞ւն և ի՞նչպէս փնտռել, չեն կլեր վարդապետն ասացը, այլ կը վիճին, կ'ուզեն լուսարանուիլ, և եթէ իրենց խելքին կը պատկի վէճի ենթարկուած խնդիրը, կ'ընդունին, իսկ հակառակ պարագային, կը մերժեն զայն։ Այս է իրողութիւնը պատմութեան մէջ, եւ այսօր ալ միեւնոյն է իրողութիւնը մարդկային ընկերութեան մէջ։

Բայնք քիչ մը յառաջ թէ Եկեղեցին հաւատագի դպրոց մըն է, կեզծիքը և երկանութիւնը գործ չունին հոն։ Եւ այսօր, լուսամիտ կոչուած այս դարուն մէջ ալ, Յիսուս-Քրիստոսի Եկեղեցին մեզի կը ներկայանայ իր առաքելական դարու անվիճելի տուիլիներով, իր զօրաւոր տրամարանութիւններով, ինչպէս նաև իր միամտութիւններով, և իր աւանդութիւններով, եթէ բանաձեւուած

դաւանանքը մէկգի նետես յանուն անհատական մաքի աղատութեան, չես կըրնար նոյն կերպով վարուիլ Աւետարաններու և առաքելական գրուածներու հետ. չես կընար ոչնչութիւն հռչակել եկեղեցւոյ նախկին գարերու սքանչելի նահատակութիւնները, մոքի և գրչի նահատակութիւնները, նուիրումի և արինի նահատակութիւնները. չես կընար արհամարհել քսան գարերու կեանք ունեցող եկեղեցւոյ մը պատմութիւնը և անոր աւանդութիւններն ու գասերը, այլ պարաւաւոր ես խոնարհիլ, վար իշնել յաւակնութիւններուդ բարձունքն, ձեռք կապել, յարգանքով և պատկառանքով կենալ Հաւատքի խորհուրդներուն առջեւ և գառնուկի պէս հետեւիլ անսնց և նիւթական տիեզերքն իսկ լի՛ է խորհուրդներով և խորհրդաւորութիւններով: Սայդ է որ մարդկային ուզեղը կարող եղաւ թափանցել բնութեան այնպիսի գաղանիքներուն, որոնք մտք իսկ չէին անցած, կամ հրաշքներու կարզը դրուած էին. բայց զիտութեան ձեռքով եղած յայտնութիւնները շատ փոքրիկ բաներ են չյայտնուածներուն նայելով, բնութիւնը հրաշալի յայտնութիւնն է անապացուցանելի ճշմարտութիւններու: Եւ կրօնքի կալուածին մէջ աւելի խորհրդաւոր են այսպիսի ճշմարտութիւններ, որոնց գլխաւորներն են, քրիստոնէական աստուածաբանութեան լեզուով, Աստվծոյ գոյութիւնը, Երրորդուրիւնը, Մարդկուրիւնը, Եւալին:

Արդ՝ ճշմարիտ զիտութեան և ճշմարիտ լուսամտութեան պարտքն է կենալ իր գեղեցիկ դիրքին մէջ և խոնարհիլ խորհուրդներու և անապացուցանելի ճշմարտութիւններու առջեւ, որոնցմով կերտուած է բովանդակ բնութիւնը, որոնցմով լի՛ է երկինքն ու երկիրը, և կրօնքը խորհրդաւոր մէկ յայտնութիւնն այդ ճշմարտութիւններուն իրեն յատուկ խորհուրդներով:

Անոնք որ կրօնքը կ'ուզեն պարզել իր խորհուրդներէն, ի հարկէ պիտի չյաշողին: Բանաւոր կրօնիի մը ջատագովները սկզբոնքով լաւ գործ մըն է որ կ'ընեն, բայց պիտի չյաշողին պարզել կրօնքին գաղանիքը: Վերցո՞ւր կրօնքի մէջն գաղանիքը, խորհուրդը, կը դադրի այլիս կրօնքը ըլլալէ: Վերածէ՛ կրօնքը անհատականութեան, կամ ինչպէս կ'ըսեն, ըրե՛ կրօնքը խղճի խնդիր մը անհատին համար, խէ՛րը տես այդ կրօնքին. որովհետեւ ասոնք պարզ ինքնախարութիւններ են: Մարդը իր սուեզումին պայմաններովն իսկ կրօնական է, կամ ինչպէս կ'ըսուի, անրուժելիորէն կրօնական արարած մըն է մարդը:

Դիտութիւնը, բառին այսօրուան առումով, հակառակ չէ մարդուր կրօնքին. որովհետեւ կ'ընդունինք թէ մաքսւր կրօնքին մէջ սպրդած են նախապաշարումներ, մարդկային տկարութիւններու արդիւնք եղով իրականութիւններ, և ասոնք չեն զիմանար զիտութեան լոյսին առջեւ. կը հալին, կը ցնդին ատոնք, բայց մաքսւր կրօնքը, որ Յիսուս-Քրիստոսով քարոզուեցաւ մարդկութեան, կայ ու կը մնայ անյեղի, նոյն ինքն Փրկչին պէս, որ Առաքեալին բացարութեամբ նոյն է երէկ և այսօր և յաւիտեան, և հետեաբար հարկ չկայ զիտութեան անունով դանդաշել օաւարածայն ուսումներով և կարծիքներով (Եթ. ԺԳ): Նպատակ չունէնք և չունինք ալ աստուածաբանական չտաշտովովութիւն մը գրել հոս. բայց եկեղեցւոյ բարեկարդութեան վերաբերումով կ'արժէր որ այս կողմէն ալ քիչ մը շօշափուէր խնդիրը. որովհետեւ, շեշտենք անգամ մըն ալ, դաւանանքը սերտ աղերս ունի պաշտամոնքի հետ, պաշտամոնք՝ որ բարեկարդելի կէտերուն ամէնէն կարևորներէն մէկը կը նկատուի:

Այս ուսումնասիրութեան սկիզբը խօսեցանք Պատկեր Հայաստանեաց Լուսառցական Սուրբ Եկեղեցւոյ անուն գիրքի մը վրայ։ Անդրադառնալով ատորպահ մը, դիմել տանք նորէն թէ ահա՝ զիրք մը, որ սրբագրուած է պաշտամունքի բարեկարգութեան տեսակէտէն։ այսինքն բարեկարգիչներ, զոր օրինակ, հարականներու մէջէն վերցուցած են Սրոց բարեխօսութեան վերաբերեալ համարներն ու կառները։ իսկ Աստուածածնի բոլոր շարականները հանած են, և ասիկա ըրած են, ինչպէս մատնանիշ ըրինք իր տեղը, բողոքականութիւնը հաճեցնելու դիտումով, և ասով աններելի հակասութիւն մը ըրած են, որովհետեւ սրբոց բարեխօսութիւնը հիմնուած է հոգւոյ անմահութեան վարդապետութեան վրայ։ այս է սկզբունքը սրբոց բարեխօսութեան։ իսկ միւս կողմէն՝ Պատկեր Կաղմողներ, իրենց գիրքին սկիզբը դրած են Հայաստամիը, որուն մէջ կը դաւանուի մեռելոց յարութիւնը, հոգւոյ և մարմնոյ յաւիտենական դատաստանը, և այլն, ասոր համար աններելի՛ է իրենց հակասութիւնը։

Ուրեմն ինդիրը սա՛ է իր պարզութեան մէջ, ըստ քրիստոնէական հաւատքի, հոգին անմա՞ն է թէ չէ։ Եկեղեցին կը հաւատայ թէ հոգին անմահ է։ Ուրեմն ի՞նչպէս կրնան մէկդի նետուիլ հոգւոյ անմահութեան հաւատքէն հառագայթող հոգեոր բանաստեղծութեան մը հաստուածները։ Կրնայ պատահիլ որ, այս, այս հաւատքին արտայայտութեան ձևերը շատ թանձր գոյներով պատկերացած ըլլան։ ընդունինք ասիկա։ բայց մենք ձեւի հետ զործ զունինք, ոգիին հետ է մեր գործը, խորհուրդին հետ։ Մարդկային կեանքին արտայայտութիւններուն մէջ չկա՞ն թերի կողմեր, թանձր գոյներ և նոյն իսկ տխո՞ւր գոյներ և իրականութիւններ։ Ինչո՞ւ այնքան բժամնդրութիւն երը կը մանենք Եկեղեցին ներս։ Փրկիչն ըստ Սամարցակի կոչ, թէ Աստուած հոգի է, եւ պէտք է հոգիով և ծշմարտութեամբ երկիրպատել անոր, ամէն տեղ և ամէն տանեն, և ո՛չ թէ միայն հո՛ս, այս Գարիգին լեռան վրայ կամ անդին, Երուսաղէմի Տաճարին մէջ։ Տառական առումովը այս վճռին, հարկ էր որ Եկեղեցւոյ շնորհը իսկ շինէին բարեկարգեաներ, սակայն Յիսուս-Քրիստոս ըլլաւ թէ Եկեղեցիի շէնք մի շինէք, բայց մաքրագործելով զայն, ըստ թէ Եկեղեցիները միայն եւ միայն աղօթքի համար շինուած են եւ ո՛չ թէ շահեր ապահովելու համար, վերածելով զանոնք շուկայի։

Ուրեմն մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան մէջ դաւանանքը կը մնայ անխախտ։ մեր բոլոր ազատամտութեամբ կ'ընդունինք զանոնք, որովհետեւ անոնք շինծու բաներ չեն, ո՛չ ալ տղէաներու կամ ցնորածիսներու յատուկ երազանք և գանդաշանք։ ձշմարիտ ազատամտութիւնը ալլամերժ չէ երբեք, այլամէր է, այսինքն զե՞րծ դիտութեան յատուկ նախալաշարումէ, այսպէս ըսենք՝ դիտական նեղմտութենէ, լայն լայն աեղեր ունի ան իր մէջ անիմանալիներու և խորհուրդներու համար։

Առանց ալլիս երկար յամելու այս բացատրութիւններու մէջ, ըսենք թէ Հայաստամիը և Գաւանանիմի Եկեղեցւոյ մէջ կը նմանին ընկերութիւններու կանոնագիրներուն։ ինչպէս որ առանց իրեն յատուկ կանոնագրի մը ուկէ ընկերութիւն չի կրնար զոյութիւն ունենալ, նոյնպէս առանց Հայաստամի եւ առանց Գաւանանիմի չի կրնար Եկեղեցի մը երեակայուիլ։ եւ ինչպէս որ ընկերութեան մը անդամներէն ամէն մէկը երբ ընկերութեան կանոնագրին իրեն

չհասկըցած կամ իրեն անհաճոյ կանոնները եթէ չյարգէ, կամ խանգալի, կամ շընդունի, կամ սրբագրէ իր ուզած կերպով և կամ բանէ մէկդի նետէ, կը կործանէ այդ ընկերութիւնը, այնպէս ալ եկեղեցին կը վաստոի երբ իր անդամները ընկերութեան մը անդամներուն պէս վարուին իրենց եկեղեցւոյն Հաւատամին և Կառանանին հետ :

Կրօնքը կրօնը է, գիտութիւնը՝ զիտութիւն . ամենեին վնաս չւնին իրաւու : Ընդհակառակը զիտուն մարդու գործն է գիտնալ յարգը կրօնքին, եւ շշփոթել անոր խորհուրդները իր գրական հաշիւներուն և տարադներուն հետ :

Հայց . Եկեղեցւոյ բարեկարգութեան մէջ, մեր համեստ կարծիքով, պէտք է գաստիարակել ժողովուրդը, ժողովուրդին բոլոր խաւերը, որպէսզի անոնք հասկընան, հնար եղած չափով անշուշտ, իրենց եկեղեցւոյն Հաւատամին ու Գաւանանիը և յարգեն զայն՝ եթէ չեն հասկընար, վերջ տալով մահահանգոյն անտարբերութեան մտաւ որականներուն և բանդէտներուն, տղիտութեան ժողովուրդի մեծ զանգուածին և անպատճառութեան եկեղեցականութեան : Եթէ ընդունած ենք Աւետարանը, պիտի ընդունինք նաև անոր հետեանքները : Ասոր դէմ ուեէ առարկութիւն՝ իմաստակութենէ աւելի արժէք մը շտնի :

Հիմայ խօսինք պաշտամունքի մասին և վերջացնենք մեր ուսումնասիրութեան այս հատուածն ալ :

Քօինք արդէն և շեշտեցինք թէ գաւանանքի և պաշտամունքի մէջ սերտ ազերս մը կայ : Բոլորովին պայծառ և հասկնալի ընելու համար ասիկա, ըսենք, եթէ, զոր օրինակ, Հաւատամին ամէն մէկ խօսքը երբ առնէք և բազդատէք պաշտամունքի մասերուն հետ, պիտի տեսնէք այդ ազերսը, այդ կապը . զոր օրինակ, առէք Նարականը, Յարութեան Կանոնին տակ դրուած բոլոր երգեր՝ տէրունական են, այսինքն Աստուածութեան և յարուցեալ Փրկչին շտրջ կը գառնան . Հանգստեան Կանոնին երգերը, փառարանութիւններն են հոգւոյ անմահութեան . Մարտիրոսաց Կանոնիը ո՛չ միայն կը բարերանէ սուրբերուն նաև հատակութեան յաղթանակը, այլ նաև կ'ոգեկոչէ անման հոգիները անոնց . կը հաւատայ թէ անմահներ իրենց յարաբերութիւնը չեն կորած այս աշխարհի մահկանացուներուն հետ, և կը վստահի անոնց բարեխօսութեան : Ազօթքները, երգերը, իրենց բոլոր ձեւերով, կ'արտայայտեն թէ կենդանի Աստուծոյ մը խորհրդաւոր ներկայութեան առջև կեցած է ժողովուրդը : Արարողութիւններ և ծէսեր, սկզբունքը, խորհրդաւոր արտայայտութիւններն են մարդու իր Աստուծոյն հետ ունեցած յարաբերութիւններուն : Խնչպէս միտքը և հոգին իր զարմանալի, ըսենք նաև իր շատ խորհրդաւոր վերացումներով և հայեցողութիւններով կը հազորդակցի Աստուծոյ և աստուածայիններու հետ, այդպէս ալ եկեղեցւոյ մէջ հաստատուած խորհրդակատարութիւններ, պաշտամունքի ձեւեր, արարողութիւններ, և այն, այդ մտաւոր և հոգեկան վերացումներուն և հայեցողութիւններուն զգալի խորհրդանշաններն են, իրարու հետ սերտիւ կապուած հոգերանական և կրօնական իրազութիւններ, թէ, իմանալի ըմբռունութերով և թէ զգալի ձեւերով ու արտայայտութիւններով :

Այս բացատրութիւններէն կը հետեւի թէ եկեղեցւոյ պաշտամունքը կրօնական գասոթարակութեան ամէնէն զործնական և ամէնէն հաճելի մեթոսն

է : Արագեսղի այս մեթոսը պահէ իր հրապոյը, ներդործէ իր շինիչ ազդեցութիւնը հաւասացեալներու վրայ, հարկ է որ ըլլայ հասկնալի, ըլլայ նաև ոչ ձանձրալի : Այս երկու պարմաններն ալ կենսական գեր մը կը խաղան հոգ ևոր շինութեան գործին մէջ : Ուրեմն բարեկարգութեան մէջ նկատի առնուելիք դորձնական խնդիրներէն մէկն է Հայց . Եկեղեցւոյ պաշտամունքը հասկնալի ընել ժողովուրդին և չձանձրացնել դայն :

Այս ոկրունքով կարելի՞ն է բարեկարգութիւնը պաշտամունքին :

Անշուշտ կարելի է . որովհետեւ պաշտամունքին էութիւնը, խորքը սկրտ աղերս ունի դաւանանքին հետ, և ոչ թէ անոր արտայալտութեան ձեւերն ու կերպերը : Զոր օրինակ . պատարագը պարզ ըլլայ կամ հանդիսաւոր, պատարագը միւսնոյն է : Փոքրիկներու մկրտութիւնը մեր եկեղեցւոյ մէջ ըստ կանոնի պէտք է ըլլայ երբ ութօրեայ ևն անսնք . բայց այսօր չի յարգուիր կանոնին տրամադրութիւնը : Երանի՛ թէ յարգուէք : Բայց մկրտութիւնը իր խորհուրդէն բան մը չի կրանցներ եթէ նորածինը ութօրի տեղ ութը շաբաթէ կամ ութը ամիս ետքը մկրտուի : Ենջեցեալի մը թաղումը եւ թաղման համար խմբագրուած կանոնը հաւատքի և գաւանանքի հետ կապ չունի . պարզ և հանդիսաւոր թաղումներ կան, և բոլորովին արտաքին ու չատ երկրորդական բաներ ևն ատոնք : Դարձեալ Մկրտութեան և Թաղման կանոններուն ազօմքները և երգերը, հին ձեռագիրներու համեմատութիւններով կը հաստատուի թէ ատոնք ծագումով կարճ ու պարզ եղած են, բարզութիւնը հետզհետէ եղած է ժամանակի ըմբանումներուն համեմատ . ուրիմն, նկատի ատոնքով մեր ժամանակին և միջավայրին պահանջները կարելի է բարեփոխել զանոնք, որովհետեւ արգէն կը բարեփոխուեն ատոնք կամ պաշտօնակատար եկեղեցականներուն գատողութեան համեմատ և կամ պասկի ու ննջեցեալի տէրերուն խորպանքին գոհացում տալու համար : Կարելի է Հայց . Եկեղեցւոյ ժամագիրքը և Մաշթոցին կանոնները առանձին տուանձին քննել և հնագոյն ծեռագիրներու համեմատ մէկիկ մէկիկ նշանակել ատոնք տարբերութիւնները, փոխունակները, յաւելումները, ատոնց կրած ամէն տեսակ վտափոխութիւնները, և զերակազմել ատոնց ամփոփ ձեւերը : Մէնք ի հարկին կ'անդրագաւոնանք այս երեսոյթներուն : Առ այժմ հոս մեր նպատակին համար բաւական է մատնանիչ ընկը այս չափը :

Ուրեմն ի՞նչ է պաշտամունքը հասկնալի և ոչ-ձանձրանալի ընկերու միջոցը . ըստ մեզ հետեւեալներն են .

1. — Պաշտամունքի լեզուն .
2. — Պաշտամունքի տեւողութիւնը .
3. — Պաշտամունքի ձեւերուն գայելչութիւնը (գեղարուեստական կողմը) .
4. — Ժողովուրդին գործնական մասնակցութիւնը պաշտամունքին .

1. — Երբ ժողովուրդին չխօսիս իր հասկցած լեզուով, չես կրնար հետաքրքրել զայն ուեէ խնդրի մասին : Հայց . Եկեղեցւոյ լեզուն գրաբար է, իսկ հայ ժողովուրդի լեզուն . աշխարհաբար (իր այլազանութիւններով), թիւրքերէն, արաբերէն, քիւրտերէն, սամեր ըշշանակներուն մէջ . իսկ կովկասի մէջ հայերէնին զատ՝ գրացերէն, ոռւսերէն : Թողունք հին և նոր գազութներու լեզուական գժուարութիւնները : Վերշին ժամանակներու մէջ շնորհիւ հայ զպրոցներու գործունէութեան, զոր օրինակ, թիւրքիոյ մէջ սկսած էր հայախօսութիւնը տարածուիլ : Բայց իրողութիւնը այն է որ հայ ժողովուրդը իր եկեղեցւոյ լեզուն հասկնալու վիճակին մէջ չէ : Խոյն իսկ հայախօս համայնքներ գծուար կը հասկնան գրաբար, ըստելու համար, չին հասկնար . որովհետեւ գրաբար եւ



աշխարհաբար թէեւ հայերէն են, բայց քերականորէն կը տարբերին իրարմէ, թէեւ երակուքն ալ լեզուի միեւնոյն բառամթերքէն կ'օգտառին:

Արդ, առանց պաշտօնական բարեկարգութեան, հայ եկեղեցականին ողջմասութիւնը կերպով մը հարթեր է եկեղեցւոյ լեզուին անհասկալիութենէն ծագող գժուարութիւնները, պաշտամունքի կարեւոր մասերը ժողովրդական լեզուին գարձնելով: Թարովը, զոր օրինակ, որ պաշտամունքի ողին է, ամէն տեղ ժողովուրդին հասկցած լեզուով կը տրուի: Նոյնպէս ընթերցուածներ ժողովուրդին հասկցած լեզուին կը փերածուին չառ տեղեր: Նոյն իսկ հոս երւսազէմի մէջ, Ծննդեան ճրագալոյցին, Բեթղեհէմի տաճարին մէջ, արարերէն ալ կը կարգացուի Յիսուսի Ծննդեան աւետարանը: Դարձիալ կարգ մը երկար ազօթքներ, զոր օրինակ, Հոգեկալստեան ազօթքները [Ոսկերերանին և Լամբրոնացին], Զօրոհնէքի, Աւագ Հինգչառթիի ձաշուին խրատականը, Առնդուայի երկար ազօթքը, կարող եկեղեցականներ աշխարհաբար կը կարգան: Իսկ Աւագ Աւրբաթի գիշերուան կտակը, Ճաշոցի մէջ, բուրուսին մէկզի զրուած է ճիմայ և ժողովուրդին հասկցած լեզուով աւուր պաշտաճի քարոզ կը տրուի տեղ: Այս ոչ-պաշտօնական բարեկարգութիւններ ցոյց կուտան թէ ժամանակին և միջավայրին պէտքեն ու պահանջները հարկազրած են եկեղեցին որ պաշտամունքի կարեւոր մասերը հասկընալի ընէ հաւատացեալներուն: Այս իրողութիւնը ցոյց կուտայ նուհեւ թէ կարելի է պաշտամունքի հասկնալիութեան Աջանակը ընդարձակել բանաւոր և օգտակար չափով մը, զոր օրինակ բոլոր ընթերցուածները, որոնք կարեւոր տեղ մը կը բանեն պաշտամունքի մէջ և անհրաժեշտ են սուրբգիրքին պատգամները հոչակելու համար, վերածուին մեր գեղեցիկ աշխարհաբարը: Մենք արդէն մատնանիւ ըրինք այս պէտքը վերադոյն՝ իբրև մին ժողովրդական դաստիարակութեան աղդակներէն: Մեր ժողովուրդը պէտք է որ իր հասկցած լեզուով կարգայ Սուրբգիրքը իր տան մէջ, և իր հասկցած լեզուով լսէ անկից ընտրուած ընթերցուածները եկեղեցւոյ մէջ: Գրաբարին չափ նուիրական է մեր գեղեցիկ աշխարհաբարը: Երբ աշխարհաբարն է մեր առանին լեզուն, մեր ընկերային յարաբերութեան լեզուն, մեր գալորդներու լեզուն, մեր գրականութեան և հարապարակազրութեան լեզուն, ինչո՞ւ այդ լեզուին պաշտօնապէս պէտք եղածին չտի տեղ մը չտրուի եկեղեցւոյ մէջ ալ:

Դարով պաշտամունքի միւս մասերուն, այսինքն՝ պատարագին, ազօթքներուն և շարականներուն, պէտք է խոստովանիլ որ տուաջին երկուքին գրաբարը, մանաւանդ զպիրներու կամ ժողովուրդի կողմէն երգուելիք մասերունը չառ պարզ է, և հայ ժողովուրդին ականջը այնքան լեցուած է անոնցով որ ամեննեւին հարկ չկայ աշխարհաբարի վերածելու զանոնք: ամէնքն ալ կը հասկնան Հայր Անրի գրաբարին չափ եւ տառ պէս պարզ են: յատին ռամիկն անգամ, որ կանոնաւորապէս եկեղեցի յաճախող եղած է, կը հասկնայ Ժամագիրքին ազօթքները և Պատարագին երգերը: Գալով Շարականներուն, պէտք է խոստովանիլ որ զժուարին կտորներ քիչ չեն տառ մէջ, բայց անոնց ալ յաճախ կրինուած եւ երգուած մասերը, անհասկնալի չեն բոլորովին հարախոս ժողովուրդին: Հետեւաբար ո՞չ պէտք կայ, ո՞չ ալ կարելի է զանոնք աշխարհաբարի վերածել: Վասնդի սրբազն երգեցողութեան եղանակները և այդ եղանակներուն լծորդուած բառերը, երբ առօգանուին պէտք եղածին պէս, բառերը ինքնին հասկնալի կը դառնան: Մեր ժողովուրդը կրինութեան օրէնքով գարժուած և ժամերգութեան և շատ մը բառերու և ասացուածներու, այնպէս որ այս բնական գարժութիւնը ինքնին միծ առաւելութիւն մըն է եւ ուեւ պէտք չ'զգացներ շարականներու, երգերու և սողուաններու լեզուին փոփոխութեան:

Դիտենք որ մեր ժողովուրդին մէջ լուսամիտ պահպանողականներ կոն, և անոնք համամիտ պիտի չդառնաւին նոյն իսկ Սուրբգիրքի ընթերցուածներուն աշխարհաբարացումին: Բայց տարբեր բան է զրաբարին սիրահարիւ, տարբեր բան է ժողովուրդին պէտքը, եկեղեցւոյ ոգեւորումը և բարգուածումը հոգեւոր կեանքի մէջ: Անհակ-Մեռուսութ ժամանակ եթէ խօսուած ըլլար մեր գեղեցիկ աշխարհաբարը, անշռչած այս աշխարհաբարով պիտի հայացնէին անոնք Առբրգիրքը: Ասիկա, անգամ մըն ալ շետե-

ցինք, Հայց. Եկեղեցւոյ համար կենաւկան պէտք մըն է: Մեր Փրկիչը վճռեց. Շաբաթը մարգու համար եղաւ և ոչ թէ մարդը՝ շաբաթի համար: Այս սկզբունքով կ'ըսենք. լեզու մարդուն համար և ոչ թէ մարդը՝ լեզուի համար:

2.— Պաշտամունքի տեւողութիւնը ճշգիլ շատ կարեւոր է՝ զայն ոչ ձանձրանալի լնելու համար: Մարգկային տնտեսութիւն մէջ ամէն բան չափ եւ սահման մը ունի: Ամէնէն համեղ համադամը կարելի չէ չափէն աւելի ուժել: Ամէնէն պերճ և հոգեշունչ քարտի մը իսկ կարելի չէ ժամերով ուշնկղել: կարելի չէ արդի երաժշտութեան զբուխ գործոց մը չորս հինգ ժամ անբնդառ լսել: մարդ կը յոզնի, կը ձանձրանալ: Երեկարտուե պաշտամունք մը, Ենթագրելով նոյն իսկ անթերի ըլլայ իր բոլոր կողմերով, կը ձանձրացնէ: Հաւատացեալներ ուրիշ գործեր ալ ունին ընկելք կեանքի պայքարին մէջ: Կեանքին ու կենցաղին պայմանները փոխուած են և կը փախուին ժամանակներու հետ, այնպէս որ ամէն դար իր կնիքը դրու է և կը գնէ մարգկային ընկերութեան բոլոր հաստատութիւններուն վրայ: Եկեղեցին չի կրնար բացառութիւնն կազմել այդ հաստատութիւններու մէջ: Եւ այսպէս՝ Հայց. Եկեղեցւոյ ժամակարգութիւնն ալ ինքնին հպատակած է ժամանակի պահանջներուն: Վասնզի Հայց. Եկեղեցւոյ պաշտամունքի ժամերը կամ ժամակարգութիւնը երայականին պէս (Սղմ. ձմբ. 164) եօթը ժամերու կամ պահերու բաժնուած, բայց մինչև իննի բարձրացած է. այդ բաժանումները մնացած են ժամագիրքի մէջ և այժմ անոնք իրարու կցուելով ընդհանրապէս երկու անգամով կը կատարուին, առաջ իրիկուն, միայն Մեծպահոց մէջ ձաշու ժամուն պաշտամունքը կատարելով, այն ալ տեղ տեղ, ինչպէս նաև վանքերու մէջ: Արդէն կ'արժէ զիտնալ որ Հայց. Եկեղեցւոյ ժամակարգութիւնը, սկզբունքով վանական միջավայրի համար կարգաւորուած է. վասնզի վանականներուն զվահաւոր գործն էր ժամերգութիւնն կատարել, անոր իւրաքանչիւր մասը իր ժամուն: Այս բանը կարելի չէր գործադրել քաղաքաներու եկեղեցիններուն մէջ: Աւրեմ այսօրուան իրականութիւնը սա՛ է որ ո՛չ միայն եօթը կամ ինը ժամերը(\*) երկու խումբի վերածուած են, այլ նաև այս կարգազրութիւնն ալ չի գործադրուիր շատ տեղեր: Գաղութներու մէջ մանաւանդ, կիրակնօրեայ հակիրճ ժամերգութիւն մը եւ պատարագ բաւական կը համարուի զաղթային կեանքի եւ միջավայրի հարկերուն տակ: Ասկից զատ, շատ աւելի ուշագրաւ պարագայ մը, նոյն իսկ աւանդապահ եկեղեցիններու մէջ, օրինակի համար, հո՛ս Ս. Յակոբ, կարելի կ'ըլլայ ամփոփումներ եւ կընատումներ ընել, պարագաներու պահանջներին համեմատ:

Այս բոլոր երեւոյթներուն հիմնական պատճառոններն են՝ պաշտամունքի լեզուն և տքը՝ ատոր երկար տեւողութիւնը:

Դիտուած է որ հայ ժողովուրդը, զոր օրինակ, Կիրակի օրեր եկեղեցին կը խռնուի առաւօտեան ժամերգութիւն ընթացքին, ուր Փառք ի բարձուն կ'երգուի, Խւզաբերից Աւետարան կը կարգացուի, եւ ձաշու ժամուն, երբ Ս. Պատարագ կը ժամուցուի եւ քարտը կը տրուի: Եւ անջևշտ ասոր պատճառը այն է որ պաշտամունքին այս ժամերը շատ զուարթ են. երգ, կենդանութիւն, շարժում կայ պաշտամունքին մէջ, եւ սակայն նոյն իսկ այս ժամերուն մէջ ալ ժողովուրդը անհամրի է ընդհանրապէս, որովհնտեւ չ'սպասիր մինչեւ վերջը պաշտամունքին, միշտ երթեւեկ մը կայ. մարդիկ կը ձանձրանան եւ զիրենք համարքը բրորող ժամերը վայելելէ հաքը, ամենայն անտարրերաւթիւնը, կը թողուն պաշտամունքին մնացած մասը և գուրս կ'ելլեն եկեղեցիւն:

Այս երեւոյթը ժամանակից ընելով, կ'ուզէինք եղբակացնել թէ երկարատեւ պաշտամունքներ չեն որ այսօր հայ ժողովուրդին հոգեւոր կեանքը պիտի շինէին և պիտի նորոգէին զայն: Մռունակու չէ որ եկեղեցին հոգեւոր զաստիարակութեան զպրոց մըն է հաւատացեալներու համար. եւ որպէսզի զորոց մը կարենայ հմայել իր աշակերտները և լարել անոնց հետաքրքրութիւնը, պէտք է որ չձանձրացնէ և չյոզնեցնէ զա-

(\*) Գիշերային, Առաւուսեան, Արեւադակալ, Ժամու (որ երեք ժամերու բաժնուած է, երրորդ, Վեցերորդ, Խններորդ), Երեկոյան, Խաղաղական և Հանգստեան:

նոնք : Դանդաղ, ծանր, երկարատե ունէ պաշտամունք չի հետաքրքրիր, չոգեւորիր, այլ ձանձրոյթ կը պատճառէ, և կ'ուժացնէ եկեղեցիւն :

3.— Պաշտամունքի տեսողութեան հետ կապ ունի նաև պաշտամունքին ձևերուն վայելչութիւնը, ուրիշ խօսքով պաշտամունքին գեղարուեստական կողմերը :

Գեղեցկութիւնը կը փնտունք ամէն բանի մէջ, և ասիկա պահանջն է հոգիին, հոպիտ, խօսր, տգեղ բանիր հաճելի չեն մարդկային հոգիին: Կրօնքը խորհրդաւորութիւններու հիւսուածք մըն է, և խորհրդագները գեղեցկութեան մէջ կ'արտափայլին: Եկեղեցին, իրեւ հաստատութիւն, իր շինուածքով, իր զարդարանքով, եկեղեցին իրքն ժողովուրդ, իր դաստիարակութեամբ, իր կեցուածքով, իր շարժումներով, իր արտայայտութեամբ, եկեղեցին իրքն ողջ մարմին, իր պաշտամունքին կատարման րուր ձևերով՝ պէտք է արտայայտեն վայելչութիւն, գեղեցկութիւն. ուրիշ խօսքով գեղարուեստը, ճաշակը, հնար եղած չափով ու կերպով, պէտք է տիրէ եկեղեցւոյ մէջ:

Մեր Հայոց եկեղեցոյ պատարագին երաժշտութեան և զգեստաւորումի ձևերը կը պարտինք Շնորհալիի շրջանին, ուր Լամբրոնացին ներսէս նշանակիլի գեր մը կատարեց: Կիլիկիոյ մէջ ճաշակներ աւելլ նրբացած էին, իրքն արգիւնք արեւմուաքի հետ եղած շփումներու, մինչ Մոյր Հայատանի մէջ կը տիրէն հին ձեներ ու կերպեր. զոր օրինակ, Լամբրոնացին գլուխ կուտայ թէ Զարագետի վանքերուն մէջ (Հազբատ և Սանահին) պատարագ կը մատուցանէն իրենց վանական սպիտով: Եկեղեցւոյ մէջ երաժշտութեան զարգացումն ալ կը պարտինք Կիլիկիան շրջանին: Լամբրոնացին սա՛տողերը իրքն նշանաբան զրուած են Շարականին 1838ի ապագրութեան սկիզբը.

— Աղջումն երաժշտական եղանակին . . . ընդուսուցեալ զարուցան զիհս աննեցու առ ի տեսուամ շնորհին. յանդի չի՛ ինչ ուր վիան մեր յօրացրէ յուրավորիւն կամ ի տրմութիւնն ուրպիս գերցոցն մայն, յորդամ ուրպիս սրման կ լինիցի. վաճա այսորիկ եւ եկեղեցական աւանդութիւնն ընկալան զայն (Մեկն. Պարզ.):

Բաւական չէ երգ ունենալ, բաւական չէ երգել, այլ պէտք է հասկնալ երգուածը, և արուեստին պահանջած պարմանո՞վ երգել, այն տանն միայն երաժշտական եղանակը կը հանի իր նպատակին:

Եկեղեցւոյ բոլոր գործառնութեանց վրայ պէտք է արտացոլայ վայելչութիւնը, գեղեցկութիւնը:

Յաւակի է խօստովանիլ որ վայելչութիւնը շատ անգամ կը պակախ մեր եկեղեցւոյ մէջ պաշտամունքի ընթացքին: Եթէ մատնանիշ ընել ուզենք ամէն մէկ տղեկութիւն, ամէն մէկ անգայելչութիւն, որոնց մէջ տեղի կ'ունենայ աստուածային պաշտամունքը, երկար յանկ մը պիտի ունենայինք:

Տարակոյն չկայ որ կարգ մը բանիր մեր ժողովուրդին արեւելեան բարքերուն հետեւանքներն են, և ատանք այնքան սովորական զարձած են որ աչքի չեն զարներ, և նոյն իսկ կրնայ զարմանք ալ պատճառել եթէ զիասզութիւն ընես: Միայն կ'ուզենք ուշազբաւթիւն հրաւիրել քանի մը զիմաւոր կէտերու վրայ.

Ա.— Պէտք է վերջ տալ կրկնութիւններու, որոնք կը պատճառեն երկարութիւն, հետեւարար՝ ձանձրոյթ, առանց խոնդարելու պաշտամունքին յօրինուածքը. զոր օրինակ, սովորանքներու, ընթերցուածներու, շարականներու մէջ, և այն ինչ որ մէկով կամ երկուրով կ'ըլլայ, աւելորդ երկարութիւն է մնացածը: Կրկնումներ և երկարութիւն հակառակ են գեղեցկութեան և վայելչութեան:

Բ.— Պաշտամունքի կատարման ձևերուն կամ արուեստին խնամքը: Բոլոր ընթերցումներ (աղօթք, սուրբզիրք, սազմոս, փոխ, քարոզ) պէտք է ըլլան անթերի առողջանութեամբ, արծաթի պէտ հնչուն, ողեւորուած, որպէսզի հաւատացեալիներ կարենան լաբուած ուշազբութեամբ հետեւիլ պաշտամունքի ամբողջ մասերուն: Նոյնպէս երգեցալութեանց զուարթ և յորդոր ընթացք մը տաւ: Արտաքոյ կարգի ծանրութիւն թէ՛ մեներգներու և թէ՛ հոմերգներու մէջ, ուրիշ բան չէ եթէ ոչ զանդաղութիւն. և զանդաղութիւնը ամէնէն զօրաւոր ազդակ մըն է ձանձրացնելու համար ժողովուրզը:

Դ.—Մրբավայրին պատկառանքը՝ Մեր Եկեղեցւոյ պաշտամունքը յաճախ շատ բան կը կորսնցնէ իր խորհրդաւորութենէն, զուտ կենցաղագիտական սկզբունքներուն չյարգուելէն։ Ոչ միայն երթեւեկը, ելեւմուտը ժողովուրդին և պաշտօնեաներուն, փոքրիկներուն աղմուկները, լացերը, ինչպէս խօսակցութիւնները, կոկորդ և քիթ ժողովերւ անվայելուչ ձեւերը, «զո՞րն ասեմ և զո՞րն խօսավանիմ» այս բոլորը, որոնք թշնամիներն են զեղեցիկ ճաշակի և վայելութեան պաշմաններուն, դժբախտաբար շատ սովորական եւ բնական բաներ են արեւելեան կամ ասիստան բարքերու մէջ, միշտ աեզի կունենան աստուածային պաշտամունքի ընթացքին ալ, և այսպէս չի յարգուիր սըրբավայրին պատկառանքը։

Այս բոլորը՝ մասը կը կազմեն ժողովրդական գաստիարակութեան, և հոգեւոր իշխանութիւնը պէտք է որ կարելի եղած միջոցները սանդէ ժողովուրդին գաստիարակութիւնը լրացնելու համար՝ եկեղեցական բարկարգութեան և պոյժառութեան տեսակէտէն։ Ասոնք, ըստ երեւոյթին, թերեւս երբորդական կէտեր համարուած են, նայելով աւելի կարեւորներուն, ասոր հակառակը չենք պնդեր, բայց կը խորհինք որ աստուածային պաշտամունքի մէջ կիհնաւական արժէք մը ունի արտայայտութեան վայելչութիւնը, զեղարուեստը, ինչ որ ապացոյցն է նաև ժողովուրդի մը ճաշակին աղնըւացման։ Պէտք չէ մատհան ընկել որ ժողովուրդն է նոյն ինքն եկեղեցին։

4.— Պաշտամունքը հասկնալի և զուարթ ընծայելու կարեւոր միջոցներէն մէկն ալ հաւատացեալներուն զործնական մասնակցութիւնն է ժամմերգութեան։ Թող չկարծուի որ ասիկա նորութիւն մըն է. ընդհակառակը, ասիկա մոցուած լքուած զեղեցկութիւն մըն է մեր եկեղեցւոյ մէջ։

Ժողովուրդը եկեղեցի կուզայ աղօթելու համար, հետեւբար պէտք է զործնականապէս մասնակցի աղօթքի բոլոր ձեւերուն և արտայայտութիւններուն՝ կատարելով իրեն ինկած բաժինը։ Պաշտամունքի մէջ, այսպէս ըսնք, աշխատութեան բաժանումի սկզբունքով կարգաւորութիւն մը եղած է։ Մյուս սկզբունքով սակայն աղօթքի բաժինները իրարմէ կարուած չեն։ Ընհակառակը սերտի կապուած են ատոնք իրարուհետ և ընդհանուր ներգանեակութիւն մը կ'որտայայտն ատոնք։ Ժողովուրդը չի կը նար կրաւորական զիրքի մը մէջ մնալ պաշտամունքի ատեն։ Ժողովուրդը պէտք է զործնականապէս մասնակցի պաշտամունքին։

Պաշտամունքի ընթացքին ինչ է սարկաւազներուն պաշտօնը, պիտէք. — Սարկաւազներն են որ հրաւէր կը կարգան եկեղեցականներուն և ժողովուրդին սրպէսպի ամէն մէկը իր կարգին կատարէ իր բաժինը պաշտամունքի մէջ, երբեմն ալ երկու խումբերուն միասին կ'աղգարսորէ որ մասնակցին պաշտամունքին։ Ասոր ամէնէն շօշափելի ապացոյցն է, զոր օրինակ, երբ սարկաւազը կ'ըսէ Ասացոյ սանենեան միաբանութեար. Skr ողորմեա. — ամէնքս միաբերան բսենք Տէր ողորմեա, Սարկաւազի այս հրաւէրին երբեմն զպրաց զասը կը պատասխանէ, երբեմն գեղեցկածայն տղայ մը, բայց բուն ժողովուրդը, հաւատացեալներու բազմութիւնը լուռ է. կարծես թէ իրեն չէ որ կ'ուղղուի հրաւէրը։ Հին ձեռագիր ժամագիրքերու մէջ նշանակուած են ժողովուրդին բաժինները, — եւ ասի ժողովուրդն կամ եւ ասեն հրահանգներու։

Զենք ժողովուրդը պէտք է երգակցի սրբադան երգեցողութեան իր եկեղեցւոյն մէջ և աղօթակցի, երբեմն բարձրածայն, երբեմն ցած ձայնով, տեղին ու պէտքին համեմատ։

Բայց ասիկա պարզ բազմանքով չէ որ պիտի կատարուի, ո՛չ ալ ստիպումով ձեռք բերուիք յաջողութիւն մը պիտի ըլլայ ասիկա եկեղեցւոյն մէջ։ Պէտք է կրթել ժողովուրդը եկեղեցական երգեցողութեան մէջ, առանց սեռի և տարիքի խարութեան։ Հայ

զարոցներու մէջ հւրոպական ձայնազրութիւնը պէտք է խնամքով մշակել, և հւրոպական նօրայով պէտք է ձայնազրել մեր եկեղեցւոյ շորականներն ու երգերը և տալ հաստատցեալներուն ձեռքը: Արդէն առանց ձայնազրական արտևեստին կարելի չէ մեր եկեղեցւոյ երգեցողութիւնն հասկնալի և ոչ-ձանձրալի ընծայել: Եւրոպական ձայնազրութիւնը և երաժշտական նորազոյն նուազաբաններ բաւական թափանցած են Հայ առանքերու և զպրոցներու, ինչպէս նաև հաւաքրոյթներու մէջ: Ասիկա կը նշանակէ թէ զժուարութեան մէկ մասը հարթուած կրնայ նկատուիլ:

Եւրոպական և ամերիկան եկեղեցիներու մէջ ժողովուրզն է երգին տէրը: և երբ ժողովուրզը ինքն կ'երգէ, ինքն կը հասկնայ իր երգածը, եկեղեցւոյ պաշտամունքը կը խօսի իր սրտին, և ինքն ալ փոխադարձարար կը խօսի պաշտամունքին և օրէ օր կը ծշակուին իր հոգեւոր զգացումները, և իր աղօթքներն ու երգերը կ'ըլլան ձառագայթումները իր կրօնական էութեան: Եկեղեցին կը տաքնայ, կ'ոգեւորի, կ'ապրի, կը տեւէ:

Հայաստանեայց Եկեղեցին ունի այս բոլոր յարմարութիւնները: Եւ շեշտենք անդամ մըն ալ, թէ ի՞նչ որ Կ'ըսենք նորութիւններ չեն, այլ մոռցուած գեղեցկութիւններ միայն. պէտք է վերահաստատել զանոնք. այս աշխատութիւնը լաւազոյն և ամէնէն օզտակար կողմերէն մէկը պիտի ըլլայ բարեկարգութեան:

**Օմակար.** — Համամիտ ենք Գեր. Ղեւոնդ Եպո. Դուռիանի, որ իր Պարզ Քարոզներու Դ. Հատորին Բազարութեան մէջ, Եկեղեցին և Երգը խորապես ներքեւ (էջ 131-143), բացարած է երգին կարեւորութիւնը և ժողովուրզին երգակցութեան հարկը նկեղեցւոյ մէջ:

## Օ Տ Ա Բ Ա Կ Ա Ն Վ

Ինքնիւճան կ'ըսեմ յանախ. Դուն ի՞նչ տեղի են արդիօֆ. Զի զըսներ սիրուց բան մ'որ զիմին իրեն բաշէ կամ գրաւէ. Ոչինչ կրտնայ յագեցընել զգացումներդ ու խորհուրդը. Կարծես ամսուն երջանկուրեան մը բացը կայ հոգոյդ մէջ:

Եւ սակայն, ի՞նչպիսի դրախտ կորսընուցած եւ միրէ. Եւ կամ քի ի՞նչ վեն դատերու ծառացորին մատուցած, Առ հոս ամսն ի՞նչ կը տևսնես սրգելուրին՝ մոլուրին. Առն է բուլին զեղեցկուրինդ, ո՞րն է յու լառուրինդ:

Մըսածումն ծրած երկնի մ'այն կարօներն իմ տարսան, Աստուածային իմ յախրաներն սկսէ և ծաղում մ'ունեան. Ի զուր, ի զուր կը փընըլուն զայն իմ սրբմուս սրբին մէջ:

Ու մինչ պատմած այս ցաւերուս վրայ գարմացած կը մընամ, Կը լըսման որ մէջըս կուշայ օսաւական մը վրան, Ու իր անոնն ու հայրենին ինձան ծածկած և ի սպառ:

Թրզմ. Թ. Ե. Գ.

ՍԻՒԱԼԻ ԲՐԻՒՏՈՄ



# ՊԱՏՄԱԿԱՆ

ՔՈՉԻՒԱՅԻ ՎԱՆՔԸ ԵՒ ԱՆՈՐ

ՀԱՅ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ

1. — ԱՌԵ ԼՐ ԳՏՅԱՆԻ ՔԱՂԻՔԱՅԻ  
(Coziva) Վաներ.

Խուսազգի Դանիել կրօնաւորին Աւելացրութեան համաձայն, Երուսաղէմէն մինչեւ Յորդանան քսան և վեց վերստ է, իսկ մինչեւ Քողիբար՝ տասն և հինգ վերստ, ան կը գտնուի խորունկ հեղեղատի մը մօտ, հանապարհին ձախ կողմը: Քողիբայէն մինչեւ Երիքով հինգ վերստ է, եւ Երիքովէն մինչեւ Յորդանան՝ վեց վերստ: Հեղեղատը կը թաւալի սխալցեալ ժայռերէ կաղմուած մթասատւեր ծորի մը մէջ: Այդ ժայռու մէջ քարայրներ կան, ուր լրբեմն կը բնակէին անապատականներ, որոնք հաստատած են հնա վանք մը, որը Յոյներ կ'անուանեն Քողիբար: Այս վանքը անդունդի մը վրայ գողցես ծիծառնակի բոյնի մը նման կառչած է լեռան կողքին:

2. — Ի՞նչ անունով կառուցուած է Քաղիբայի վաներ և ի՞նչ է ծագումը.

Քողիբայի վանքը սխալ սովորութեամբ մը՝ իններորդ դարուն Ս. Աստուածածնի, եւ յետին ժամանակներու մէջ, Ս. Գէորգի անունով կ'անուանակոչեն. վանքին արարական անունն է Տէյր կէ Քէլլ, Վանքին մէջ, հին զարերէն սկսեալ, պատերուն վըրայ գոյութիւն ունեցող Ս. Կուսի հօր Ս. Յովակիմայ պատկերները կը վկայեն թէ վանքը կառուցուած է անոր անունով: Յակորոս Առաքելյան անվաւերական համարուած աւետարանին մէջ կը կարգանք թէ Ս. Կուսի հօր Ս. Յովակիմայ անդաւակութեան և մօր՝ Աննայի ամլութեան պատճառաւ սրաբեկութիւն մը կար Ս. Կուսի ճնշացաւան մէջ: Յովակիմ, երբ գոհ մատուցանելու համար տաճար կը զիմէ, հակառակ վարչութեան մէջ կը մատուցուած առաջարկութիւն մը կար Ս. Կուսի ճնշացաւան մէջ: Յովակիմ, երբ գոհ մատուցուած առաջարկութիւն մը կար Ս. Կուսի ճնշացաւան մէջ:

ան ախրութեամբ համակուած՝ կ'ուղէր տնապատ քաշութէ եւ առանձնանալ: Ինքը Երուսաղէմացի էր և Յուդայի ցեղէն, հարուստ էր և ունէր բազմաթիւ հօտեր: Հըրեշտակը անապատին մէջ աւետեց Յովակիմայ Ս. Կուսին ճնունդը, միենայն ներշնչմամբ լցուած՝ Աննան ալ անոր կ'ոստուեր տաճարին զրան առջև, ամլութեան և անդաւակութեան նախատինքը ոյլ ես վերցած էր անոնցմէ:

Երուսաղէմի և շրջակալից մէջ զըտնուած վանքեր ու եկեղեցիներ ընդհանրապէս կառուցուած են Քրիստոսի Տօնորինական Ս. Տէղերու և կամ մարտիրոսներու գամբարաններուն ու Սրբոց փոխազբուած նշխարներուն ամփոփուած տեղերուն վրայ: Յակորու նախաեւամամբ, թէեւ եկեղեցին վաւերական չէ նկատած ու մերժած է զայն, բայց ինչպէս կ'երեւի քրիստոնէական համասութեան պատմութենէն, նախոնի քրիստոնէայք օգտուած են այդ անգամարդկանին ինչ ինչ հասուածներին, ուրոնց պատմուած քնները ունեցած են իրենց շինիչ կողմէնը, ու անոնք անվարան օգտուած են անսնցմէ ու համաձայն անոնց իմաստներուն եկեղեցիներ ու վանքեր ալ հաստատած են, այս պարագան անժմիլուիլ է պատմականօրէն: Մէնք ասկէ ասաչ զրած ենք այս մասին ու հաստատած ենք այս պարագան (տե՛ս Այսէ, միք յօդուածը, Հայոց Ս. Աստուածածին փակէր, Բերդինի անհապարհի վրայ, 1927, էջ 109-112. Տարեւ, միք յօդուածը, Ս. Գրոց անվաներական գրեանի, 1928, էջ 111-120), և պարզած Ենք թէ նայն անվագեր զրուածքներն ալ ներնշած են նախոնի քրիստոնէաները կառուցաներու վանքեր և եկեղեցիներ: Քողիբայի վանքը այդ կարգի վանքը մինչեւ շատ հին ժամանակներու մէջ կառուցուած: Երիքովի ճանապարհին վրայ՝ Ս. Կուսի հօր Ս. Յովակիմայ առաջարկութեան էր Քողիբան: Յօվակիմ քանի որ Երուսաղէմացի էր, անկասկած ան միենած էր Երիքովի ուղղութեամբ: Ի. գարու եպիսկոպոս մը, Յովիաննեկան Եվֆեայ, իր մէկ քարոզին մէջ այս պարագան կը լիւէ ու կը խօսի Աւետուն Յովակիմայ կոչուած տօնին վրայ, որ բիւզանդացւոց օքիրուն հաստատուած առնախմբութիւն մըն էր, ու ան չի կրկներ Յովակիմայ առանձ-

նացած աեղւոյն նկատմամբ յիշուած առնապատ բառը, այլ կուտայ անոր նաև յնու բառը. վասն զի Քողիբայի զիրքին համար խիստ լաւ կը յարմարին անապատ եւ յնու բառերը։ Միւնոյն ժամանակ պէտք է ընդունիլ թէ Քողիբայի վանքը չատ հին է ու անոր ծագումը՝ անյայտ Եւագրի եկեղեցական պատմիչը կը յիշէ (դ. 7) Յովհաննէս Քողիբային, Զ. գարուն սկիզբը, որ առաջ անապատական էր նոյն վանքին մէջ, յետոյ եպս. Կոստավոյ (Պաղեստինի մէջ): Եւագրի խօսքերը սակայն, չին բացատրեր Քողիբայի ծագումը, եւ նոյն իսկ Յովհաննէս Քողիբային օրով, տակաւին եկեղեցի չէր հաստատուած հոն, այլ միայն միայնակեացներու բնակավայր մըն էր ան (laure). բաց աստի, Քողիբան տեհի հին էր Եւթիմոսի, Թէոդոսի և Սարայի վանքերէն։ Է. գարուն համաքաղաքացի երկու կրօնաւորներ, Սոփրոնիոս և Յովհաննէս Մոռքոս, բարեպաշտական ուխտաւորութեամբ մը կ'այցելեն Պաղեստինի եւ Եղիպատոսի վանքերը, մասնաւորապէս կը այցելեն Քողիբայի վանքը, որ նոյն գուրուն այլ եւս իր խցական վիճակէն (laure) գուրս ելած՝ վանական հաստատութիւն մըն էր, եկեղեցիով, գերեզմանատունով և վանականց բնակարառներով. ուրեմն պէտք կ'ըլլայ ընդունիլ թէ Քողիբան, թէ և անապատականներու իրը ճզնարան հնագոյն ժամանակաց մթութեան մէջ մնացած է, բայց իրը մենասատան սկզբնաւորուած է է. գարուն։ Ս. Յովակիմայ անունը կ'երենայ վանական Եպիփանի հետ. Ս. Երկրի վերաբերեալ իր նկարագրութիւնը գրեթէ կ'սկսի Ժ. գարէն. ինքը Երուսաղէմացի էր, հետհարար եկեղեցիին աւանդութիւններուն վրայ ճշգրիտ տեկեկութիւններ կրնար տալ։ Եպիփան՝ Երկրաւոր դրախտը կը զնէր Քողիբայի զիմացը. «Բեթանիոյ արեւելեան կողմը, տասներկու մզոն հեռի, կար եկեղեցի մը, այն տեղին վրայ՝ ուր Ազամ հեկած էր նստիլ, ողբալու համար երկրաւոր դրախտը կորսնցուցած ըլլալուն հետեանցով»։ Այս յետոյ կ'առելցնէ թէ «այս եկեղեցիին մօտ էր Յովակիմայ տունը, որ է վանքը»՝ վանքին արեւելեան կողմը չորս մզոն հետաւորութեամբ կը գտնուէր Երիքով»։ այս նկարագրութեան ճիշդ տեղը

կը գտնուէր Յովիբան, եւ այս աւանդութիւնն ալ չատ կին է։

### 3.— Քողիբայի Գեւեկմանաւունը.

Քողիբայի գերեզմանատունը գտնուած է վերջին գարու կիսուն, բայց զժրախտաբար պէտք եզած ուշագրութիւնը չէր ընծայուած անոր։ Երուսաղէմի Յունաց Պատրիարքուրանի մատենապարանապետ և աւագ Սարկաւագ Կղէոպա Քոյիքիլիակա (այժմ եպս. Նազարէթի) միւայն 1901 ին ուսումնասիրութիւն մը զրած է անոր նըկատմամբ։ Այս գերեզմանատունը ստորերկեայ բնական և ընդարձակ քարայր մըն է, ուր փորուած են զերեզմաններ։ Գրեթէ 150 մետրներու անուններ զրոշմուած են նոյն գերեզմաններու առաստաղին և պատերուն վրայ, հոյակապ մեռելամատեան մը որուն մէջ զրեթէ իւրաքանչչւր անունի քով նշանակուած է մեռեալին տիտղոսը, ազգատունը, տարիքը եւ մահուան թուականը, յիշատակելով ամիօս և շնչիկշինը (indiction), բայց ոչ երեխ տարին։ Այդ անուններուն մէջ կը գտնուին եպիսկոպոսներ, պարզ վանականներ, նոյն իսկ երեք սարկաւագուններ։ Յիշատակարանին թուականը զանելու համար Կղէոպա աւագ սարկաւագը կը զիմէ հնագրութիւն (paléographie) և միւնոյն ժամանակ մէջ կը բերէ վանազան պատմական փառուեր, ուրոնցմէ այս եղբակացութիւն կը համի թէ նոյն գերեզմանատունը և. գարու վախճաննէն սկսեալ վանքին յատկացուած էր մինչև Ժ. գարու սկիզբը։

Կղէոպայի հրատարակած մնագրութիւնը ունի ներածութիւն մը՝ ուր կը համառուէ Քողիբայի խցական և վանական վիճակներու պատմութիւնը, յետոյ կը գրէ կենսագրութիւնները Քողիբայի Յովհաննէսին և Դէորգ Կիպրացիին, որոնք վանական այս մեծ կեղրանին երկու զլսաւոր փառքերը եղած են, և նոյն վանքի վերաբերութեամբ հատուածներ մէջ կը բերէ Յովհաննէսի Մուրուն, Կիւրեղ Ալիյրուպունցին և Եւագրի։ Գերեզմանատունն զատ, Կղէոպա կը խօսի Աւասի Քիլդէն Քողիբայ բերուած ջրի ճանապարհի մասին։ Ան կը մատանանչէ այլ և այլ եղբայրով արձանագրութիւններ, որոց մէկ քանին ստորերէն են

և շատ հին կը թուին։ Նոյն հեղինակը քանի մը տարի առաջ ալ հրատարակեց Քողիբայի մէջ զոհուած մողայիք մը, որ կը կրէր յունարէն արձանագրութիւն մը։

Յարդելի հեղինակին այս ուսումնախրաժիւններէն կը հասկցուի որ Քողիբայի գերեզմանատան մէջ թաղուած են զանազան ազգութիւններէն այլ և այլ ննջեցեալներ, որ մահուամբ եղասյացած ու հոն ամփոփուած են։ այսպէս, Հայեր, Խաչացացիներ, Կիլիկիներ, Միջազգայիներ, Աշարւիներ, Հոռվանայիներ, Գաղոցիներ, Ավրագուացիներ, Մայումյիներ, Տիրացիներ, Անիուացիներ, Դամակացիներ, Եղիպատրիներ, Կապարովիացիներ, Եղաջացիներ, ինչպէս նաև մեկ Թեսարակիկեցի, մեկ Հնիկ, մեկ Ասամի նու և մեկ Արերուացի։

#### 4.— Քողիբայի վանքին նայ միաբաները .

Վերեւ զրեցինք որ Քողիբայի վանքը Քողիբայի Յոգհաննէսի օրով (+532) տակաւին խռոցիք բազկացեալ հաստատութիւն մըն էր, և, զարուն էր որ հո՞ն կը չինուին վանք ու եկեղեցի, կը ծագկին նշանաւոր վանականներ՝ Քողիբային Կէորդ (+625) և Անտոն, որ զբած է առաջնոյն վարքը։ Քողիբայն և զարուն իր պայծառութեան զինիթին վրայ կը գտնուէր, յիտոյ տուկաւ առ տակաւ անչքացու ու մինչեւ մի։ զար թէեւ զոյութիւն ունէր, սակայն նոյն ժամանակին սկսեալ քայքայուեցու և վերջին տարիններուն միայն նորոգուեցաւ։ Վանքին պատմական գերեզմանատան մէջ ամփոփուած ննջեցելոց արձանագրուած անուններէն կը հետեւցնենք վանքին զաքայցման թուականը, որ ժամանակ հաւաքուած էին բազմաթիւ երկիրներէ ու ազգութիւններէ վանականներ, որոնք թէեւ ապատութիւննած օտար հաստատութեան մը հովանիին տակ, բայց կը պահէին իրենց կրօնական գուանութիւններէն կը կրոյիչեալ հեղինակին այն կարծիքը թէ անոնք յունազաւանութիւնը ընդունած էին ու այդ հանգամանքավ միայն կը մասյին Քողիբայի մէջ, ուզիդ չենք գտներ այն փաստերով որ իրեն ալ անտարակոյս անձանօթ չեն։ Այսնի մէջ և այլուր մեր հրատարակած յօդուածներով ըստ բաւա-

կանի պատմականորէն հասկցուցինք թէ Հայ եկեղեցին երտուաղէմի և ըջակայից օտար վանքերու մէջ ի հնումն ունեցուծ է հայ միաբաններ, որոնք իրենց զաւանութեամբն ապրած են, իրենց լեզուովն ազօթած ու սաղմոսած են ուրոյն եկեղեցիի մը մէջ, թոյլտուութեամբ օտար վանքերու առաջնորդներուն։ Այս մասին ամեն հին վկայութիւնը կուտայ Հերոնիմոս։ Բնթերցողը երբ կը կարգայ Այսնի ի անցեալ երկու տարուան էջերուն մէջ մեր յօդուածներով ապարաւած պատմական փաստերը, պիտի տեսնէ որ Գարիպեայի (Այսն, 1927, էջ 109-112), Սուրայի (անդ. 1927, էջ 369-372, 1928, էջ 16-19). Թիոյոսի (անդ. 1928, էջ 42-46), Երիխոնոսի (անդ. 1928, էջ 364-367), Աբմայի (Արեւ, 1926, թ. 2338-39) վանքերուն մէջ յանուանէ յիշերով հայ միաբանները, նկարագրած ենք անոնց պատմական կենցաղը ու գաւանական վիճակը։ Երուսաղմուկի օտար վանքերու մէջ հայ վանականութեան այս որով հանգամանքը, հայ եկեղեցական մատենագրութեան համար յիշատակելի պարտագայ մըն է և պատմուկանորստաց տեղեկութիւն մը, որ անտարակոյս ուշազիր պրատումներով և աշխատանքներով պիտի ճոխանայ ի պատմեալ հայ քրիստոնէութեան։

Քողիբայի վերեկմանատան ննջեցելոց արձանագրութիւններէն հասկցուած է թէ հոն ուրիշներու հետ խառնուած և թաղուած են հայազգի երկու միաբաններ ևս, հայ խնամայ մը և Յովհաննէսի սեղու հայ տարկաւագ մը։ Հաւանական է որ հոն ուրիշ հայ միաբաններ ալ թաղուած ըլլան, բայց արձանագրութիւն չունին։ Այս երկու հայ միաբաններու մասին կողեզագա Սարկաւագ հետեւալ կործիքը կը յայտնէ, ըստեւով թէ նոյն վերեկմանատան մէջ թաղուած հայ միաբանները ո՛չ թէ Քաղկեդոնի ժաղովէն տուած, այլ յիտոյ թաղուած են, երբ զեւ իրենց հերձուածը (?) ոչ ընդհանրացած և ոչ ալ զրութեան մը վերածուած էր իրենց մէջ։ Յիշեալը անոնց մասին կը մտածէ երկու բան. անոնք կամ ամին կը մտածէ երկու բան. անոնք կամ ամին հայերէն են որոնք հաւատարիմ միացին օրթոստք եկեղեցիին ծոցին մէջ, երբ միաբանութեան զէմ հոլածանքը սկսաւ Պազեստինի մէջ և հերձուածը զաղրեցաւ մեծ վանահայրեկուն՝ Եւթիմիոսի, Թէոդո-

դոսի, Սարայի և ուրիշներու չնորհիւ, և կամ անոնցմէ էին, որոնք բիւզանգական պիտութեան սահմաններուն բնակիչները ըլլալով՝ Հերակլի օրերուն մտան կաթողիկէ եկեղեցին, երբ կայսրը յաղթանակու գարձու Պարսկաստանէն և Կարնոյ մէջ 628ին գումարեց այն ժողովը որ կարճ ժամանակի մը համար միայն երկու կողմերը միացու:

Այս բացատրութիւնները բնաւ հիմնաւոր չեն. վասնդի Քոզիբայի հայ վանականներուն և նոյն խոկ անխոտիք բոլոր վանականներուն համար այն ատեններ անձանօթ էին վարդապետական իմաստներու տարբերութիւնները, անոնք ամենքն ալ եղայրացած էին մէկ յարկի տակ: Եւ յետոյ վերև մեր թուած յօդուածներուն մէջ պատմականօրէն պարզած ենք թէ հայ վանականներ Պաղեստինի օրթոսոփս վանքերուն մէջ բնակելով՝ խառնուած են տարբեր տպառութեանց վանականներուն հետ, բայց անոնք իրենց սեպհուկան եկեղեցիններուն մէջ իրենց լեզուավ կը կատարէին պաշտամունք, կ'ազօթէին, կը սարմասէին, կը հետեւէին ձեռական աշխատանքի եւ զրչութեան արհեստին, եւ ասոր կը վկային այն բազմաթիւ զբազիրները, որ կը միային երուսաղէմի, Սինայի և վերին Եղիպտոսի անապատներուն մէջ, ինչպէս այլուր գրած ենք (Տարեկ., 1929, էջ 39-50). ամուր կերպով կը պահէին Հայ եկեղեցինն զաւանութիւնը, ասանց զատուելու ընդհանուր եղայրակացութենէն. անոնք հայ կը մնային միւնոյն նուրիբական յարկին տակ: և այս պարագան տարօրինակ երեւոյթ մը չէր կրնար ըլլալ, քանի որ հին օրերէ սկսեալ այլեւայլ տպաքերու վանականները թէ Երուսաղէմին եւ թէ չըջակայից Տնօրինական Ս. Տեղերու մէջ կը պահէին միւնոյն քրիստոնէական եղայրակացութիւնը, անխոտօրէն մասնակցելով օրուան պաշտամունքներուն եւ արարութեանց:

Այս եղանակաւ էր որ ի հնումն Բողոքիրայի վանքին նաւակատիքի տօնագարձը, ըստ Երուսաղէմի ծիսարանին, հանգիստառապէս կը կատարուէր Յունիկը 18ին (R. B. 1914, էջ 461): Ի գուր Արեք Martigny իր Dictionnaire des Antiquités chrétiennes գիրքին մէջ (էջ 318) կը պնդէ թէ

Ս. Յովակիմայ տօնը թ. զարուն միայն հաստատուած է, և թէ Ս. Կուսի ծնողաց անունը է, զարեն առաջ միայն աւանդավէպ մը կը նկատէ. բայց յիշեալ հեղինակը եթէ տեղեակ ըլլար Արևելեան եկեղեցին գարաւոր աւանդութեան և Քողիբայի վանքին պատկերներուն և Քողիբայի վանքին պատկերուն վրայ նկարուած Ա. Յովակիմայ պատկերներուն և անոր անուան կառուցուած հասղարեան վանքին և եկեղեցւոյն, ապահովարաց պիտի չի համարձակէր զրել այդ տողերը:

ՄԿՐՏԻՉ ԵՊՈ. ԱՂԱԽՆՈՒԵՐԻ

ՃԱ.

ԽՈՎԱՏՈՒՄ ՅԱՅԹՈՎ ԱԿՑՈՒՄԵՐԻ

1560 Փետր. 16 — չ 1584 Փետր. 1.

Խաչատուր Բ., ըստ Զամչեանի՝ Խաչիկ Աւենցի, ըստ Մազաքիս Դորի՝ պարզապէս Տէր Խաչիկ, ծանօթ է իր Երամիս տիազոսով, անշուշտ իրրե վարզեալ մը եկեղեցական երաժշտութեան մէջ, և կամ իրրե վարզեալ և գեղիցածայն երգեցութ:

Հին ատեններ մեծ կարեռութիւն կը տրուէր եկեղեցական երաժշտութեան, և նոյն խոկ այս մը օրերուն ալ «ճայնուառո» անձեր հախամեծար կը համարուէին քահանայութեան, առանց սակայն չատ խառագահանչ ըլլարու թէ ի՞նչ է ճայնուառութիւն կարողութիւնը եկեղեցական երգեցութեան մէջ, հերիք է որ մարդը «ազուռը ձայն» մը ունենար և կարոզ ըլլար երգել: Կ'երի թէ կաթողիկոսական աթոսին բարձրանաւու համար խոկ, ուրիշ յարմարութիւններու հետ երաժշտագիտութիւնն ալ առաւելութիւն մը կ'ասեղձէր, և կամ, թերես, միւս ըլլար յարմարութիւններէն ալ վերը կը նկատառէր:

Գերախոսարար շնոք գիտեր թէ Խաչատուր Բ., իրրե մատարական և գեղարուեստի վարզեալ մէջ արձէք կը ներկայացնէր որ իր քրայ չեշտուած է Երամիսը: Բայց գիտենք որ Կողիկիս նշանաւոր եղան է Երամութեան մէջ (Հմատ. Ախտաւ, էջ 517, ձնթ.), և Ամենոն կթուա, ինչպէս որ պիտի տեսնենք իր անդք, առ Փիլիպպոս կմդպա, իր ուղղած թուղթին մէջ վասահ պարձաննորով մը կը մատնանշէր երաժշտական արուեստին զարգացումը Կողիկիս Մայրաքաղաքին մէջ:

— Խաչիկ ի Սրբայ  
Սալմոն ի Մբռայ,

հետարար, կարելի է հնմտագրել որ Խաչիկ Ռեյնցին, քաջ երաժիշտ մըն էր, այսինքն՝ ո՞չ միայն իրին ։ Ճայնաւոր ։, այլ մա՞սնաւանդ իրին վարդեար երաժշտական արուեստն իրաժիշտ ուրիշ գէմքեր ալ կան խաչատուր թ. ի յաջորդ ներւուն մէջ։

Ասոյ Մատուցին մէջ աս՝ յիշատակագրութիւնը կայ իր մասին։

— Դաւաս Խաչատուր իրզու ։ Եսու յառա Խաչատուր ։ Արայ Աթ (= 1560) վիենարի թջ (= 16), փերդի ։ Գ (= 4) առ Քո ։ Փախեցու թէ ԱՆԿ (= 1584), որոյ լիաւակին անուր (= առջևութեամբ) եղիցի ։ ամէն։

Դարանազցին քանի մը բառով միայն, Զարուկն անմիջապէս հայրը ։ կը միէ Խաչատուր թ. ի կը բարտ զայն զիսել տալով թէ Զորուկն ի ճամբէն չգնաց, և առ մնաւ բարի անուն մի համբաւեցաւ ի նմանէ ։, դիւրանց եղաւ եւ մնաւ (Գրնոցին, Ֆմնիկը, էջ 318)։

Դարանազցին կը սխուր անշուշտ, որովհեա ան Խաչատուր թ. չղիւրանց չեղաւ, այլ 24 տարի մնաց կաթողիկոսական աթոռուն վրայ ։ Դարանազցի բարանքին պատճառն է Խաչատուր թ. ի ճգնազգեած ըլլիւմ ։ Կէտ մը որուն վրայ կը գնէ ան իր Վարաւոր չեղաւ — եւ ո՞չ զնաց ի նոնապահն Զուտկին Խաչատուր թ. ի յաջորդ Զուղայեցի Ազարիային վրայ ալ նոյն զիսովութիւնը պիտի ընէ Խօրձող Դարանազցին։

Եկերի թէ Խաչատուր թ. վաթէնամեայ եւ թէրեւ աւելի էր, երբ կաթողիկոս եղաւ, որովհեաւ ստիպուեցաւ կանուսէն իրեն փախանորդ և յաջորդ մը նշանակ եր անցած էր ութառուն, որպէս զի իր անունով վարէ կաթողիկոսական գործ Այդ փոխանորդն ու յաջորդը եղաւ Ազարիա Զուղայեցին, զոր եպիսկոպոս կամ առաջնորդ նշանակէց Ս. Սովորյի ։ Կաթողիկոսարանի Մայր Եկեղեցւոյն, հաւանութեամբ եղիկոսոսներու, քահանաներու և ժողովուրդին, և անոր յանձնեց կաթողիկոսութեան կնիքը, ա՞ն էր Կ'ընէր կաթողիկոսութիւնը և Խաչատուր վարդանութիւնը ալ ընդունուեցաւ իր կաթողիկոս(\*)։

(\*) — «Մե՛ յետնագրեալի, ամենալազոսն, եպիկոպոս և երեցուն և արքայուն և մայուսուր Հայոց ննապանդեան կարօղիկոսուրեան Փաք Հայոց և Այս Խոյսի և յեկեղեցի կարօղիկոսուրեան Սուրբ Սովորյան, անեմին Վարաւորին եւ առեմ հօմանուրու առաջնորդ նշանակէց Սէ Վարդապէտ Ազարիան ծառայէան ի խաչայեան կարօղիկոսուրեան Փէիլ բնիւթական և օրինակ բարու ամբ ի մասնակի ոլորտն մեր Խաչատուր Կարօղիկոսին, մինչ զի կենակի էր, զի ձեռ մորդ էր աւելի հան զ2 (= 80) տասց. վաս զի այլ ոչ կատէ ծառայէր կարօղիկոսուրեան, եսու խօսանորին կարօղիկոսուրեանն եւ առա եպիկոպոս ի յեկեղեցին կարօղիկոսուրեանն Սուրբ Սովորյան կամ մեծ եւ յաւելի բանոյ եպիկոպոս և յաջորդոց մեր Կարօղիկոսուրեանն, եւ եսու զիսնեն կարօղիկոսուրեան ի ծեսին իշում, եւ յինք էր ապագայէ զանեայն ինչ, եւ զին ու առ-

Խաչատուր թ. ի վարչական գործունէութեան պատմութեան մէջ մնացած է Հառութեամբ մշակուած յարարութեան յիշատակը, այն երկու գրութիւններով, որոնք ուղղուած են Գրիգոր մէտ. պատոյն (ՏՂԱ Ապէլ, Առութ Վատիկան, ի Ե. Տիսեան-է, էջ 203—204, Հմետ, Հմելը Ամսունայ, 1892, էջ 244—245)։

Դժբախտաբար այս տողերը գրելու ատեն, աչքի առջև չունինք այդ երկու գրութիւններուն պատճենները, որպէս զի գաղափար մը կազմէնք ատանց բախտական թեան վրայ ։ Բայց նըկատի առնելով այն չափերը, որու վասիկան թափեց այս գարուն ալ Հայց, Եկեղեցին Հռոմի Եկեղեցինք միացնելու նպատակով, կարելի է ըստ թէ ինչ բանի վրայ է խնդիրը։ Խաչատուր թ. ի Հռոմի համ մշական յարաբերութեան տեղեակ է գործակից է իր օգնականն ու յաջորդը, Ազարիա Զուղայեցին, որ յետոյ, երբ կաթողիկոս եղաւ, ինքն ալ շարունակեց Կիլիկիոյ կաթողիկոսարանին յարաբերութիւնը Հռոմի համ հանարար այս մասն կը խօսինք՝ Զուղայեցիի վրայ գրելու ատեն։

Խաչատուր թ. ի ժամանակը շա՞տ խռով է քաղաքականապէս Մէկ կողմէն Կիլիկիոյ մէջ բանացող և երարու հակառակորդ ձորապեաններ, միւս կողմէն ձէլալիններուն ելքն ու աւերիչ արշաւանքները Անասուրուի մէջ, ան ու զողի մատնած էրն երիբն քիմատոնէութիւնը։

Կարգ մը Աւետարաններ գրագրուած են Խաչատուր թ. ի կաթողիկոսութեան ատեն, որոնցը մէ օմանց յիշատակարաններուն կարեւոր մասները յառաջ մը բըրենք իրենց ժամանակագրական կարեւոր մեջ համար ։ Այդ յիշատակարաններէն բանի մը հատին մէջ արտայացուած դառնութիւնը ցոյց կուտայ թէ ո՞ւշափ տաժանների եղած է Անատօնուի քրիստոնեայ ժողովուրդներուն կացութիւնը այդ անիշխանութեան ընթացքին։

Ասուզիւ, հրաշքով է որ Հայ ժողովուրդը պահած է իր ազգային գոյութիւնը և իր նուիրական հաստատութիւնները այդ աննկարագրեալ հարաբանարութեանց նշումներուն տակ։

Ս. Յակոբայ Մատինագարանին թիւ 1939 Զհոր, Աւետարանէն։

— Եթեալ աւատէի զա ի զիսին որ ասի ի Գալակոնն (։ Եայլախան) կառողարքը, Այ, թիս նովանակ որ Խաչատուր Սէ Վարդապէտ Անդիման, ի բուին հայոց Աթէն (։ 1566) ամին, ի քաջալուրքան Սուրբ Սիլուսին և ի Կարողիկոսուրեան Տէր Խոչտաւքին և ի հայրագետարքան(\*) Տէր Գրիգորին։

(Պատագայի Ցուցակ, Զհոր, էջ 1250)

Եթե նա՛ բնուննի էր, եւ յէս մեռանելոյն ասոցեալ ողամածին կարօղիկան մը Տէր Խաչատուր, Տէր Վարդապէտ և Կառլիկապան բնիւթակ եղեւ կարօղիկան, եւայն (ՏՂԱ Պայման, Պատ. Երդիկ. 4. թ. ի Հայոց, էջ 312, Հմետ, Սիրուան, էջ 541)։

(\*) Հայրագետութիւնը գշապեսներ լիաւակարաններն մէջ կը կիշտակի երեւն վահանացր-

Դամօր. — Միենոյն բանաձևով եւ միեւնոյն դրէկն ուրիշ աւելաբանի մը յիշառակարան մըն ար կայ Թարու Աղբարի մէջ (Նոր. Ա. 221—222). սա ապրեքութեամբ որ այդ Աւելաբանը զրուած է Նժիգ=1569, Կարսկ գիւղի Սուրբ Նուանաց Հովանիին տակ:

Կայիփասի Ա. Յակոր վանքին Մաշտոցէն.

— «Աւելաբան Ա. առս, որ այն Մաշտոց կրոյ բոր. ի յամի Ա. Ժ. Հ. (=1508), ընդ նովամբաւ ասհարին եւ Ս. Աստղին եւ Ս. Գրիշին. ի զուանի ի Մէտինի. ի զիւնի ի Համբաւի, ի յերիցորեան Գրիգորի Տէր Թուրունու, և ի կարողիկոսուրեան Տէր Խոչառուրին, և յախտիպատրեան Տէր Եղիորին, եւ ի քաղաքուրեան Մերամին...» (Թարոս Աղբար, թ. 299):

Արդիի Բարձրահայեաց Ա. Աստուածածին վանքին Աւելաբանէն.

— «Գրեալ ի բժին Աժ.թ. (1570), յերազարէ, ի Ս. Յակոր. ի նայտաբետքան Հոյոց Տ. Միենի Կարողիկոսի, և ի Կայտապետքան Կիլիկեցցց Տէր Խոչառուր կարողիկոսի. ի քաղաքուրեան Սուլումն» (Թարոս Աղբար, թ. 299):

Տայալի կայսեր ի բժին Աժ.թ. (1570), յերազարէ, ի Ս. Յակոր. ի նայտաբետքան Հոյոց Տ. Միենի Կարողիկոսի, և ի Կայտապետքան Կիլիկեցցց Տէր Խոչառուր կարողիկոսի. ի քաղաքուրեան Սուլումն:

Տայալի կայսեր ի մուսկաց առաւ. այրի Երիտասարդ վճարեալ, և ամբի եւ ամենան զեր առաւ, որ ոչ բիւի կուցել եւ ոչ նուել, Վայ ևզ. եղուին եւ խաչառաքին տարի ի յերին բազում. բորեան Ճախաստանու որ այժ առի Պատրէ, որ Ճախ Թանազ կոչեն. եւ ի Առաջնորդուրեան ուրեց Խառնին Երաւանքին Տէր Անդրէան առի նախալուսովին: Յիշասակարուն գեցան ի ամուր Բայր. . . ձեռ ամբ Միիրա Կայսիկոպատիւր (Թարոս Աղբար, թ. 392—393):

Ա. Յակորի Մատենադարանէն թիւ 178 (8/8) Զեռ. Աւելաբանին զրուած է Երաւանքէմ:

— «Ի Կայտապետքան տէր տէր Խոչառուրին եւ ի պատշաճուրեան Ար. Արուոյ Տէր Աստուածատինին եւ Տէր Անդրէանին....»

Եւ առ գեցան սա ի թալական Հոյոց Ա. ու Բայ ու Եր մաս Ա. Ա. (= 1571/2) ճաղկուած ձեննի: Անձեղայի ենու յուսուրեան զիս եւ ծաղին, զի կու մեր այս Եր. զի գոտնացնալ սուխի գեցան ի զուան ճամբանիկին յուսում նեղիմ յարագցեաց, զի տանին եռու զիսպու և զազուսն իրուաց, զանդ, զանչ եւ զեւեաւան զեւաց եւ բազում սիրա զարեաց, որ ոչ կառեն ըն զրադ արեանել....» (Խաղ. Յուցակ, էջ 1223—24):

— «Եւ թալական թեան հոյոց Ա. Ա. ի կարողիկոսուր տեսնան Խոչառուր եւ ի յառաջնորդուրեան այս նախանին Տէր Յավնանին եսու. ի Հրզմեցն»: (Հանդէս Ամսօրեայ, 1927, Յունիս, էջ 314):

Կիպրոսի Ա. Մակար վանքի պատկանուով Յայտառուրքի մը մաշած թերթէն, որ զրուած պիտի ըլլայ 1551—1571 թուակտներուն մէշտեղ:

— «Ղուկաս Վերաս եր(ամսօն) Խոչառուր կրդկան ենաւ եկամ ի Կիպրոս ի Այրումական Լավուայ բազան նասի եւ հաւանաց սր. Արուոյն, եւ ես չունեմ կամ վա (վասի) ամի ծալուն եւ յերիշելի ա-

րին կամ առաջնորդուրին իմաստով. վանական Խոչառ են, իսկ իրենց մեծաւոր՝ Կայտապետ:

Եմեալ մժմոնիւր եւ զիսակիւր ազգին Յուանիաց, ուժան նուեցան ի Տարսին ի զարտն առու նախապահն ի մէջ ծովը ի սամասն Անեւեկիոյ, եկան Պալիոն (Ըն) մի մէջ ի վեր մեր, զոր ինչ կոյց ի նուն եւ անելու ի հօտ եւ ի մօր զետան եւ այլ ուռ մեւել ի մօր առաջին մեզ մասուր ազգն ամիծեալ բաժնացուց. Աձ. կարծնական բարդութիւն, նոր վաղվագալիք, ով ու տաց եւ կորպացէ, ասացէ ամել և եղիցի:

... եղեւ մեզ (Ք)ամոնտը... (անձիրեանի): Խոյ յարման եկամ ի ծոց նախանօբիոսն Կարազ (Քարաբահ) ամս այս մինչ ի Լալեռաց բական եւ զուի... մինչ նախանակ ազգն մեր Հայոց որ եւ նոյն նախայ ի տանելին... Այ (Աստման) օնաց մնայն Տէր Սեփական նոր ժամանք զգեցոց զիզ եւ ծանկեան զերեան բարդութիւն ու Անեւեկ բական թէ մեւել են և զգեցոց զիս եւայն.... Երես արիս... յուսու երկուուրի, որ կուն ար. Անձնին:

(Կիպրոս Կ'ջի, գրեց Յակուրան, ապ. Նիկոլիս, 1903, էջ 109—110):

## ՃԲ.

### ԱԶԱՐԻՑ ԶՈՒԴԱՅԵՅԻ

**1584 Փետր. 5, ԳԵ. — ✠ 1601 Յունիս 2.**

Ազարիա Զուգայեցի, որ ծերունի Խաչատուր Բ. ի ընտրութեամբը յաջորդ Խաչանկուած էր. Կարսկիկոսացաւ 1584 Փետր. 25, ԳԵ. Ղևոնդանց տօնին օրը, իր միամամեայ Հասակին:

Ազարիայի գահակալութիւնը այսպէս յիշաւակուած է Սայ Մաշտոցին մէջ (էջ 136).

— «Ի նուան եւ անզիսն Ազարիա վրապաք, Զուգայեցի, Հանունն Այ. կրթիս, նասա յարու նայրաւառուր. Սոսայ, ի քիսա, հայոց Ա.Վ. (= 1584), ինքանարի թէ (25), առն Պարքի Դևենիկանց սառն մեծ բարեկենապահին»:

Ազարիա, որ սամալմամիր Զամաքիս ալ հզած է, պարոկահայ է ծագումով, Զուգայ քաղաքէն, Ճանաւ 1531 ին. Նոր անունը Պասա, մօրը՝ Արքանիանի, ունեցած է երկու կղզայր, Ազարիա, Փատու, Ալիսան, օրնոցմէ Ազարիային ողջ է 1600 ին(\*):

Թէ Զուգայեցի մը ի հնչակս կրտեկոյ կամուզիկոս կամական համարաբրական է առիկա, գիտաւոց Զուգայեցոց յարուսն ու Հաշատարմանթիւնը էջմիածնի Մայր Ամսունին կառեկի է երկու ենթագրութիւն ընկե, առաջին՝ թերեւ Ազարիա իրեւ գարզական եղանակուած եւ կրտեկոյ կամ կամ զիկոսարանին մէջ, վայեկելով Խաչատուր Բ. ի համակրանքն ու համանաւորութիւնը, նոյն իսկ իրեն որնական ու յաջորդ նշանակուելով, երկրորդ, թերեւ Ազարիայի ճնողքը Հայէոց անդամուած էրին Զուգայէն. օրովհան անեւեկի կամական վանական պահանձնելու, Պարսկատանէն, մահաւանդ Զուգայէն մկան հայեր էին, որ հաստա-

(\*) Ս. Յակոբյ Մատենադարանի թիւ 338 Զեռապետին յիշասականին:

ուած էին Օսմանեան պետութեան վաճառաշահ քաղաքներուն մէջ, նոյն իսկ Կ. Պալիս և Հաւլով, Սիրիոյ Մայրաքաղաքը, ամէնէն նշանաւոր հանդրուաններէն մէկն էր այն ատեններ, Կ. Պալիս Պարտատ և Պարտիաստան երկրորդ կարասնի ամժրուն քրայ, և հաւանական է որ Ազգարիս Հաւլէսի մէջ մեծաց և յարած ըլլայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Աստիք պարզ հեթաղութիւններ են սակայն, Դուղաբեցի մը Կիլիկիոյ ամժրուն վրայ բարձրացաւմի պարագան լուսարաններու համար:

Եւ առուցիւ կ'արքէր որ գիտանայինք Զուղացիին երիտասարդութիւնն և զարգացման պատճենիթիւնը, օրովհետեւ մզրդ գարու ամէնէն նշանաւոր կաթողիկոսներէն մէկն է Ազգարիս, որուն կիսանքը անդագրում գործունէութիւն մը նզամ է, իրին ուսուցիչ եւ իրին կաթողիկոս, փաքր Ասիօյ քաղաքականագէս ամէնէն աւելի խօսի ու անապահով մէկ չքչանին, ձեւալիններու առաջարկութեանց համանաքոյն:

Ազգարիս պայծառ զէմք մըն է Հայց, Եկեղեցոյ իրեն ժամանակակից նշանաւոր քարդապետներու շարքին, թէ՛ իր գիտութեամբ և թէ՛ իր կաթողիկոսական բազմահոգ գործունէութեամբ:

Ազգարիս, իրին ուսուցիչ բազմահոգ աշակերտներուն մը հասուցած է, սրբացմէ սակայն քիչերուն անունները հասած են մեզ:

Իր կարողութիւնը, իր արժանիքը բարձրուցիւր համար, ժամանակակից զրոյնին կը կոչին զայն՝ նայ բարտիստիք, տիեզերայոյն վաղացիք:

Ա. Յակոբի Մատենադարանին թիւ 1597 Հեռագիր Ստորագոսք գրուած է թիւ 1591 ին, «ի Հայրապետութեան Կիլիկից Տեսան Տէր Ազգարիս կաթողիկոսին և Եղանակի նայ բարտիստիքին, ուսուցիչ եւ Խաչատիս ամենայն հաւատացեալ Իշխանէից»:

Կ. Պալսի Ազգ. Մանգանի. թիւ 132 Հեռագիրը (Լուծմունք Մեկնութեան Խորայ, և այլն) գրուած է 1593 ին, «ի խողոյ նայ բարտիստիքին պատշաճացին սուբը Երևանինայ Ազգարիս կարողիկոսին Կիլիկիցը, յիշատակ իր ձնուղաց և ի վայելումն անձին իւրայ»:

Իր աշակերտն ու յաջորդը Ցովհաննէս Անժէպյին, Ա. Յակոբաց Մատենադարանին թիւ 516 (582) Հեռագրի (Մէկն. Հինգ գրցն Խոյսէսի) յիշատակարանին մէջ կ'ըսէ. «յիշէք ի մաքրավայլ յաջաւթես ձեր զնովեւու նայք մեր եւ զյուսաստին նույն մերց, զմերազիւուղ Հայոց զէմք Տէր Ազգարիս, ու յայնին զեզեւեալ կամ իմասս վիստիք ստառ, զօր տէք Աստուած պահեացէ պարագայց ամաւք ի պարձանու մեր և ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյց, և կը յիշատակ իր Երիք աշակերտներն ալ, Մատիրաւ, Վարդան և Կ. . . . . վարդապետները Անժէպյին, Խորք Ազգարիսի մահը պատմած ատեն, կ'ըսէ. «Եւ խաւար կալու գտունն Հայցը, որ պատիսի պայծառ արեգունիս զրկեցաք»:

Խակ Դարանացին զիտակ կուտայ թէ Ազգարիս իր կաթողիկոսաններէն հոգն ալ չշաղրեցաւ «ի բարութիւն, ի գասացութեանց ի բարձրելու»:

մուրին առակետազն և, եւ կ'արձանագրէ անոր աշակերտներէն ուսանց անունները, ա) «Եւ Յավաննենի վարդապետն Ամրափի, եւամիս եւ բարձրարարան հարոց տիեզերաց, որ յետ վախճանին Ազգարին սար յաջորդեաց գաթուուն», բ) «Ճէր Յավագագիս արքագագիս Զիթոնցից», որ շատ բարեսէք, բարեգործ և շնարար հոգերական մը եղած է, նշանակելի ծառայութիւններ ըրած է Արզում, բարեգ, բառաօգ, ուր Ակեղեցի և հոգեստան ալ շնորհը է 1607 ին և վախճանիր է Հուն 1608 ին եւ թաղումեր, իրեն ձևակերա Ակեղեցաց բակին մէջ, գ) Մենորոց Տաթեւացի, որ վաղաման եղած է, դ) Մկրտչէ վրդ, Խարքերգի, որ Խանուկ մահանաւուած է՝ չառ հրաց և հազարնդ ըլլայուն, որ դեռ ոզչ է եղեր Դարանացիի տանին, իր գաւառին մէջ, և այլ աշակերտք բառումք»:

Ազգարիսի ուսուցչական աշխատութիւններէն, ո՞րչափ ժանօթ է ինձ, մասցած է Քերականութեան Մեկնութիւն մը: Ա. Յակոբի Մատենադարանին թիւ 1219 Հեռագրին մէջ, «որ դժբախարար գնացած է ցեցերէ եւ չնչուած Մայր Յուցակին»՝ կայ եղեր այդ գործէն օրինակ մը, որու մասին Սաւալան հնուեալ տեղեկութիւնը կուտայ իր Յուցակին մէջ (Էջ 692).

— Ալղարիսի կաթ. Մեկնութիւն Քերականութեան Յալիննեն, Մուծութեայ Ֆիչէ առ զմեկնիս Քիրականնին, որք են նսայի վրդ, Դրիգոր Մագիստրոսու, Վարդան վրդ, Պետք վրդ, և Յուին, Ծործերցի: Դրեալ է բոլորագիծ ի վերաց բամբակաթզնոյ, առանց թուականի, զի պակասին թերթիք ի վերջ կուտայ:

Ազգարիս կ'երի թէ Տաղեր ալ գրած է, «ըսունցն երեքը կառանական հրատարակած է իր նար Ժողովածուի Դ. Պակին մէջ (Էջ 29-36): Տաղերուն Տաղրանունները կը կապէն Ազգարիս, իւ կառանականց իր ցանկերուն մէջ և Ազգային Զուղացիք ով չչգած է թէ՛ ո՞վ է տաղասաց Ազգարիսին:

Տրդատ եաս, Պալեան իր Հայ Առավելերին մէջ Հրատարակելով այդ երեք Տաղերը, առ զմատպութիւնը ըրտ է ատօնց հեղինակի մասին, «Հայ երդիք մը կամ տաղասաց: Հաւանականորէն կ'ապէր մզրդ գարուն մէջ: Ազգարիսի մասին մենք ասկէ աւելի ո՞րի է անօթութիւն շունինք»:

Կառանական զիտեկ կուտայ թէ «Տաղ Ագամայ մերկանալը օրինակած է 1647 ին գրուած Տաղարանէ մը: Տաղերէն զատ՝ Ազգարիսի անուն քանի մը Առաջնուածներու ալ հրատարակած է Կառանական իր Դ. Պակին մէջ, Հանելով «1642ին Նոր Զուղացաւ ապած Սազմոսի (Փամագրքի) մէջ», և նոյնացներով երկու Ազգարիսները, կազմած է Ազգարիս Զուղացիքի տաղերուն եւ առեղծուածներուն ցանկը (Էջ 73-74): Սառուգի կարելի է բան թէ այդ Տաղերն ու Առեղծուածները Կիլիկիոյ կիդ, Զուղացիքի Ազգարիսին են:

Երկու նպաստաւորնեաններ կան այդ մասին, նախ Չեռագրին Բուռականը (1647) եւ Առեղծուածներէն երկութիւն 1642 ին նոր Զուղա տպա-

գրուած Սաղմոսի մէջ գտնութիւնը, այսինքն՝ կարելի է ըսկէ թէ Տաղերը արդէն առածուած էին 1647 էն յառաջ, նկատի առնելով Աղարիայի մահուան թուականը (1601), և յետոյ նննգիան և միւս Տաղերուն միբչին տողերը, — « Աղարիա ևս անարժան ծառայ եմ Տեսոն և Կուտին, ով որ կարդայ կամ յուսանի, յիշմամբ առնեք զիսարձանի » — կը մասնեն թէ Տաղասացը ևկեղեցական մըն է, Զուզայեցի Աղարիան, որուն Առեղծուածները կը հրատարակուին նոր Զաղապի մէջ տպագրուած ֆամագրքին մէջ:

Այս Տաղերն ու Առեղծուածները հաւանական է որ Աղարիա գրած ըլլայ իր կաթողիկոսութիւնէն յառաջ, նկատի առնելով իր շատ բազմազարդ գործառնութիւնը, այսինքն՝ Երուսաղէմի պարտքրուու վճարման համար իր կաղմակերպած ազգային հանգանակութիւնը, և իր յարաբերութիւնը Հառմի հուտ Զատ զատ խօսինք այս երկու իրողութիւններու վրայ. բայց նախ փոքրիկ շեղում մը:

Աղարիա, ըստ Դարանաղցիի մէկ սուր դիտողութեան, կաթողիկոսանալէ յառաջ, խօստ հգնողական կեանք մը կ'արթէք, ո՞չ միայն ազրուածի կողմէն, այլ նաև հագուստի կայսուածի կողմէն. — « յառաջ քան զկաթողիկան ինիկն եւ կար ազանէ, և յետոյ թուլամորթիցաւ, փոխաց զգրծին և զգանին, կ'ըսէ Դարանաղցին: ձգնաւորական այս խօսութիւնը և ինքնազրկութիւնը անապատական վաղեմի կեանքէն ըստ երեւոյթներ են, և ամէնէն յառաջ կ'արթէ յիշել Յովհաննէս Մկրտչին կերածն ու հագածը: Մազէ շատիկ հագնողներ շատ էին բովանդակ բրատոննեայ աշխարհի մէջ, և այ կողմէն ալ մեր եկեղեցոյ պատութեան մէջ նշանաւոր է Յովհաննէն Յանիկին: Քոյքանուենք, Քոյզպեսին անպատական մէջ աշխարհի կողմէն կամ կամ մը կ'արթէ գամելով: որ կը պահանձէ թ. Յակոբի Գունդատան մէջ: Շատ հաւանական է որ Զուզայեցին ալ հագածը այսուիս ազատ մը կամ կարայ մը եղած ըլլայ: որդէս զի մարմինը չմեղկանայ քունոսի, այլ ըլլայ շարքաշ և տոկուն:

Դարանաղցին քննագաւառութիւնները, ուզդուած իրեն մամանակակից գէմքրուու, միշտ արդար չեն, երբեմն ալ խորը չունին առանքը, և մեզ կը թուի թէ այս վերջին տեսակէն է Զուզայեցի կաթողիկոսին ուղղուածը: Դարանաղցին, որ Զորուէին կենցացը ձաղրէի կը գտնէր, Զուզայեցիին շատ կը տեսնէ թերես արտաքին փոփոխութիւն մը անոր հագուստին կապուատին մէջ, քեւեն կ'ըսենք, որովհետ բարօպագիտուէն իւելքի մաքի հակառակ է մտածել որ իր ամբողջ կեանքը անտոննեան ձգնութեան մը խրատամբերութիւններով կրթած հոգեօրական մը,

մէկ օրէն միւսը, կաթողիկոս եղայ ըսկելով թուալամորթաւթիւն տար ինքզինքը<sup>(\*)</sup>: Այն առեն Աղարիա պէտք էր ուսուցչութիւնն ալ թողած ըլլար, որովհետ նախիկն վարժակետներուն իւրական առաքինութիւններէն մէկն էր ո՞չ միայն աշակերտին բան սորվեցնել, այլ մանաւանդ իր անձին օրինակով շինել անոնց նկարագրիրը: Հետեարար մեզ շատ բանաւոր կը թուի կարծէլ թէ Զուզայեցին ներքնապէս պահեց իր խոսակրօնութիւնը, ճիշջ Օձնեցին պէս, որպէս զի կարող ըլլար իր արտաքին ձեւերը պատշաճեցնել իր բարձր պաշտօնին պահանջներուն Ասիկան, այժմեան բացարարութեամբ, զատ կենցուպագիտիական խնդիր մըն է: Եւ Դարանաղցիին քընն այս քանի մը զիսուութիւններու ուղեցինք պաշտպանել Զուզայեցին, ըսկերու համար թէ ամեննեն թոււլամորթ չէ եղած ան իր պատասխառութիւններուն մէջ:

Անցնինք այժմ իր գործունէութիւններուն:  
(Ծարանակիլի)

Բ. Ե.

#### ԱՏԱՐ. ԶԱԳՈՐԾ ԱՇԱԿԵՐԸ

Պարտասած է Յիսուս, աշկերտ ատաղձապուծ. Նա մելքի կը նեշի տապացին իր ծանր, Նուրը կատար ծածկուած իր մեջը խնարանին թուած առ ազանէ: Եւ Դարանաղցիին գէմ այս քանի մը զիսուութիւններու ուղեցինք պաշտպանել Զուզայեցին, ըսկերու համար թէ ամեննեն թոււլամորթ չէ եղած ան իր պատասխառութիւններուն մէջ:

Դուն, Խ'յան Մարտիրոս յանձնակին խորհ Կանդրապանս քի արգանցի մէջ կրած ևս Զան՝ որ աշխարհ բոլոր կ'ապահու յուսադից, Մարդ քի սանաւուած աշխարհի քանաքերէն Պարանէր Դրիգուր կը հագնէր կաշիմէ ազատ մը, ներքին կողմէ երկաթէ գամելով: որ կը պահանձէ թ. Յակոբի Գունդատան մէջ: Շատ հաւանական է որ Զուզայեցիին ալ հագածը այսուիս ազատ մը կամ կարայ մը եղած ըլլայ: որդէս զի մարմինը չմեղկանայ քունոսի, այլ ըլլայ շարքաշ և տոկուն:

Անոյշ մը կը մասիս, հիացած կը մնաս: Ինչպիսի այն օրն ուր ուկուով, խունկով, զիտուույ եկած մողեր զայրիամբ զլուիս խնարանին:

Այլ յանձնարծ սեւեռուն կը մնայ յու որդիոց, Ճապիկերով պատին վրայ կը զծէ ան Մեծ Խաչեցելոյն սուերն, ո՛ Դողլորա:

Թարգի.

#### ՄԵԽՄՐՊՊ ՆՈԽՊԱՐԵԱՆ

(\*) Ազարիա ինքզինք կը ներկայացնէ « ի կորզի ուուրի Անտոնիո, (Bibl. Vaticanae, էջ 204):



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԵՐ ՔԱՐԴՄԱՆԻՉՉՆԵՐՈՒՆ

ԿԱՐՈՅԵՑԵԱԼ ԵԲՐԱՅԱԳԻՑՈՒԹԻՒՆԻ

Ա.

Հանդէս Ամսօրեացի՝ 1927 տարւոյն վերջը հրատարակած Յորելինական միացեալ թիւերուն մէջ (Նոյ.-Դեկտ.) առաջին տեղը տրուած է յայտնի հայոցէտ Բ. Macleerի յօդուածին՝ որ հասեալ վերնագիրը կը կրէ. «Հայ բարզմանիցները օգտուած են արդիօք երրայական բնագիրնե»։ Աւուցչապետը նկատի առած է այն հարցը՝ զոր ողբացեալ Արշակ Տէր Միքէլեան յուղած էր ասկէ տարիներ առաջ, 1892ին, իր Die Armenische Kirche գերմանիկէն զործին 35 էջին նկրքե զրած ծանօթազրութեամբը։ Հեղինակը քանի մը նշաններ ցոյց տալով ջանացած է հաստատել թէ մեր նախնիք օգտուած էին երրայական բնագիրնեն, չին կտակարանի թարգմանութեան մէջ։ Այդ թուականէն ասդին՝ եթէ չենք սիսալիք՝ ոչ ոք զրազած է մեր մէջ բանասիրական նոյն հարցով, ոչ է իսկ Տէր Միքէլեան, զամանի դժբախտաբար կարճ եղած է իր կեանքը։ Եւրոպացի բանակրներն ալ քննութեան առարկայ չեն ըրած զայն։ Այս անդամ Ֆրանսացի Ռևուցչապետը աչքէ անցընելով Տէր Միքէլեանի ցոյցումները՝ մի առ մի կը հերքէ զանոնք իր մասնաւոր յօդուածին մէջ։

Որպէս զի անձանօթ չման մեր լնութեցողները այդ հետաքրքրական հարցին վիրաբերող երեսյթներւուն, աւելորդ չենք համարիք մէջ րիբել զանոնք, ինչպէս ըրած է արդէն քննադատը։ Տէր Միքէլեան՝ իրարի իր անձնական հետազոտութիւններու արդինքը՝ զիտել առաւած է նշաններ մը, որոնք, ինչպէս պիտի անմոնի, չա՛տ չուտով տարած են զինքը վճռական համոզումի մը։ Ան կը յայտարարէ անվերապահորէն՝ թէ չին կտակարանի վիրքերը զրժուար է որ թարգմանուած ըլլան Եօթանասնից (յոյն) բնագիրնեն եթէ մոտագիր ըլլանք Հայերէն Աստուածաշունչի բարձաթիւ առանձնայատկութիւններուն՝ որոնց-

մով կարելի է գուշակել՝ թէ մեր թարգմանիները Պէտքոյի (ասորական) հետ Եօթանասնիցն աչքի առջև ունենալով հանգերձ երրայական քնազիրին ալ օգտուած ևն անհակած։

Առա իր քանի մը փաստերը.

1. Շատ մը անուններ (յատուկ) Հայերէնի մէջ տարբեր են Եօթանասնիցն։

2. Եօթանասնիցի ընդմիջարկումները չեկան Հայերէնին մէջ (Ճ՛ո Ծննդոց և գրւուն 2 համարը):

3. Ա. Թագ. Ժդ 1 համարը կը պակսի Եօթանասնիցն մէջ, բայց Հայերէնը բառացի ունի զայն, ինչպէս որ կը գտնուի Մատրական (երրայական) բնագիրին մէջ։ — «Արզի տարելոր Սուտուղ ի թազաւորել իւրում, եւ երկուս ամս թազաւորեաց ի վերայ իսրայելի»։

4. Ա., Թագ. Ժ, Յ համարին մէջ Եօթանասնիցն ու Մատրականը ունին «Թարգմանութեան», իսկ Հայերէնը կը զրէ «Դերովրա», որ աւելի ճիշգ է։

5. Հայը յաճախ բոլորովին տարրեր վերնագիրներ ունի Սաղմոսներու, այսպէս Ա. Սաղմոսը երկուքի բաժնուած է, և Յին վրայ զրուած է «անվերնագիր ի յերրայիցւոց»։

6. Երգ երգոցի մէջ, ըստ հայ թարգմանութեան, խօսող անձերը հարան ու փեսայ կը կոչուին, ու զիրքին վերջն ալ կը գտնուի հատուած մը «յայլմէ տաւչութենէ» թարգմանուած։

7. Հայերէնին մէջ Երեմիայի բոլոր զրուիներն ու համարները համաձայն են Մատրական բնագիրին և ոչ թէ Եօթանասնիցն։

8. Եսթերի Ա. զլուխէն առաջ՝ Հայերէնին մէջ կը կարգանք ԺԱ. և ԺԲ. զլուխները։

9. Եօթանասնիցի «Սարաւովթ» յին տեղ Հայերէնը ունի «տէր զօրութեանց» (Ա. Թագ. Ա., Յ. Եսայի, Ա., Զ. Զ. Յ. և Ալն.։)

10. Ա. Թագ. Ժդ 1 համարին մէջ Հայերէնը կիրա կը թարգմանէ Երրայականին և Եօթանասնիցին Աշուշանց։

11. Այն բառերը՝ որոնք նոյն են Հայերէն և երրայեցերէն լեզուներուն մէջ՝ Հայը չի թարգմաներ զանոնք. զոր օր. Երգ երգոց, Բ 1, Ե 13. Բ. Մնաց. Դ 5 շոշան-

բառը, եւ Յոր( \* ), իջ 8. Ավսէէ, ժդ 12, և այլն ծար բառը, նաև Ա. Թագ. իւ 29, ծարեալ ի ծարի բառերը:

12. Յեսուայ զիրքին մէջ (Բ. 3) Հայկիրէնը ունի նամար. երրայիցոց (ԺԱ. 31) եւ Յակոբայ թուղթերուն մէջ (Բ. 25) Բախար, իսկ Մատթէոսի մէջ (Ա. 5) Հրամար:

Տէր Միքէլեանի այս ցուցումները սահայն որոնց պաշտոն տրուած է հաստատել թէ հայկիրէն Աստուածաշռնչը շատ բան կը պարափ երրայական բնագիրլն, կամ թէ մէր թարգմանիչները ուղղակի օգտուած են անկէ, պէտք է լսել թէ արօրին ետևէն լծու ած եղներ են միայն, որոնց գործը չէ հերկէլ Աստուածաշռնչի հայ թարգմանութեան պաշտին անձանօթ կողմերը, եւ Ռւսուցչոպետը իրենց արմէքին վերածած է այդ ամէնը՝ կարուեկ և հեղինակաւոր առարկութիւններով, առանց իսկ մատնանշելու կամ Ասորական բնագիրէն և կամ Եօթանասնիցէն տարբերող այլ և այլ Codex ներու գերը, լուսարանութեան կարօտ մէկ իրկու կէտերու համար:

Տէր Միքէլեանի այս հապճեպ նկատողութիւններուն մէջէն՝ հազիւ թէ կրնան նշանակութիւն մը ունենալ 5 եւ 7 ցուցումները, զորս կարելի է սակայն մէկնել առանց երրայական բնագիրի մը օժանդակութեանը, քանի որ տակաւին քննութեան առարկայ չեն եղած զանազան Codex-ներու բոլոր պէսպիսութիւնները:

Մենք չենք զարմանար Տէր Միքէլեանի այս փութիուութեան մասին, զիտնալով որ ան ո՞չ թէ հին հայ թարգմանիչներուն ձրիարար կ'ընծայէ երրայիցերէնի զիտութիւնը, այլ և Գրիգոր Տղայի կը չնորհէ նոյն նմուռութիւնը, միամտօրէն համեցնելով կաթողիկոսին մէկ առածաւոր խօսքէն՝ զոր ան կ'ուղէ առ Գրիգոր Տուտեսրի զրած թուղթին մէջ սո բառերով. « կարծելով թէ մեք երրայիցերէն ոչ զիտեմք » (Նամականի, էջ 28. Վենետիկ), բնքնին յայտնի է սակայն թէ Կաթողիկոսը կը կիրարէէ բացատրութեան այն ձեւ՝ որպէս իրթին համարուած կամ զադանի հանգամանք ունեցող իրի մը կ'ակնարկաւէր

(\*) Գերմանեւէն զործին մէջ սպրանտ սպազմական սխալը ուղղած են, Johanneseը փոխելով Յօհի.

ժամանակին, ինչ որ սովորութիւն է ըսկէ նուի մեր օրերուն. C'est de l'hébreu pour moi, կամ՝ Je crains que cela ne soit de l'hébreu pour vous, et je m'explique: Խնդիրն ալ շատ պարզ էր. Գրիգոր Տղայ ըսկէ չէր ուզիր թէ՝ երրայիցերէն զիտէ, այլ իր հայկականորդին կողմէ՝ Մովսէսի (քերթողահօր) անունով տարփողուած գրուածքէն (Տե՛ս Գրիգոր թղթոց, էջ 22-28) չէր կրնար խարուել, վասնզի սուտանուն գործ մըն էր ան, ուստի զայտնից մը չէր իրեն համար այդ կեղծիքը (?), ևայլն:

Հայկիրէն Աստուածաշռնչի և Եօթանասնիցի միջն տեղ տեղ երկացող տարրերութիւնները՝ հարեւանցի ակնարկով մը միայն զիտուելով խորհիլ տուած է ուրիշներու ալ՝ (\*) թէ մէր նախնիք պէտք է օգտուած լըլան երրայական Բնագիրէն։ Բայց այս եօթագրութիւնը զուրկ է ամէն հաւանականութենէ։ Հայդէտ Ռւսուցչապեալ բարձր տալու համար՝ թէ շին կտակարանի հայերէն թարգմանութեան մէջ բազմաթիւ երրայական բառեր՝ չնորհիւ Եօթանասնիցին՝ անցած են մեզի իրենց հումեւ օտարութիւնով (\*\*), անոնցմէ 30 իչ չափ կը յիշէ իր յօդուածին մէջ, անզամ մըն ալ եղծելով Տէր Միքէլեանի կարծիքը, ըստ որւում Ազոտէնի ի կիրա թարգմանութիւլ (աւելցնենք՝ քանի մը անգումներով), կամ Տաճառնի տէր զօրութեանց թարգմանութիւլ (ըսհնք՝ թէ թիւով շատ աւելի է Սարաւոյիքը) մէր թարգմանիչներուն երրայիցիսութեան հաւասարիք մը չեն։ Եօթանասնիցով հարացուած ուրիշ քանի մը երրայիցերէն բառերու հայերէնն ալ՝ զորս յետոյ պիտի նշանակենք՝ չեն կրնար նըրպաստ մը բնձեսել Տէր Միքէլեանի վարկածներուն։


(\*) Մեծանուն Գերազանչեան ալ՝ Պարոյ Հայոց եայեւեն Աստուածաւնչի պատաստութեան օհերուն, 1894 ին, նոյն միտքը բերանցի լոյսն է ինձիք թէ մեր Թարգմանիչները երրայիցերէն ալ զիտէնի, եւալին. բայց իմ խօսան կարծիք եղած եւ այն անելին՝ թէ մեր Թարգմանիչներն ասոյզ» կամ «Ամսարիտ» օրմանիք մնանիւ՝ ուրեմ բառացին վրայ կընալին նուննուած ըրբ նուե բնագրական ցլույ եներ, անմատ չեր լուսաբանել կատեւոր, ասորական բնագրին բանին ալ չանենելով անուելու։

(\*\*) Այս մասին, տեսակցութեան մը առ իրով, 1920 ին, պատի ունեցած են Պ. Մազերի եւս յայտնելու իմ անձնական կարծիք։

Գ. F. Macler, ապացուցելէ յետոյ՝ թէ այսերէն Հին Կոտակարանը երբայականէն չէ թարգմանուած, և թէ ո՞ր և է ժամանակ մեր թարգմանիչները չեն օգտուած անկէ, հետեւեալ տեսութեամբ կը վիրջացնէ իր յօդուածը. «Ե. զարու Հայ թարգմանիչները կրնային երբայցերէն գիտնալու բայց որպէսզի կարելի ըլլայ հայերէն և երբայցերէն Աստուածաշռւնչներու միջն ձեռք բերել մերձաւորումներ՝ որոնք չեն բացատրուիր յօյն բնագիրով, հարկ է երկարաշունչ և աւելի կատարեալ աշխա-

տանք մը ընել, ինչ որ պարզ յօդուածի մը սահմանէն գուրս կը մնայ: Կարեւոր է առ այդ՝ ուսումնասիրել ժ՛Դ-Ժ՛Բ գարերու մրջոցին զրի տանուած այն քանի մը Զեռագիրները՝ որոնք երբայական հասարակ կամ յատուկ անուններու բացատրութիւնները կուտան հայերէնով, թէև մեծ բան մը չակնկալուիր այդ ամէնէն. ու կը մնայ սա ստոյգ իրողութիւնը՝ թէ հայերէն Հին Կոտակարանը Յունարէնին վրայէն է թարգմանուած և ո՛չ երբայական բնագիրէն ու:

Ե. Ե. Դ.



## ՄԱՆԴԱԿՈՒՆԻՒԻ ՃԱՌԵՐՈՒ ՄԵԿ ՆՈՐ ԶԵՐԱԳԻՐԸ

(Յար. Աթոն, Գ. Տարի Թիւ 1. 27 էջ)

### Տպագիրը

- » — » 36-37 գգուանք գգուանաց, և սփոփումն փափկութեանց
- » 180 » 3 ի մահուանէ ի կեանս ընկեցաւ
- » — » 6 ի հոգոց յանհողութիւն
- » — » 9 Սրդ զու այդիւ մխիթարեամ ամենայնիւ
- » — » 17 Ահա ամենայն թագաւորք
- » — » 34 զի սուզ անյուսից է
- » — » 38-39 սաղմոսիւք և օրհնութեամբք ի կեանս յղարկեմք
- » 181 » 9 արգիլէք զլաւականս
- » = » 11 արհամարհեցէք զեղանակամարս լալականաց
- » — » 14 յանօրէն մոլորութիւնէն
- » — » 15 ի հեթանոսական ամրարշութիւնէն
- » — » 16-17 և զանյոյս մթերս
- » — » 19-20 և հանդստեան և երկնից արքայութեան արժանի լիցուք

### Զեռագիրը

- գգուանք գգուանաց և փափառմն փափկութեան
- ի մահուանէ ի կեանս դարձաւ Ունչ առը ունչ՝ ի արտմութիւնէ յուրախութիւն
- արդ և զու այս ամենայն յուսովքս մխիթարեամք
- ահա ամենայն թագաւորք և թագուհիք
- զի սուզ մորոսաց է և անհաւատից սաղմոսիւք և աւրհնութեամբ յուղարկեմք
- անարգեցէք զձայնարկուս
- արհամարհեցէք զեղամայրու(+) լալականաց
- յանօրէն ի զիւական մոլեգնութիւնէ ի հեթանոսական յամբորիչտ սովորութիւնէն. Կառելշնէ, և մաքրեցէք զաղճատանս հրէական տըխութեանց.
- զանյուսաւի թախծանացն մթերս Զանչ այ ոռչէրը բայց իւ արտանանչ. և յուզարկեցուք սաղմոսիւք և հոգեւոր աւրհնութեամբք, զի սստեցեալ պատուով, և անդը երթեալ զփափակելիսն ժառանգեցուք, և խոստացեալ բարութեամբն փափկասցուք ի Քս. Յս. ի տէր,

- որում վառք յաւիտեանս յաւիտեանից . ամէն :
- Յէսուսիաբն . Աղորմեա թս . Ած . Սարգսի և Հայրապետին մեզաւոր և անպիտան քահանայի և ձնողաց իւրոց և յիշողացդ :
- |   |  |
|---|--|
| Ճառ. Ին   | Ճառ. ԺԲ  |
| » 187 » 2 Յաղագս պէսսպէս առաքինութեան<br>խրատու               | Յաղագս պէսսպէս առաքինութեանց<br>իւրատ հարցն .          |
| » — » 8 գերութիւնն հալուծէ                                    | գերութիւնն որ ի սատանայէ հա-<br>լուծէ                  |
| » — » 15 յարաժամ  | Կ'աւելցնէ . յաղօթս կալ յամենայն<br>ժամ                 |
| » — » 20 գործաձեռն  | ձեռապործ   |
| » — » 28 ի զարգարմանէ հանդերձից                               | ի զարգարմանէ հանդերձից                                 |
| » 188 » 1 մի՞ յուղելոյ զընկերն և անզոս-<br>նելոյ զընկերն      | մի՞ յատելոյ զընկերն և յանզոս-<br>նելոյ                 |
| » — » 2-3 նախատել ընդ ընկերին , և ի չա-<br>րախօսել՝ զընկերն : | նախանձելն ընդ ընկերին , և ի չա-<br>րախօսելն զընկերէն : |
| » — » 8 և յամելոյն զիւր կամսն                                 | և յամենելոյն զիւր կամսն                                |
- Չեռազիր ԺԲ
- |  |  |
|--|--|
| » — » 22 Յաղագս պէսպէս ախտից                                 | Վասն որշողութեամ խորհրդոց՝ առ<br>որս կամին ապրիլ յաշխարհի<br>յաղաց ախտից   |
| » — » 23 զամենայն զզայութիւնս ողջ ունե-<br>լով . . .         | զամենայն իսկ զզայունսն ողջ պա-<br>հելով նմա . . .  |
| » 189 » 4 մերկ ի սուրբ պատուիրանէն                           | մերկ ի սուրբ պատումանէն  |
| » — » 10-11 պոռնկութիւն՝ ցանկութիւն . . .                    | պոռնկութիւն է ցանկութիւն . . .   |
| » — » 12 գեղումն   | յագել քնոյ   |
| » — » 16-17 անրարի ստութիւն                                  | գրտղումն   |
| » — » 18 ոչ հայել ի պատուիրանս Աստուծոյ                      | անրարեմտութիւն   |
| » — » 21-22 բարկութիւնէ հարսահաբել զիւր<br>կամսն             | ոչ բառնալով զթշնամանս ուրուք<br>լիւրան   |
| » — » 23 նեղկութիւն  | նեղկութիւն   |
| » — » 24 ոչ բառնալ զթշնամանս մտօք                            | ոչ բառնալով զթշնամանս ուրուք<br>Զառնէ  |
| » — » 25-27 տալ և առնուր Զի՞նչէնախանձ . . .                  | Զի՞նչ փառասիրութիւն . փառասի-<br>րութիւն է . . .   |
| » — » 27-28 Զի՞նչ փառասիրութիւն . փառա-<br>սիրութիւն է . . . | դամաս անդիտութեան  |
| » — » 30 զկամս յանդգնութեան                                  | և կարծել զինքն զիտուն զու  |
| » — » 35 և կարծել զինքն իմաստուն զու                         | Զառնէ այս վէրջէն բառերը , բայց իս-<br>տայ մէշէ բառական երիար հագուստը հը-<br>սկը ոք կամի Աստուծոյ հաճոյ լի-<br>նել և թս . ի սիրելի , յառաջ քան |
| » — » 38-39 և անկաւ ընդ ոտիւք մահուն :                       | զամենայն զիտնարհութիւն և ըգ-<br>համբերութիւն եւ զերկայնմտու-   |

թիւն ստանալ պարտի ի պատահել  
նեղութեան . . . և վէջացնէ առ պո-  
չերով. ողի մհծ համարձակութիւն  
ընկալցի յաւուրն դատաստանի ա-  
ռաջի Ա.յ. մերոյ՝ որում փառք յա-  
ւիտեանս ամէն: (Հմմտ. Վարք  
Հարանց Բ էջ 572-573 Վենետիկ.)  
Յէլաբակարան. Քա. Ա.ծ. քո ծնաւղին  
բարեխօսութեամբ ողորմեաց Սարգ-  
սի հոգւոյն և իւր աշակերտին և  
յիշողացզ:

## Ճառ. 19.

- » 190 » 31 առ ուռութս . . . գերեսցիս
- » 191 » 18 ի յակին և ի պարանոցի կախել
- » — » 28 եթէ էր պարապ զմասանց մարմ-  
նոյ զուսութսն
- » — » 30 պարասնք զիւթի . . .
- » 192 » 6 պահարան և ուռութսն
- » — » 32-35 որպէս զսուս մարգարէքն՝ որ թիւ-  
րէին զժողովուրդն առ ուղեւալ-  
սըն մարգարէիցն, և զրանն ճըշ-  
մարտութեանն դադարեցուցանէին, տութեան  
և զմոլորութիւնն դադարեցուցա-  
նէին:
- » 193 » 11 Այլ և առաջնորդացն եւս միս ի  
մարմին խղեսցին . . .
- » — » 13 և ոչ մի արտաքին զիւթիւքն վա-  
րին . . .
- » — » 15-16 և ժաժմուկս մտացածին բանից . . .  
և զանուան որ ոչ լսի ի պատ-  
ուիրանս . . .
- » — » 17 ընդ նոսինն արկանին
- » — » 20 ի պահարանս զիւթաց զրել
- » — » 35 երեւի կիւսոս
- » — » 37 ի մազարախութիւնս
- » — » 38 ի հեղահարութիւնս
- » — » 39 ի հմայութիւնս
- » 194 » 2-3 յոզոտնահմայս, ի գեղահմայս
- » — » 5 ի շարժմակո բժժանաց
- » 195 » 7 զրովք և յուսթովք վարիցէ
- » — » 35 զայն առեալ վերացուցանին

## Ճառ. 1

առ յուսութս . . . զեկերեսցիս  
յանձին և ի պարանոցի կախել  
եթէ էր պարապմաց (.) (Յուստիշտէ  
Քըոյնոյն քրչէն) մարմույ զուսութսն . . .  
պարանք զիւթի . . .  
պահարան և ուլունս . . .

որպէս զսուս մարգարէսն՝ որ թիւ-  
րէին զժողովուրդն առ ուղեւալք  
մարգարէիւքն, որ է զրանն ճըշ-  
մարտութեանն դադարեցուցանէին,  
թիւնն դադարեցուցանէին.

Այլ և առաջնորդացն եւս եթէ միս  
ինչ ի մարմին հատանիցի . . .  
և ոչ միայն արտաքին զիւթաւքն  
վարին . . .

և ժաժմակս մտածին բանից . . .  
և զանուանս որ ոչ լսի ի պատուի-  
րանս . . .

ընդ նոսին ի համար արկանեն  
ի պահարանս զիւթաց զրել  
և ի զեւս  
ի Յառախաւաւութիւնս (!)  
ի հեղահարութիւնս  
ի հրահմայութիւնս  
յուզմինահմայս (\*), ի զիզահմայս (.)  
ի ժաժմակս բժժանաց  
զրով և յուսթովք վարեսցի  
զայն առաւել վերացուցանին

(\*) Սոյն բառին ովզն կամ ոզման ձեւը՝ որ Եփրեմի մօտ ալ (Մեկն. Արարածոց Ա. էջ 220, Վե-  
նետիկ) գործածուած է «քեզան» նշանակութեամբ՝ իրաւոնք կուտայ միզի՝ չնչելու ողսն սխալագիր  
բառը, որ Առաջոն Բառարանէն ալ վարուած կ'երեի:

## ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի Ս. ԳԻՐՍ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Քննեցիք զգիր: ՅՀ. 5,39

## Գ

Ի ԼԵԶՈՒՄ ԽՈՍՔԻ

## 1.

Քրիստոնէութիւնն ի սկզբանէ, յորմէ հետէ իւր յաղթական ընթացքն յաշխարհս սկսաւ, գունակ գունակ կերպարանօք եւ պէսպէս հանգամանօք յերեւան եկաւ, եւ իւր քարոզական գործոնութիւնն, տարածական ոյժն եւ ձգիչ ազդեցութիւնն բազմադիմք նշանօք, արուեստիւք եւ զօրութեամբք կատարեց:

Քրիստոնէական կրօնքն վերագանցաւպէս անհատական՝ առանձնական է, բայց միանգամայն եւ առաւելազանց պայմանաւտիեզերական է, անհաղորդական այլում, սակայն համանգամայն բովանդակիչ ամենային: Նա քարոզէր զնաւասս ի մի Աստուած, Հայրն Ամենակալ, եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Արդին Աստուածոյ, վարկիչն ամենայն մարդկան, որ եկն քարոզել զԱւետարանն Աստուածոյ եւ զարքայութիւնն նորա յերկրիս, եւ ի յարութիւնն եւ ի կեանս յաւետենականու: Նա է Աւետարանն Քրիստեան եւ բժշկութեան<sup>(1)</sup>, եւ նոր արարածոց. Նա աւետարանն է սիրոյ, ողորմածութեան եւ օգնականութեան. Նա կրօնքն է բարոյական ջերմեռանդն զօնութեան եւ սրբութեան, կը բօնքն Հոգւոյ եւ Զօրութեանց. Նա կրօնքն է ինքնօրէն հրամանատու ճոխութեան եւ անպայման հնագանգութեան, հանդերձ այնու կրօնքն բանաւորութեան եւ լուսաւոր գիտութեան եւ պայման բնագանցական իմացութեանց, նոյն իսկ «խօսուն պաշտօննա»<sup>(2)</sup> եւ կրօնք հոգեւոր խօրհրդոց. Հուսկ ուրիմն նա Աստուածեղէն յայտնութիւն է եւ լրումն համաշխարհական պատմութեան ազգի մարդկան:

Քրիստոնէութիւնն, որպէս ի վեր անդք ասացաւ, իւր առաքելութեան եւ քարո-

զութեան գործով յանդիման կացուցան զինքն, յայլոց միջի, իրբիւ կրօնք «Հոգւոյ եւ զօրութեանց»:

«Եւ ես, զրէ Պաւլոս Առաքեալ առ Կորնթացիս (1 Կր 2,4—4), «ոտկարութեամբ եւ երկիւզիւ եւ զորութեամբ բազմաւ հղէ առ ձեզ, եւ բանն իմ եւ քարոզութիւնն պատմիք բանիւք իմուսութեան, այլ արդեամբք Հոգւոյն եւ զօրութեամբ», այդույուց ամէ զամենայն հրաշագործութիւնն (մարտն ընդդէմ գիւտաց եւ զգեսպէս նշանն եւ սքանչելիս), որք ի ձեռն Առաքելոց լինէին. եւ զարձեալ այլուր (Եր 2,3—4) համառօտիւք բովանդակէ զամենայն ինչ՝ որ ըստ այսմ օրինակի կատարեցաւ՝ այսպէս. «Փրկութիւնն սկիզբն ա՛ռ խօսելոյ [այսինքն՝ աւետարանելոյ] ի Տեսունէ, եւ ի ձեռն այնոցիկ որ լուանն ի մեզ հաստատեցաւ. վկայեալ յԱստուածոյ նշանօք եւ արուեստիւք եւ պէսպէս զօրութեամբք եւ մասամբք [ճշգիւ՝ բաժանմամբք կամ բաշխմամբք] Հոգւոյն Արրոյ ըստ իւրոց կամաց»:

Ըստ այսմ Ս. Հոգւոյն ազգեցութիւնք բազմակերպ են եւ յոզնաթիւ, եւ յերեւան գան ի յայտնութիւնս, ի տիսիլս, յանուրդս, ի յափշտակութիւնէ մտաց, ի վիճակի զարմացման, ի մարգարէութիւնս, յազդի ազգի սքանչելագործութիւնս եւ յայլ նըմանօրինակ զարմանալի նորանշան երեւոյթս եւ գործս: — Այսպիսի երեւոյթք եւ ցուցակութիւնք էին պարզեւք կամ չնորհք Հոգւոյն Արրոյ, յորոց զումանս, անշուշտ ո՛չ զամենեսին՝ այլ զգիխաւորս եւ զկարեւորագոյնս եւեթ, կը յիշատակէ Պաւլոս Առաքեալ ի թղթին առ կորնթացիս, ուր կը խօսի վասն հոգեւորացն (1 Կր 12,4—11), այսպէս.

«Թէպէտ եւ բաւինք [այսինքն՝ իտիր, տարրեկութիւն] չնորհաց են, այլ Հոգի նոյն է: Եթէ բաժինք պաշտամանց [իմանառայութեանց, սպասաւորութեանց] են, այլ տէր նոյն է: Եթէ բաժինք յաջորդութեանց [այսինքն՝ ազգեցութիւնք եւ արգիւնք սքանչելեցց] են, այլ Աստուած նոյն է՝ որ յաջողէ զամենայն յամենայնի: Բայց իւրաքանչիւր ումեք առեւուլ է յայտնութիւն Հոգւոյն առ իւրաքանչիւր օգուտ, Ումեմն ի Հոգւոյն առեւեալ է բան իմաստորեամ, այլում՝ բան զիտորեամ ըստ նմին Հոգւոյ, միւսումն հաւասի նովին Հոգւով,

(1) Տե՛ս Արք 1928, էջ 332 հա.

(2) Հա 12,1:

այլում՝ չնորհք թժկորեանց՝ նովին Հոգ-  
ոսվ, այլում՝ յաջողուրինից զօրուրեանց, այ-  
լում՝ մարզակորին, այլում՝ ընտուրին  
հորոց, այլում՝ ԱԶԳԲ ԼԵԶՈՒԱՅ, այլում՝  
ԹԱՐԴՎԱՆՈՒԹԻՒՆԻՆ ԼԵԶՈՒԱՅ: Այլ զայս  
ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի, և  
բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի: —  
Եւ խոնարհագոյն եւս յաւելու:

«Եւ զարս եղն Աստուած յեկեղեցւոջ՝  
արս են. նախ զատակեար, երկրորդ զեաւ-  
զարկ, երրորդ զիտադալու, ապա զօրու-  
րինս, ապա չնորհս թժկորեանց, օգնու-  
րինս, վարիչս, ԱԶԳԱ ԼԵԶՈՒԱՅ, բարզա-  
նուրինս լեզուաց, Միթէ ամենեքին առափ-  
եալի լիեն, միթէ ամենեքին մարզակի ի-  
շեն, միթէ ամենեքին վարդապէս լիեն,  
միթէ ամենեքին զօրուրինից լիեն, միթէ  
ամենեքին շնորհս թժկորեան ունիցին, մի-  
թէ ամենեքին Ի ԼԵԶՈՒԱՅ ԽՈՍԽՑԻՆ, միթէ  
ամենեքին բարզանիցին:»

Յայտ իսկ է թէ ի վերոյիշեալ չնորհաց  
Ո. Հոգւոյն առաւել նշանաւոր և յարգի  
էին, ի պէտք չինութեան և հոգեւոր կըր-  
թութեան հկեղեցւոյ, մանաւորապէս շը-  
նորհք Աստաքելութեան, Մարզարէութեան  
և Վարգապէտութեան:

Զառաշին տեղին ունին Առավալի, որք  
բուն աւետարանիչքն էին, չքնոլ քարո-  
ղիշքն, որոց կոչումն էր տարածանիլ ընդ  
հանուր զԱւետարանն Յիսուսի Քրիստոսի:

Առա Մարզակի, որք էին պատզամա-  
սերք Աստուածոյ յեկեղեցւոջ, միջնորդք ի-  
ձևան որոց Աստուած իւր կամքն կը ծա-  
նուցանէ ժողովրդեան, եւ որք ունէին ըլ-  
չնորհս լուծանելոյ զգաղանիւ հանգերձեալ  
իրաց, նահւ զանցեալ իրս մեկնելոյ, ի  
ժամանակի հոգոց, տազնապի և նկու-  
թեանց հկեղեցւոյ՝ զուզութիւն և զորո-  
շումն տալոյ: Եոցա պաշտօնն էր եւս՝ ի  
զիմաց ժողովեալ հաւատացելոց ազօթս  
առնել առ Աստուած, զնոցս և զանձկու-  
թիւնս ժողովրդեան յանձն առնել Աստու-  
ածոյ և փառս և զովութիւն մատուցանել  
նմա:

Իսկ Վարդապէս բուն ուսուցիչքն էին  
ժողովրդեան. նոքա ունէին զշնորհս զի-  
տութեան՝ որք իւրեանց հոգեշոնչ քարո-  
ղութեամբ գժողովուրդն ընեն՝ ուսուցա-  
նեն և կրօնական և բարզական կրթու-  
թեամբ զարգացուցանեն:

Եւ արդ, զանց առնելով զայլ հոգեւոր  
չնորհս մի ըստ միոջէ ի քնին առնուել<sup>(1)</sup>,  
հարիկ է նկատել զշնորհս ի լեզուս խօսելոյ,  
եւ քննել զիսկութիւնն նորին, որ եւ բուն  
նիւթն է առաջակայ հետազօտութեանս:

## 2.

Խնդրական ասացածս այլեւայլ օրի-  
նակաւ զտանի ի եւ կտակարանի. —

Խօսել լեզուս (Մկ 16,17. ԳՃ 10,46 և  
19,6).

Խօսել զիզուս (1 Կր 13,1).

Ի լեզուս խօսել (1 Կր 12,30. — 14,2.  
4. 5. 6. 13.).

Լեզուա խօսել (1 Կր 14,18. 19. 23. 27).

Լեզուօֆ խօսել (1 Կր 14,39).  
զտանի նահւ ազգ լեզուաց (1 Կր 12,10.  
28), եւս և լեզուս ունել (1 Կր 14,26), եւ  
լոկ լեզու (1 Կր 13,8):

Որդ՝ զիահրդ իմանալի է ի լեզուս խօ-  
սելն. — զմեկնութիւնն ասութեանս յայտ  
առնէ նկարագրութիւնն զոր կ'ընծայէ նոյն  
լինքն Աստական Պաւլոս ի թղթին առ կո-  
րնթացիս (զլ. 12,13 եւ մանաւանդ 14):

Աստաքեան իւր խրատական խօսքն  
ուղղելով առ եկեղեցին կորնթացւոց — յո-  
րում թուի թէ ի լեզուս խօսելն յոյժ ան-  
կարգ եւ տարապայման օրինակաւ ի կիր  
արկեալ էր — նախ կը թուէ մի ըստ միոջէ  
զպէսպէս չնորհս Հոգւոյն Սրբոյ. ապա յա-  
ռաջ քան զշարունակութիւն յորդորակա-  
նին, կը պատուիրէ նոցա՝ նախանձաւոր  
լինել չնորհացն որ լաւն են. եւ ի զէպ եւ  
պատշաճ կը համարի յուցանել նոցա զայլ  
ինչ չնորհս. որ ընտրելագոյնն եւ գեր ի  
վերոյ քան զամենայն նախայիշատակեալ  
չնորհս:

Եւ աստէն կը յեռու Պաւլոս Աստա-  
քեալ, զողցես իմն վերացեալ մաօք, այն  
հոգերուիս օրնեներգութիւնն՝ քան զոր ա-  
ռաւել բարձր եւ զսեմ, աւելի բուռն եւ  
ուժգին, առաւել հոգեշունչ եւ խորին չու-  
նի ինչ երբեք զրած նա ինքն, այս է երգ  
երգոցն Սիրոյ, — բան անզուզական, որ  
ոչինչ նման է նմա, կամ հանգոյն, ո՛չ

(1) Հմմու. առ ապ նահւ Հռ. 12,6 հհ., 1 Պտ  
4,10—11, 2 Պտ 1,21, 1 ՏԺ. 4,14, 2 ՏԺ. 1,6, եւ  
1 Կր զլ. 12—14:

համեմատ եւ ո՞չ հաւասար ի համօրէն մատենագրութիւնն ազգաց :  
«Եթէ զեկուս մարդկան խօսիցիմ  
եւ հրեշտակաց ,  
եւ սէր ո՞չ ունիցիմ ,  
եղէ ես իրեւ զպղինձ որ հնչէն ,  
կամ իրեւ զծնծղայս որ զօղանցնես  
եւն .: Մարզարէութիւն , զիտութիւն , ի  
լեզուս խօսել , կարողութիւն սքանչելա-  
գործութեանց , ողորմութիւնք , ճնուութիւն ,  
վշտամրէրութիւնն եւ խստամրէրութիւն , եւ  
այլ ամենայն չնորհք , առանց սիրոյ՝ ոչինչ  
են եւ ոչինչ օգտին . վասն զի այդ ամե-  
նայն հոգեւոր պարզեւք վաղանցուկ են եւ  
հուսկ ուրեմն խափանելոց են . մացական  
եւ տեւական են միայն հաւատք , յոյս ,  
սէր , բայց մեծ քան զսոսա զերեսին է  
սկրն : (Հմմա . առ այս 1 Յհ 3,18 «Արզ-  
եակք , մի՛ բանիւք եւ լեզուօք սիրեսցուք ,  
այլ արգեամբ եւ չչմարտութեամբ») . եւս  
եւ 4,16 «Աստուած սէր է , եւ որ կայ ի  
սէրն՝ բնակեալ է յԱստուած , եւ Աստուած  
ի նմա բնակելու : )

Յետ այսր ընդհատութեան կը շարու-  
նակէ Առաքեալն զիւր խրտականն : —  
Կորնթացոց յանձն կ'առնէ նախ քան զա-  
մենայն զհետ երթալ սիրոյ , եւ ապա նա-  
խանձաւոր լինել հոգեւոր չնորհացն , բայց  
առաւելապէս մարդարէութեան : Զի այն որ  
ի լեզուս խօսի՝ ո՞չ լնդ մարդկան խօսի ,  
այլ ընդ Աստուածոյ , եւ այն՝ խորհրդաւոր  
ինչ իրս , որք ունկնդրաց անիմանուի են :  
Իսկ այն որ կը մարդարէանայ , որովհետեւ  
բանաւոր եւ մեկին բանիւք կը խօսի ,  
ընթերակայ ժողովրդեան հասկանալի կը  
լինի , որով եւ կը ծառայէ ի շնուութիւն ,  
ի միթարութիւն եւ ի սփոփութիւն նո-  
ցաւ : Որ խօսի ի լեզուս՝ զանձն իւր եւեթ  
չինէ , այլում ումեք չունի ինչ օգուտ .  
Իսկ որ մարդարէանայն զժողովրդն շինէ :  
«Կամիմ» , կը շարունակէ Առաքեալն ,  
«զի ամենեքին զուք ի լեզուս խօսիցիք ,  
[այլ կամիմ] առուել՝ զի մարդարէանայ-  
ցէք . զի լու է որ մարդարէանայն՝ քան  
զայն որ ի լեզուսն խօսիցի . բայց եթէ  
թարգմանեցէ [այսինքն՝ կարող լինի իւր  
խօսածն բացատրել մեկնելոյ] , որպէսզի  
ժողովուրդն իմանայ զիմաստն , որով եւ  
շնուութիւն եւ հոգեւոր օգուտ մի առնոււ-  
ի սոյն յարեալ ասէ . «Բայց այժմ , եղ-

բարք , եթէ եկից ու ձեզ ի լեզուս խօսե-  
լով , զի՞նչ օգուտ լինիցիմ ձեզ , եթէ ոչ  
խօսիցիմ կամ յայտնութեամբ կամ ովե-  
տութեամբ կամ մարդարէութեամբ կամ  
վարդապետութեամբ» . այսինքն՝ եթէ բա-  
նաւոր եւ յայտնի , հասարակաց զիւրա-  
նաս լեզուաւ չքարոզեմ եւ չուսուցանեմ  
ձեզ : — Ի լեզուս խօսելն անիմաց խանա-  
ձայն , խուժակուժ բարբառ է , կամ լու-  
սուս աննշանական խառնարձակ ինչ դո-  
չիւն եւ աղաղակ է : Այսպիսի ինչ բնա՛ւ  
եւ ո՞չ մի օգուտ ունի լսողաց : — Յամե-  
նայն գէպս հարկ անհրաժեշտ է ի լեզուս  
խօսուածն մեկնել , առ ի օգտակար եւ չի-  
նիչ լինելոյ ունկնդիր հաւատացելոց : —  
Ապա կը յաւելու . «Դոհանամ զԱսուէծոյ ,  
քան զամենեսին զծեզ [թիւր թարգմանու-  
թիւն է «վասն ամենեցուն ձեր»] առուել  
լեզուաւ խօսիմ : Այլ ի մէջ եկեղեցւոյն կա-  
միմ բանս հինգ մտօք [բանաւոր եւ ամե-  
նեցուն իմանալի լեզուաւ] խօսել զի եւ  
զայլս խրատիցեմ , քան զրեւր [այսպէս  
ճշկիւր ըստ Յուն . բնագրին] բանս՝ լեզ-  
ուաւ , յանօգուտուս : — Ապա կը յորդորէ՝  
«Եղբարք , մի՛ լինիք տղայք մտօք , այլ ի  
չարեաց տղայցարուք , եւ մտօք կատար-  
եալք լինիիք» : — «Ապա եթէ գայցէ եկե-  
ղեցին [= ժողովուրդն] ամենայն ի մի  
վայր , եւ ամենեքին ի լեզուս խօսիցին , եւ  
մտանիցեն անդր տգէտք յալսինքն՝ ան-  
տեղեակք քրիստոնէական պաշտամանց եւ  
արարութեանց】 կամ անհաւատք [հե-  
թանոսք] , ո՞չ ասիցեն եթէ զի մոլիքՊ»  
[այսինքն՝ խելագարած եւ մտակորոյս ե-  
զուծ էք]: Այլա՛զի իմն է մարդարէանալն ,  
որ բոլորեցուն իմանալի է , եւ որոյ ար-  
դիւնքն բարի եւ շահեկան է :

Յետոյ ուրեմն համառօտիւք երկրոր-  
դելով ասէ . «Եղբարք , յորժամ ի մի վայր  
ժողովլիցիք , իւրաքանչիւր ոք ի ձէնջ եթէ  
սազմու ունիցիի [երգելոյ] , եթէ վարդա-  
պետութիւն ունիցի [ուսուցանելոյ] , եթէ  
յայտնութիւն ունիցի [հազարգելոյ եւ տեղ-  
եակ առնելոյ] , եթէ լեզուս ունիցի [խօսե-  
լոյ] . եթէ բարգմանուրիսն ունիցի [զիկուօք  
խօսուածն մեկնելոյ չնորհքն] , ամենայն ի  
շինած [ունկնդիր հաւատացելոյ] լինիցի :  
եթէ ի լեզուս ոք խօսիցի՝ երկուք , եւ եթէ  
եւս աւելի՝ երեք , եւ ապա մի ըստ միոչէ  
[կարգաւ , մի զմիոյ կնի , եւ ո՞չ թէ բոլո-

րեքեան ի միասին խառնիխուսան], և մինն բարգմաննացի լեզուօք խօսուածն]: Ապա իթէ չիցէ ոք որ թարգմանիցէ լոր լեզուօք խօսուածն մեկնելոյ շնորհքն չունենայ], լուռ լիցի յեկեղեցւոշն լեզուօք խօսողն] ընդ միտս իւր և ընդ Աստուծոյ խօսեցի [լսելայն]: Բայց մարգարէք երկու կամ երեք խօսեցին, և այլքն [որք մարգարէից քարոզն քննելոյ շնորհքն ունին] քննեցին: Ապա իթէ այլ ումեք որ հասիցին՝ յայտնեցի [այսինքն՝ մարգարէութեան Հոգին ի վերայ նորա զայ], առաջինն լսեցէ [պէտք չէ երկայնաբաննել]: Քանզի կարող էք ամենեքեան մի լստ միջէ մարգարէանալ, զի ամենեքեան ուսանիցին եւ ամենեքեան միխթարեցին: Այսպէս ամենայն ինչ կանոնաւոր՝ վայելուց եւ Աստուծահանոյ պայմանաւ կը կատարի:

Աստէն հարկ կը համարի Առաքեալն Պաւլոս առանձինն ինչ պատուէր տալ վասն հրապարակախօսութեան կամաց յեկեղեցոչ: Քանզի յԱռաքելական զարուն, այլիւ յետոյ ուրեք ուրեք մինչեւ ի վերջ կոյս Գ. գարուն, սովոր էին կանայք յեկեղեցիս հրապարակաւ քարոզել, ուսուցանել ազօթել ևւ մարգարէանալ (հմմտ. նաեւ 1 Կր 11,5 հհ., Գծ 21,9, Տժ 2,11—12), բայց յաճախ չափազանցութեամբ ի կիր արկանէին զայդ շնորհս, և մանաւանդ թուի թէ՛ զիսունի լեզուօֆ, և այնու կը գեղձանէին: Զայս սովորութիւն անպատճէ կը համարի Առաքեալն, վասն ուրոյ խստիւ պատուէր տայ այլիւս խստիւնել զսոյն, և մի անգամ ևւ միշտ կը հըրատայէ: «Կանայք յեկեղեցիս լուռ լիցին»: Միանգամայն կը յանձնաբարէ անտես չառնել իւր պատուէրն, զի պէտք է զիտնան թէ իւր զրածն «Տեան պատուիքանք են»: Ապա յաւելու «թէ ոք տղիտանայցէ, տղիտանայցէ: Եւ հուսէ ուրեմն կը զրածն պատուէրն, զի պէտք է զիտնան թէ իւր զրածն ճական պատուիքանք մարգարէանալ, և զիսունի լեզուօֆ մի՛ արգելուք: Եւ ամենայն ինչ ձեր պարկէշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի:» —

Եւ արդ, ի վերագոյն ճառեալ ընդարձակ նկարագրութենէ Պաւլոսի Առաքելոյ ամենայն իրօք բացայայտ նկեն խփուրին եւ հանգանանի խօսելոյ լեզուօֆ: Բայ այսմ

ի լեզուս խօսելն<sup>(1)</sup> մին էր ի շնորհաց Ա. Հոգւոյն, հիացական իմն զիւճակ, յորում խօսողն, «Փ Հոգւոյն Սրբոյ կրեալ» (2 Պտ 1,21), յափշտակեալ մտօք, կը կորուսունէ իւր զիտակցութիւնն, եւ իւր ներքին յորդքն եւ եռանդումն կ'արտայայտէ խառնարձակ անյօդ՝ խուժդուժ բարբառով եւ խառնածայն աղաղակօք կակագելով, — խառնիխօսուն անիմաստ եւ անիմանալի գոչիւնք եւ ձայնարձակութիւնք, զորս սակայն հնարաւոր է մեկնել հսարակոց ընդեկական իմանալի բարբառով, իսկ առ այդ բաւական են միայն հոգեկիր անձինք ոմանք, որոց սեպհական են շնորհի բազմանուրեան, որք եւ կոչին բարգմանիչ:

## 3.

Պաւլոս Առաքեալ Ա. Հոգւոյն շնորհաց ազգեցութեան իրեւ արդիւնք եւ բուն նպատակ կը համարի զշինութիւն բովանդակ եկեղեցոյ, և զնովելոր միւսանգամ ծրնունդն եւ զիրօնական ևւ բարդական նորոգումն մարդու: Իսկ սոյն այս շնորհիւնն է զարգացումն մարդոյս յամենայն բարիս, կամ, որպէս նոյն ինքն Առաքեալն առէ (Պղ. 5, 22-23). «Խոկ պտուզ հոգւոյն այս է. սէր, ինդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեղութիւն, ժուժկալութիւն: Եւ այլիւայլ օրորթեանց աղացոյց ևւ նշանակ է՝ «զի ոչ իմաստունք ըստ մարմոյ, և ոչ բազում հզօքք, և բազում ազնուականք, այլ զիիմարս աշխարհիս ընտրեաց Աստուծ, զի յամօթ արտացէ զիմաստունս, և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուծ, զի յամօթ արտացէ զնզօրս: Եւ զանտոհմս աշխարհի ևւ զարհամարէնալս ընտրեաց Աստուծ ևւ զոշինչսն, զի զէսն իմն խափանեցէ: որպէս զի մի՛ պարծեցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ» (1 Կր. 1, 26-28): եւ

(1) Ապարէն ի գէա էր ասել լեզութխօսութիւն: բայց, որպէսիւն Հայկ, Բաւզիրը, ո՛չ ըստ պատշաճի, յա՛յլ միտս իմանան զայդ բառ ևւ մեկնենն իրեւ «ձիրը կամ շնորհը խօսելոյ յայլեալ բարբառս եւն», լուազոյն համարեցայ զանց առնել, որպէսի թիւթիմացութեան պատճառ ըմինիթեան մահաւոր լիներ ննարի զրան լեզուարքարանութիւն, այլ սակայն խորշեայ ի կիր առնել զայն:

համառօտ իսկ ասել, մարդոյս նոզիւր վերցին ծնունդն եւ բարյալին վարժն, ըստ Պատղոսի, է պառող քրիստոնէական հաւատոյ եւ երկրաւոր կենաց վախճան:

## 4.

Շնորհին ի լիզուս խօսերոյ, կամ լիզու երկայն տեւականութիւն չունեցան: Ի մըտից Գ. գարուն հետէ առ սակաւ ստկաւ սկսանին թուանալ՝ նուաղիլ, եւ հաւակ յիտոյ շիջանին, նմանապէս մասսամբ իւիք եւ ա՛յլ չնորհք Հոգւոյն: — Պարզեք Հոգւոյն ո՛չ այլ եւս էին յայտարար նշանակ ամրողջական եկեղեցւոյ, կամ եկեղեցեաց իւրաքանչիւր, այլ միայն առանձինն ձիրք կամ չնորհք սկսական ստկաւուց ուժանց ընտրելոց: Անցած էր այլեւս զիւցազնական զարն եկեղեցւոյ, շիջած էր սկզբնարուան հաւանդն հոգւորոյ: Այնուհետեւ «ըդշոգին եւ զջօրութիւնս» փոխանակեցին ա՛յլ ինչ հոգեւոր հաստատութիւնք եւ չնորհարաշխ կարգաւորութիւնք. — ամրակառոյց համատարած եկեղեցի մի, յանկուցիչ եւ տպաւորիչ պաշտամամբք եւ արարողութեամբք, հանգերձ խորհրդովք եւ կազմակերպեալ նուիրապիտական դասակարգութեամբ. ապա կանոնն Հաւատոյ, Սուրբ Գիրքն, ուրոյն աստուածաբանական վարդապետութիւնք, եւ իմաստասիրութիւն մի՝ որ կարող էր մրցիլ ընդ յայնժամ տիրող նորպղատոնական փիլիսոփայութեան՝ որ արգարեւ զօրեղազոյն ոստիսն էր քրիստոնէութեան:

## 5.

Ապաքէն Քրիստոնէութիւնն ըստ արտաքին կերպարանաց—այսինքն՝ ըստ ձեւոց եւ պայմանաց Աստուածապաշտութեան եւ Աստուածեղէն պաշտամանց — յընթաց գարուց բազմադիմի փոփոխմունս եւ յեղաշրջնունս կրած է, համեմատ առանձինն հանգամանաց իւրաքանչիւր տեղուց եւ ժամանակի, որպէս եւ ըստ անձնիւր հաստրակաց հայեցուածոց եւ գաղափարաց: Այլ սակայն անկատին ի բնէ եւ ըստ էութեան անայլայլ է նա եւ անյեղալի, զի հիմն եւ սկզբունք նորին յաւիտենական են, եւ զի Հոգին նոյն է, «լորում չք փոփոխումն եւ կամ շրջելոյ ստուեր»:

Յիրս սովորութեանց, հրահանգաց եւ կարգաց Աստուածեղէն պաշտամանց — թո՛ղ զայլակերպութիւնս լիդուաց, զակսալէս ազգային սեպհական սովորութիւնս, զառանձինն եկեղեցական սահմանազրութիւնս եւ զվարդապետական խտիրս — միութիւն եւ միօրինակութիւն յառաջ բերել եւ հասատելն կայ եւ մեայ առ ժամս լոկ բարեպաշտ գաղափարական իմն տեհնչանք: Հանդերձ այսու ամենայնիւ ճշմարիտ քրիստոնեայն վատահութեամբ ակն ունի, յուսայ եւ հաւատոյ՝ զի այս ամենայն անմիտաբանութիւնք, կերպակերպ եկեղեցական յօրինուածութիւնք, պէսպէս կրօնական խտիրք եւ խտրոցք, զմիմեանսամերժ վարդապետութիւնք հուսկ ուրեմն խափանելոց են, ըստ կանխասաց բանի Տեառն մերոց՝ թէ օԵկեղէ ժամանակ եւ այժմ խոկէ, յորժամ ճշմարիտն երկրպատկուք երկիր պազանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ, քանզի եւ Հայր այնպիսի՛ երկրպազուս իւր խնդրէ», եւ զարձեալ թէ՝ «Հոգի է Աստուած, եւ երկրպազուացն նուրա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պազանել» (ՑՀ. 4, 23-24): —

Այս եւ սո՞յնզունակ է բուն եւ ճշշապատճնն Աստուածեղէն, բովանդակիչ միանգամանց համօրէն Շնորհաց Ս. Հոգւոյն:

## Ֆ. Յ. Մ.

ԵՎՀՈԹ. — ի նախընթաց յօդուածի ուղղելի են հետեւալ գրիպակք.

Մին 1928.

Էջ 333ր.՝ ա. 18-19 ի վեր. ԸՆԹԵՐԳԻՔ՝ մարդոյ » 335ա.՝ ի օանօթ.՝ ա. 3. ԸՆԹԵՐԳԻՔ ուղղելի » 335բ.՝ ա. 11 ի վեր. զինի նորոց ի վերնացրին յաւելի է Ս. Եփրեմի:


ի նախընթաց հաստուածա նզրոց Ս. Եփրեմի  
Մին 1928.

Էջ 347ը.՝ ա. 6 ի ներքուստ ընթ. մարդի  
» 383ը.՝ ա. 20 ի վեր. Փիկ. ի ընթ. ընդ  
Մին 1929.

Էջ 31ա.՝ ա. 19 ի վեր. Փիկ. է ընթ. Եր  
» 31ա.՝ ա. 2-3 ի ներք. ընթ. իմաստորին  
» 31ը.՝ ա. 26 ի վեր. » բաւդեալի



## ԲԱՆԱՏԵՂԾԱԿԱՆ



—  
—

Դու, որով ո՞չ եղեւ երեք ո՛ հասու,  
Եւ ո՞չ յուրաս ելաց առանց պատելոյ,  
Որ ինձ որպէս եռու նրանան ծնանելոյ,  
Նոյն եւ ասցես մեռանելոյ, ասա՛ ինձ .

Երէ կամիս, զի ծանիցեն զիեզ մարդիկ,  
Ընդէ՛ր ապա սաս երկրսել մեզ ըզբէն .  
Զի՞նչ ևեզ նախոք պատճառեցին դրժբնդակ  
Ի փառելոյ զանկեղծաւոր զմեր հաւասա .

Յորժամ ըզգլուխ իւր ամբառայ մարդ ի վեր,  
Կարծէ ըզեզ իսկ տեսանել յերկինս անդ .  
Արարշուրին, կալուած իւրոյ տերութեան,  
Է ասնար իմն լնդարձակ յաջը բոյին :

Յորժամ ի խոր անձին իւրոյ իջանէ ,  
Գտանէ ըզեզ անդէ՞ն ինքնեան կենակից .  
Ի սառապասն իւր, յարտասուս եւ ի սէր  
Պատճառ բնաւից համարի զիամս Ասուծոյ :

Ազնօրազոյն հանճարոյ չիմ այլ ինչ սէր  
Վըսեմական փառաց՝ բան տալ զանձըն իւր  
Ի հաստատել եւեր զեղոյ լինել գոյ,  
Եւ տալ յոդել զմեծամանչ ևն զանուն :

Մոռվ կերպի եւ կոչեցեն զիեզ մարդիկ ,  
Յանուն Պատճառայ՝ Արտազդայ՝ Յիսուսի ,  
Ճըսարտուրեան՝ արդարուրեան անվախճան .  
Ամենցուն ձեռք միւս առ ևեզ կարկառին :

Յետին յուղիս մարդկան երկիս այսորիկ ,  
Գոհանայ զիեզ ի խորութիւնը սրտին ,  
Յորժամ ի մուայլ միւս աղետից իւր խառնի  
Փայլ ինչ բերեւ երանաւէս խընդուրեան .

Ա.Ժաման համայն վերառաքէ առ ևեզ փառս .  
Երգէ զըսարք ըըսչունն ըզեզ յիւր ի բոյն ,  
Վասք միոյ եւեր կարին անձեւիք  
Օրինեն ըզեզ բոյլ բիւրաւոր էակա :

Հսկանցելի ես դու ի գործը նո բնաւ ,  
Ոչինչ ի մէն ոչ կորընչի վասրի մեր :  
Ամենայն ինչ յաղօքը կայ , այլ յա՛նժամ  
Եւեր ժրադիս , յաժամ ի գունս անկեալ կամք :

Ընդէ՞ր ապա , ամենակալ էկ , ընդէ՞ր  
Հսկեղծեր դու զշարիս այնպէս ահաւորս ,  
Զի բան մըտաց եւ բարորին զրկուովին  
Ի տես նորա անաբեկեալ զարհութին :

Յաժամ յերկի բազմուտեսակի այնիան իր  
Զասուածութեանը նո հրաշակ հարկանեն  
Եւ զիայրենիդ խառզել իմըն ըրին  
Հզգորուրին եւ զբարորին եւ ըզուէր ,

Զիա՞րդ ապա ընդ նահանչին լուսոյն սուրք  
Տեսանին գործք զագրազդեցիկ այնպիսիք ,  
Զի ցամամի ալորանուէր ըղձից տոնչ  
Յօհնիաբանիչ ըրբունս բիւրց եղիկեաց :

Ընդէ՞ր , ընդէ՞ր , յասուածեդէն գործի հում  
Տարեր այնպէս անմիաբանք ընմիւնան .  
Առ ի՞նչ ուրեմբն ման ախս , հի՞մ եղեռու .  
Ասուած արդար , վասն է՞ր եւ ման արար :

Գորովեցան ապամեն գործ ի սրբիդ ,  
Յաժամ աշխարհս սփանչելի եւ սրինդ  
Ծնդ բարելից եւ չարախառն ես մասուն ,  
Ել լալազին ի խաւարին ծոցոյն զուր :

Երէ նեզ կամք էին մատնել զայն խսրան  
Ի չարչարանարն որովք լին է այնիան ,  
Պարս էր եւ նեզ զոնեայ չըսալ բոյլ նըմին  
Ծնդ անջրայերն անհուն ըզմել նըմարել .

Վասն է՞ր եսուր բըուառորթեանը մերում  
Հնարել ի միս կամ յերազել զԱսուած ոմն .  
Աւերեցին երկուանք զերկիրս այս նամայն .  
Կա՞մ տեսանեմք զնա կարի խաջ կամ ո՛չ բնաւ :

Երէ մըրզուզ այս արարած ձեռաց նոց  
Զէ արժանի մերձենալոյ առ նո անձն ,  
Պարս էր ասլ բոյլ զի բընուրին ըսմօղէր  
Հզենք ծածկեալ յաշաց մերոց եւ մըտաց :

Զօրու թիւն Խայնժամ գարձեալ մնայր առ նեզ,  
Եւ ըզգայս մեք ըզհարուածը նորին .  
Խակայն հանգիս եւ անզիտանիրն զոնեայ  
Սուաւել բաղըը գործէին զվիտը մեր :

Երէ աղօրք եւ տառապանի մեր բնաւին  
Ոչ հասանեն առ վեհասանց փառը նո ,  
Էզմենաւորը մեծութիւն նեզ կալցիր .  
Զանեզրութիւնն առ միւս փակեա՛ ուրշ ըզիւ :

Երէ սակայն մահանանդոյն անձկութիւնն  
Կարեն մինչիւ առ ուրս նո հասանել ,  
Թէ ի վերին յաւեւժական զաւառս անդ  
Լրսես երեկ երեկ ըզմեր հառաջանս ,

Խորտակեսի՛ր տպա զզրմբը այն անհուն  
Որ ընդ իւրեւ պարածածիկ զհամազոյս .  
Բա՛րձ եւ ընդ նոյն ըզվարագոյս աշխարհիս ,  
Ցոյց զանձըն նո , Աստուած արդար ու բարի :

Յերկրի ասս ո՛չ այլ ինչ տեսցես դու յայնժամ ,  
Բայց միայն ուշ եռանդնալից նաւասոյ ,  
Եւ համօրէն ազգ մարդկան յայնժամ համայն  
Ծունդը դիցէ առաջի նո երկիւդած :

Որք մաշեցինն ըզնորա անձն արտասուր  
Գետահոսեալ յաշաց իւրոց յարաժամ ,  
Յայնժամ ուրպէս ըզքերէ շիրը ցողոյ  
Փարատեսցին ոզգիացեալ ընդ երկին :

Ո՛չ այլ թինչ յայնժամ լրտիցես այլ զզովիեսս  
Ծզքէն , Երւագ ուրախութեան եւ սիրոյ ,  
Զօրէն որովի զբարքնոցըն զաս հանապազ  
Լրնուն զերկինցն յաւեւժական օրեւանս :

Եւ ի հընչել ովսաննայիցն ի բարձունս ,  
Տեսցես՝ յերզոցը մեր զիաւրդ ի ձայնէ .  
Փախնուն ի բաց հայիսոյութիւնն եւ երկուանն .  
Մինչ , ըզնորին հակառակ , նոյնինքն իսկ ման  
Յաւելուցու զիւր զյետին շեսս ի նոսին :

## ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

**Ա. 1. ԽՈՅԼԻԳԱՅԻՐԵՑՅԱՆ.** Օրոգրութիւն Առվելորաւրեան Խնդրական Ստանի Բ. Խոյլիկիստին Ավագան Բ. Յ. Թօխական-Հայէկ 1928, Տ. 16 219. Գիմ. Ստուդիոյ և Լիբանանի համար 75 Մուշ. Գիմ., Արտասահմանի համար 20 Ժամկ:

Կիլիկիան կղիկներէ յետոյ, որուն ծանօթացան Սիսին ընթերցողները (1928, էջ 181-82), կիլիկիոյ ժերաւնազարդ հայրապետին ներսոցայի ուղեւորութեան օրագրական պատմութիւնն է որ կը հրատարակուի այս միջուն հաստիքին մէջ, պատրաստուած հանդուցեալ Վ. Լ. Խուուկէսքեանի կողմէն:

Աշխարհաւեր պատերազմէն եռերը, երբ հայկան դատը պատերազմէի դաշնակից պեսութիւններու հաշուեյարդարութեան սեղանին վրայ էր, Հայ ժողովուրդին եկեղեցական ու աշխարհական ներկայացուցիչները Փարիզ և Էնտոնն թափուած էին:

Կիլիկիոյ գրաւումը, յանուն գաշնակից պետութեանց, նախ Անգլիայ և յետոյ ֆռանսայի կողմէն, պահ մը քաղաքական կանքի նոր արշալոյուսով մը խանդավառեց հայութիւնը, որ սահկայն ցաւալի պատրանքի մը լուսւեկուուն մէջ ընդ նշանք դառն իրակնութիւնը և սկսաւ ասդին անդին դարձնել իր ուշերը, օգնութեան մը յուսով, որուն իրաւունքը կ'զգար իր մէջ, իրբեւ արիստուրը իրեն պարագուած զանգութիւններուն եւ իրեն եղած պաշտօնական խոստուեած մէծ պատերազմի ընթացքին:

Ահա այդ միջոցին է որ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը, հակառակ իր յառաջացեալ տարիքին, յուստիաբ' Կիլիկիոյ մէջ քաղաքական խաղերու Համար սահացած աննպաստ դարձուածներէն, կը դիմէ ուղարկի Ֆռանսայի մայրաքաղաքը, Խոսք հասկըցնելու Կեղեռնի կառավարութեան, Հնարաւորութեան պայմաններուն մէջ անշուշտ, որպէս զի հայուն անժխտելի իրաւունքին չանական չըլլան:

Սահակ կթզս, այս կարեախոս աշխատութեան կը նուիրուի (1920) Մարտ 13էն մինչև Նոյեմբեր 1, և Օրագրութիւնն ըսւն մասը կը պատերազցընէ Ն. Ս. Օճութեան կատարած այդ դիմումները Ֆռանսայի պաշտօնական և ոչպաշտօնական, բայց հայաէք անձնաւորութիւններուն, և անոնց հետ ունեցած տեսակցութիւնները, և այլն, և այս բոլոր սրտմաշուք երթեւեկներու և տեսակցութիւններու մէջ Կիլիկիոյ Հայրապետին ցոյց տուած արթնամուռթիւնը, սրամիտ ակնարկութիւնները, պատրաստաբան և յատակ բացատրութիւնները, ուշագրաւ և նամաւորապէս: Էջեր կան այս Օրագրութեան մէջ, զորս կարելի չէ կարդալ առանց յուղուելու, որովհետեւ պաշտօն դիւանագիտութիւնը և գուուած ար-

դարութիւնը գէմդիմաց կուգան ալեւոր Հայքութիւններ գործունէութեան գիծին վրայ, նոր յուստիաբութիւններու կոկմաները արթնցնելով առ ներու:

Ա. Հայրապետին ուղեւորութեան նուիրուած այս Օրագրութիւնը կը բանէ հասարիս 1-128 էջները, իսկ մասցած մասը մինչեւ էջ 219, Յանկուած մըն է, որ կը բովանդակէ շարք մը պատուագիրներու պատճենները, հայերէն և փռանակիրէն, որոնք իրեն հարազատ մաւերագրութիւններ ստոյգ որժէք մը կը ներկայացնեն կիլիկիոյ պատմութեան վերաբերութիւններ:

Այս հասուրը աւելի խնամու տպագրութիւնը ունի քանի Կիլիկիան Կակմաներու տպագրութիւնը, բայց հաս ալ կարեւոր մէկ թիրութիւն մը կայ: Օրագրութիւնը կը բացուի ՄԱՐՏ 13 ով, բայց ո՞ր տարուան Մարտը, այդ պէտք էր նշանակուէ ամիսէն յառաջ, մասցաւած է սակայն:

Ուշիմ ընթերցողը ի զուր պիտի հնամու տպագրութիւնը ու ունի հարցնէ թէ Կիլիկիոյ կաթողիկոսը ո՞ր ասրին ըրբէ է այս ուղեւորութիւնը, և պատասխան պիտի չգտնէ: Բարեկամասարար մինք կը յիշենք թէ 1920 ին կատարուեցաւ որդ նշանակելի ճամբարութիւնն...:

Հակառակ մեր փափաքին, շատ հասկընալի պատմաներով, չենք ուղեր ինչ ինչ հասուածներ կամ էջեր յառաջ բերել հաս Օրագրութիւն, հաշակ մը տուած ըլլալու համար մեր ընթերցողներուն, որոնք սակայն կրնան իրենց հնամարքութիւնը գոհացնել, օրինակ մը զնելով այս հասուրըն:

ԽՈՅԼԻԳԱՅԻՐԵՑՅԱՆԻ ԿՈՂՄ ՊՈՇԵՆԵԱՆԻ:

### ՀԱՅԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵջ

Հայոց նախատական պատմութեան համար վերցեր շատ թանկացին հասուր մը լրս տեսա Վաղարշապտու պետական սպարաննեն, ԽԱՂԱՐԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՈՇԵԱՆՔ ՀԱՅՈՅ ՊՈՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ, 304 էջերով, մծադիր և զոյց սիւնակիւ: Նոր նախիցեանի Առաջնորդ և Էջմիածնի Գերագոյն Նովելոր Խորհուրդ անդամ Տ. Գարեգին Արքեսու: Յովակիւն, իր այս երկամիւթեամբ նոր և նեարքրական հասուր մը եւս աւելցու տանին աւելի բանամիւն իր կարենու երկամիւթեանց վրայ, մծածակէն դիւրացնելով Միշին Խարու հայ պատմութեան և նայ զեղարքեսու ուսումնասիրութիւնը: Հայ բանակրութեան համար աւարտ աւարտու մէջ, ամէնին արթէրաւոր զիրքը կարելի է նկատել Արքացն նեղնակին այս հասուրը, որ զարդարուած է 120 զինկամիւն նկարով, և որ երախապտական եւ եղբայրական որպէս ընծայ, նուրբուած է հանգուցեալ Տ. Տ. Նահապետ և Կարապետ եւ Կամսկան պատմութեան և Անտոն վարդապէս Վարդապահանցի լիշտակին: Գրին սկիզբը, որպէս յառաջարան, նեղինակ իր յայուն, որ ծառապահէն հինգ զարու շրջան մը իր մէջ բովանդակող Արքեւիւնան Հայաստանի պատմութեան այդ մասը պէտք եղածին:

չափ ենթարկուած Աբ ցարդ զիտական ուսումնասիրութեան, այն հասկնալի պատճառով՝ որ աղքիւրները ցրուած էին և բանասիրութեան համար ոչ բաւարար չափով մաստիլի, ու ինըը, անընդհատ տասար տարի, յաջողած է անրաւ նիւթ հաւարել, չզդութեամբ արծմանարել ու լուսանկարի բոյոր այն յիշասահորանները՝ որոնք պատճութեան այդ շրջանին արծմանութեանց, շնչրելու, բանգալիներու, մակրչութեան, ամեղնազորութեան և ժողովրդական արուեստ արտադրութեանց վրայ պիտի կրնային այն յասակ գաղափար մը տալ, կննդանի և զեղեցիի խամապատեր մը կազմելով ճայ մօրի այդ հայաստ արտադրութիւններն, ինչպէս կը ըստ հնդինակար ժամանակակից ճայ բանասիրութիւնները ուրախ պիտի ըլլայ անշուշչ, հեղինակին տեղինախառով որ Շահպարակեանը կամ Պոչշանը» երկասիրութիւնը մէկն է, միայն այն շարք մը երկասիրութիւններին, բոլորն ալ իրմէ պատարաստաւած, որոնց ամբազութիւնը պիտի կազմէ ցարդ հրատարակուած ամէնին գաւերական ու արժեքաւոր պատճութիւններ, Միջն դարու յատուի Յաջորդարար հրատարակաւելով ուրիշ ժեց հասորներ, պիտի լիցնեն պատճութիւնը 11-15րդ դարերուն, որու լուսանառութիւններով, ճանօթութիւններով և գաւերական աշրիւենքու վրայ հիմնաւած կարեւոր նշողումներվ. ինչպէս որ իր յաւածաբանին մէջ կ'ակնարդէ, Սրբազն բանասէրն ու պատճափիր չունի նիւթական միջոցներ իր մրւս երկասիրութեանց հրատարակաւեան համար, և բայ պրատ ու յանուն ճայ բանասիրական պատճութեան Կ'առաջարիէ որ զիտութեան և արուեստ նովանաւոր հասաստութիւններ և անձնաւորութիւններ, բարեհամին սասաննել պատճութեան ծանրը, Թոյոյ կուտան անշուշչ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնն ու ճայ զրասէր բարերարներ, որ այս պարազան համարձակիմ յանձննելու իրենց բարեացագամ նկատութեանց, մասնաւրապէս խնդրելով պատճութեան, գէթ առ այժմ, քրանչելն իրարժեն մարգարական ու տապարութեան հոգը:

Ամբողջ հասորը բաժնւած է 12 ընդարձակ զրուեներու, զարգարաւած հոյակապ և ընթաւական պատճութեանց վրայ անտիք մասցած նկաներով, զրու նեղինքն է, ապահովեր, օգնութեամբ լուսանկարիչ հանգուեալ Հայի Տատեանի:

Առաջին զրուին մէջ Հայաստանի վիճակն է պարզաւած Խաղաղական ծագման ժամանակ, ուր Բագրատունեանց անկումնէն յառաջ, ճայ իշխանական տաներու աննշան մասցորներ միայն կ'երեւին Հայաստանի մէջ, կը խօսի նաև Սեբուզներու բայրայման մասին, անոնց բաժանման և Վրաստանի կատարած փորձերու, զանոնը ես մղերու համար, Վաւերական արծմանապրութեանց վրայ հիմնաւած, հոս կը պատճամի թէ ինչըն իր լուսարար յանձնելու մէջ, զրու նեղինքն է, ապահովեր, օգնութեամբ լուսանկարիչ հանգուեալ Հայի Տատեանի:

Հասորի Բ.րդ զրուառվ գանքերու և նկեղեցիներու և երկամազիր մագաղաթեայ աւետարաններու արծմանազրութիւններով և յիշասակարաններու

կը ճշգտի Պոչշանց ծագութիւն ու բնագաւառը Արեւելեան Հայաստանի մէջ, այս յիշասակարաններուն մեծապէս կ'օժանդակին բացմաթիւ զեղարանդակ խաչքարեր, իրենց չուրչի արձանազրութիւններով, յաջորդ Գ.րդ զրուիով կը պարզէ. Խաղաղականց նոր իշխանութիւնը, իր սեղազրական մաս, հատարի այս բաժննն իսկա ընդարձակ է եւ անպին ծանրութիւններ կուտայ Վայոց Զորի և ընդանրապէս Արեւելեան Հայաստանի մէջ սփոռուած վանիրերու և խաչքարերու յիշասակարաններու մասն, ճանրանալով մասնաւրար Դրածորի, Սպիտակաւոր Պատուածածին և Թանհասի պասունակին մեծ վանիրերուն վրայ: Տեղինակը, ի հարի է ընդանուուր պատերազմէն առաջ, մի առ մի այցելեր է յիշնալ վայրերը և բնդարձակ ժամանակ տալով, բարեր ու արտազրեր է տեսած բոլոր յիշասակարանները, ուրոնք թէի իրմէ առաջ արտազրուած, բայց ընդհանրապէս սփալ կարգացուած են և երեւակայութեամբ լցուուած՝ պակաս, ինկած կամ կատարած մասները Հոս, շաս անգին է ծառայութիւնը Կարեզին Արքանիսիպոսի, որ Բաշրանդի, Գէնմիւրի, Շահապունաց եւ այլ կից վայրինու պատճական ճշգումներն է, կատարած ի իշքարանչիւր զիւղի, զանրի և եկեղեցւոյ բոլոր նութիւնները ժամանակակից հայ բանափրութեան է յանձնած, անխոնչ ու յարա-

ան պարաւումներով:

Գաւերական արձանազրութեանց վրայ աւելցնելով նաև մասնաւրական արդիւրները, հեղինակը Գ.րդ զրուիի մէջ կը խօսի Վասակ Խաղաղականի կուտարած նուածուններու վրայ, զինուորական շարժումներու հետ նկեղեցական և վանական եւ այլ հանրօգուտ շինութիւնները յիշերով, բոլորն ալ զարձ Պոչշանց յիշխանական տոնմի ազգասիրութեան, Վասուակ բաջ, որ շինարար ու բարեպաշտ իշխան մին էր, Ժ. զարու առաջին բառորդին եղաւ Հայոց Նշանաւոր գէմբերէն մին, որուն թողած կարեւորագոյն իշխանականն է, իր արդիւր իր շինարարական և մանաւանց վեղարուեստական փափուկ նաշակին, Կէչառուուց կանքի կաթուղիկէ անունով եկեղեցին, որ մինչեւ այսօր կանգուն կը մնան իր գոգորիկ տնօսոր ճիշացում կ'ազգէ զիտագին:

Հատորին ամէնէն բացմաշխատ ու նիդ մասն է կարծեն Ե.րդ զրուիշ, ուր Պոչշ մնձ իշխանը (1223-1284), կը զրուէ Ժ. զարու առննափառաւաոր անդը, իր մասնակցութիւնը բիերելով նաև նկեղեցական գործերու մէջ: Հոս, յաջորդարար նկարազրուած են Թաթարներու արշաւանքը, Գւինի առուեմը, Պոչշի մասնակցութիւնը Պատուատի և Մուֆարզինի զրոււններուն եւ այնուհաւ Պոչշի կարեւոր շինութիւնները միաւում յիշասակուած: Յաջորդ զիտուն մէջ կ'երեւան Պոչշ իշխանի հարազաններուն՝ Պապորի (+1298) և Էմիր Հասան Ա.ի Շ (+1292) շինարարութիւնները, մասնաւրար վիմափոր եկեղեցներու և նկարագար աւետարաններու յիշասակուած թիւնները:

Ժ. զարու ճայ արուեստի պատճութիւնը, Պոչշեաններու օրով, մանրամանորէն և զիտական հիմուններով, խաչացած կը սեննենք հատորին է.րդ զրուն մէջ, ուր Յամէկփեանց կը վերուծէ նոյն զարու հայկական զինանշաններու մասները եւ նմա-

նութիւններ կը զանէ հին աւանդութեանց հետ:

Սբրազան բանաէրը, յաջորդական հինգ զրոխուներու մէջ, կենսազրելով Պողոշի յաջորդ հային (1299-1317), Էմիր-Հասան թ. եւ իր ներայինները, կը փերլուծէ ժեւ գարու Արևելիան Հայաստանի բաղարական ու մասաւոր պայմանները եւ Պողոշինց վերցին շառաւելինները ծանօթացնելով, իր պատմութիւնը կը հասցնէ մինչեւ Խորայէլ Օրի Պուշեանցը, պատմելով այս վերջնայն ազգանունէր գործունէութիւնը: Հատարին վերջաւորութեանը կայ Խաղբակեաններու տոհմագրութիւնը, Ֆիւզազրական առանձին ցուցակով:

Գարեզին Արքապիսկոպոս իր այս բանափրական հատորով մնած ծառայութիւն կը մասաւուանէ մեր ազգային պատմութեան, անոր կարեւորագոյն ըրջան-

ներէն մէկը դնելով նոր բննութեան լոյսին տակ, յուսափի է որ իր յաջորդական հաստոնները շուտագը լոյս տեսնեն: Անոնք ոչ միայն կարեւոր պիտի զառնան պատմութեան ներքին արժէրի տեսակէառով, այլ եւ ի յայու պիտի թերեն, պայծառօրէն, Միջնադարու հայ գելարաւենատը, իր բոլոր տեսակներու, սկսած հայ մարտարապետաթենէն մինչեւ ժողովրդային արուեար:

Հատորը խմբազրուած է Հայաստանի կառավարութեան օրդենքրած նոր ուղղազրութեամբ եւ այլպէս տպազրուած պիտական արտօնութեամբ: Թուզին աղնին է, ապազրութիւնը խնամուած, կողը պարու վելապատ, սպիտակ փայտու թուզի վրայ:

Հայէպ

ԱՐՏԱԽԱՉՅԱՆ ՎՐԴ

## ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. Ա Յ Ա Ր Ա Մ Ի Ռ Ա Մ Ո Ր Ի Ռ Ո Յ Յ

ՎԵՇԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

(Նարունակութիւն)

Եթէ վարդապետքն ասուջինք ուսուցելէ քարուեստին իրեւ տանջիցանն, ոչ կարացին ինքեանք իւրեանց աւզնեւ ինչ, աշակերտք նոյցա տպէտք եւ վարձաւորք աւուրը<sup>(1)</sup> հացի, զիւարդ կարծեսն ո՛վ անմիտ թէ լիցին ապաստան ի բարկութեան: Այսպիսի զառն մեղաւք կորնչին քաղաքք հաւարէք: Ալովն մայր մարգարէից, ընդէ՞ր աւերեցու յաւիտենից: Զմարդարէս սուտս սիրեաց, եւ կոտորեաց զճշմարիտ մարգարէս: Ամենեւին ի մեղս ծրգէր, ամենեւին ի չարի՛ս յածէք: Ի հրապարակս սուտ մարգարէք, եւ ի սենեակս ներքինս քաւգեա՛յք: Ի պատշկամբս<sup>(2)</sup> զիւթս եւ մալիք, եւ ի մասունս կախարդք եւ վհուէկք: Արարին ի նմա արաստ և սպիս, ապականութիւն վէրս եւ կեզս: Յոտից մինչեւ ցղլուխ վառեալ էր չարաչար կեղաւք: Զի հոտես տէր իւր զցաւս նորա, եկն բժշկեւ զկեղեքածս նորա: Եղեն պատզամք իւր գեղ, բժշկեաց զցաւս առն առանց կարեաց: Երաց զգանձս իւր կարաւառութեան նորա, եւ զգիրս իւր տընանգութեան նորա: Եկն կոյր եւ լուսաւորեցան աչք իւր: Եկն բորոտ եւ սրբե-

ցաւ զոյն իւր և կին մեղաւորք եւ արգարացան: Մերձեցան պիղծք եւ սրբեցան: Զգարտս զոր խորդ եւ մոխիր ոչ կարացին հատուցանեւ, եղեւ լալ եւ հազորդեցան աղեսիցին<sup>(3)</sup> ևւ<sup>(4)</sup> առի՛ն զգիրկութիւն: Ալրեաց Սիովիլ զամենայն ինչ, բայց ի հաւատոյ եւ ի ճշմարտութիւնէ: Քաղցր եւ շայեկան էր առողջութիւնն հարուածոյն եւ վիրացն նոցա: Քա՛ան էր ճշմարտութիւնն քաղցր, վիրաւորեալ լսելիաց նորա: Վասն այնր եւ ճշմարիտն իրեւ հոտես եթէ խորշի ի հաւատոյ, խառնեաց զսէրն իւր քաղցրութեամբ, թաղեաց ուսու՞մն յառողջութեանն, կարկառոյր ընդ առողջութեանն, եւ զուսու՞մն ճշմարիտ: Զի իրեւ առնուին զառողջութիւն մարմնոյ, առցեն ընդ նմա զուսու՞մն հոգեւոր: Ետես ի նմա երկուս իրս որ հակառա՞կ էին միմեանց: Ետես թէ խորշի ի ճշմարտութիւնէ, եւ ծարաւիէ առողջութեան: Խառնեաց ճշմարտութիւն ընդ առողջութեանն, զգաման այն ընդ չակեկանին: Զի իրեւ կոյէ զշայեկանըն, կոյց ընդ նմա զգամանն: Ճաշակեաց

(1) Հաւանականութեամբ ընթեռնիք՝ աղերացին:

(2) Եւ յաւելեալ ի վերայ բառին ի ձեռն ուզդշմուն:

(3) Թթինակ գրէ՝ պատշկամբ:

Սիոնի զառողջութիւն, և քաղցրացա՞ւ հիւանդութեան նորա: Ճաշակեաց զճչմարտութիւնն որ ի մէջ նորա, և զառնացա՞ն ամինսին նմա, նողկացան ճաշակելիք իւրի ճաշակեաց իմուք և ընկէց զնա: Ապականեալ էր համ բերանոյ նորա չարաչար ախտիւ դիթութեանց: Քասքնեաց և նողկացա՞ւ սիրտ իւր ի հաւատոյն և ի քարոզաց: Ուր և պատահեաց նմա հաւատոյի, չչ ընդ նմա ի պատերազմ: Ուր և գիպեցաւ նմա ճշմարտութիւն, զգեցաւ զրահով ընդդէմ նորա: Հալածական էր ի նմա հաւատ, և թշնամանհամատութիւն: Աւելի չք անդ սրբութիւն, և հալածահամ պարկացառութիւն: Զոհք զոհէին ի հրապարակո, և նուէրք ի վերայ տանեաց, Զի չէն լի՛ է փոհկաւք: Մարգարէք ընդ անապատ սահէին: Եկեղեցի միայն, և մոլիքն զո՞ւնդք պունդք: Միքէ միայն, և խարեայքն ժո՞ւնդք: Երաց զբերան իւր խաւսել, ածին նմա ապտակ լիտիք: Մի զարմանար զի ազատին, ած նմա ապատ ապտակ: Ասացից քեզ որ ինչ ծանր է քան զբան և քան զլուկիս: Ըզ անարգ ստեղծչի իւրում ած ապտակ յատենի: Ո՛չ արարիչ զթած, որ արար զձեան որ եհար զնա: Նըկարեաց զձեան յորսվայնի և արբ ի նմանէ զա՞ն յատենի: Ո՛չ կարաց ստուգութիւն արգելուչ մինչ հաստէրն զնա: Շնորհաւ (<sup>1</sup>) իւրաք արար զձեան որ եհար զնա յատենի անգ: Եւ այսոքիկ վասն ապտառութեան, զի մի՛ գարեցէ զնա բռնութեամբ: Զայս ամենայն կատաղութիւն ստացու Սիոնի ի մոլորելոց: Կատարեցան մարգարէք ճշմարիտք: Բարկոծեցան առաքեալք սուրբք: Եւ կափեցաւ զփայտէ տէրն մարգարէլց և առաքելոց: Արիւնն սուրբ որ զունեաց ի նմա, ցանեաց զնոսու ընդ չօրս կողմանս: Խեցաւ անկեալն ի միջի, և հոսեցաւ ընդ չողմս: Զի երկեցուցէ (<sup>2</sup>) զչորս կողմօ ի պարտեաց ցրուելոյն: Այսր մեծի ապաշխարութեան, արմատ իւր ստուար որրութիւն է: Եւ նոյն ստութիւն սկսաւ ի մոլորութենէն եզւպտոսի: Զի եզւպտոս աւզնականն նորա զկոփարդաց կափեցաւ ընաւին: Խման զոր առ անտի, յայսպիսի կատաղութիւն ձգեաց զնա: Երկիր անմիտ,

զիսթութիւն և հմոյք տիրեսցէն քեզ: Եթէ ստութիւն բնակէ ի քեզ, հեռանայ ի քէն ճշմարտութիւն: Աչ ի վեասուէ փափչի նա, զի բարձր է նա յամենայն վլուսուց: Ճշմարտութիւն իւր ոչ կարէ մինել խորհրդակից մոլորութեան: Եթէ լոյս իր ըմ ինքն մեղանչէ, ոչ հազորդի ընդ խաւարի, ուր զի պատերազմ է մեծ զիա՞րդ առնէ հազորդութիւն: Խեց ճշմարտութիւն զբաղաքս: զի մի՛ բնակեցէ ընդ կախարդս: Կատարեաց ստուգութիւն զմարդէս, զի մի՛ եղցի ընդ ճշմարիտ: Այսպիսի պատերազմ է ի միջի, և զու առ զանուկի երթառ և հմայես: Մի ունդն (<sup>3</sup>) քո առ ճշմարտութիւն, և միւսդ առ ստութիւն: Եթէ ականջք զի երկու են և պաշտին զբարրառս յերկուս կողմանս: սիրտ զի մի՛ է զլամարդ եղցի տուն երկոցունց: Մի կարէ ընակիւ ի նմա: Միաւորի, կամ զերեզման մոլորութեան լինի, կամ տուն առազատի ճշմարտին: Եւ այլ ևս մեղք ապականեցին զբաղաքս յական թաւթափի: Սոգոմ զի կործանեցաւ, զի զամուսութիւնն ուղիղ չքջեաց: Զի բորբոքեցաւ ի նմա ցանկութիւն, վառեցաւ ի նմա հուր: Զի այրեաց զընա հուր ծածուկ, սպառեաց զնա հուրն յայտնի: Ցանկութիւն ամպարչտութեան (<sup>4</sup>) յաւուրս Դովթայ: Ցանկութիւն շոայլութեան յաւուրս նոյի: Յաւուրս Դովթայ հուր հեղեղ: Յաւուրս նոյի չուր հեղեղ: Ե հեղեղ հրոյ և ջրոյ, հեղձաւ ցանկութիւն մարմեսոյ: Այսուտան ջանաւք երկեցոյց զպոռնիկս ի գեհենէ, Անդունդք և հաստատութիւն բարբառեցան, զի սերմն ի սերմն խառնեցաւ, Զուր ընդ ջուրս խառնեցան: Զի սուրբք ընդ պիղծ խառնեցան: Զուրքն երկնաւորք հեղձուցին զորդինն Շեմայ երկնաւորի: Զուրքն ներքինք հեղձուցին զորդինն կարգին կայնի երկրաւորի: Հաստատութիւն և անդունդք առնջեցին զերկո՞ւս կողմանսն որ շոայլեցան: Պառնկութիւն հակառակ լիսկ է սուրբ և զգասա ամռանութեան:

Հապարակեաց (Տար.) Ֆ. Յ. Մ.

(1) Օր. զրիպական զրէ՝ մանաւ:

(2) Օր. զրիպական զրէ՝ երկեցուցէ:

(3) Օր. զրիպական զրէ՝ երկեցուցէ:

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

### ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԱՐԿՈՒՌԵԱՆ ԴԱՏԻՆ

Ս. Արուրոյ Կաղուածոց Տեսուչ Պետրականի Տիւ Տ. Մաքրիու Ս. Եպիսկոպոս Պայլզմանի յԱնձին Տիւ Տիւ Խարշացած Տեղեկագիրն պատճենն է:

#### ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՄՐԲԱՋԱՆ ՀԱՅՐ,

1928 Նոյեմբեր 25 ին Լոնտրայէն Երուսաղէմ ժամանեց Պատրիարքարանիս Դիւնապետը, Տիւ Կարապետ Յ. Նուրեան, յաջողութեամբ գլուխ հանելէ յիտոյ իրեն յանձնուած այն պաշտօնը, որ էր՝ Ճիպրան Կարկուուի Ժառանգութեամբ Երուսաղէմ Հայոց Ս. Յակոբեանց վանքին պատկանող Մհծ Արքի մասին Վերաբքնութեան համար Անգլիոյ Կայսերական Բարձրագոյն Ատեանի Դատական Մասնաւոր Ճիւղին առջե տարուած Դատին առթիւ Ներկայացուցիչն ըլլալ Ս. Աթոռոյ, և անոր շահերուն պաշտանութիւնը հետապլնդել:

\*

\*

Երկու տարի առաջ, այսինքն 1 Յունիս 1926 ին, Անգլիոյ Կայսերական Մասնաւոր Ատեանէն սոյն Դատը Լոնտրա փոխադրելու հրամանը Երուսաղէմ հասնելու թուականէն անմիջապէս յիտոյ, Զեր Ամենապատութեան և Տնօրէն ժողովոյ կողմէ Ա. Աթոռոյ Դիւնապետ Տիւ Կարապետ Յ. Նուրեանին յանձնուած պաշտօնը կը բաղկանար հետեւեալ կէտերէ.

Ա. — Հսկել Դատի թղթածրարին Լոնտրա փոխադրութեանը, մասնաւորապէս հոգ տանելով որ՝ սոյն բազմախտոն թթածրարին թարգմանութիւնը Հակառակորդաց կողմէ չխեղաթիւ բուի կամ չխարդախութիւ:

Բ. — Դատին վերաբերմամբ լրացուցիչ թղթածրար մը ներկայացնել՝ Կայսերական Մասնաւոր Ատեանին:

Գ. — Զեր Ամենապատութեան նա-

խագահութեան ներքեւ այս հարցին համար զումարուած Տնօրէն ժողովոյ մասնաւոր Նիստակրուէն մէջ՝ Դատի պաշտպանութեան մասին ընդգրկուած սկզբունքներուն համաձայն՝ հազորգակիլ ի Լոնտրա մեր ընտրած փաստաբաններուն՝ Մր. Ֆառուէր էնտ Լէկի, Սըր Անթոն Պերթրամի (Նախկին Պետ Կիպրոսի Արդարութեան Պործոց Պաշտօնատան), եւ Սըր Շէլտան Ամօսի (Նովէկին Իրաւադէտ-Խորհրդական Եղիպատական Կառավարութեան) հետ:

Դ. — Ներկայացնել Պատրիարքարանը՝ Կայսերական Մասնաւոր Ատեանին մատ, հսկել Դատի ընթացքին՝ Լոնտրայի մէջ, և տեղեւուկ պահնել Պատրիարքարանը՝ Դատին ամէն մանրամասնութեանց:

\*

\*

Այս Դատը, որուն ծագումը 73 տարիներու հնութիւն մը ունի, եւ որ այնքան տաղտուկ ու նիւթական զոհողութիւններ պատճառած է Պատրիարքարանին, այժմ յաջողութեամբ վերջացած ըլլալով, կարեւոր է ճշգրիտ տեղեկութիւններ տալ անող ունեցած ընթացքի մասին, նախ՝ Պաղեստինի Բիթանական զրաւումէն ի վեր Երուսաղէմի գատարաններուն առջև, և յիտոյ անոր ի Լոնտրա փոխադրութեան առթիւ պատրաստուած այն պաշտպանողականին վերաբերմամբ, որուն շնորհիւ Լոնտրայի Կայսերական Մասնաւոր Ատեանին կողմէ մերժուեցաւ ան:

\*

\*

Զինագագարէն քիչ յիտոյ, 1919 Մարտին, Ճիպրան Կարկուուի ժողուանգորդները, յուսալով որ, այն տանին տիրոզ վարչական տակնու վրայութիւնը եւ Թրքական հին արձանագրութեանց փացումը, — ուրանք արգիւնք էին Թրքական Իշխանութեանց Պաղեստինէն հապճեպ հետացումին — կրնային նապատաւոր ըլլալ իրենց, վերանորոգեցին՝ իրենց հօրը կողմէ Պատրիարքարանին գէմ վազուց ի վեր տեղի ունեցող շամբարի փորձը, եւ գտա բացին Ս. Աթոռոյ գէմ՝ առարկելով.

Ե. — Թէ՛ իրենց հայրը՝ Ճիպրան Կարկուու, 10 Մէս իւլ Ամիրը 1275 թուակիր Հէօնէթը Շէրիով՝ 6000 զրուշի փոխարէն

զնած էր յերուսաղէմ՝ Բառ իւլ Մէյտանի վրայ Մհօ Սրտ կոչուած զետինը, որ այժմ կը զանուի Պատրիարքարանի սեպհականութեան նկրքեա:

2.— Թէ՛ այն թուականին, Երուսաղէմի Հայոց Յովհաննէս Պատրիարքը՝ խըլու համար այդ հողը ձիպրան Կարկուսի ձեռքէն, համաձայնիլով Երուսաղէմի կառավարիչին հետ՝ զայն բանարկելու արած էր, և վերոյիշեալ Հէօնճէթը ջնջել առաջ յետոյ՝ յաջողած էր զնել նոյն հողը կառավարութեան ձեռքսով, և այս կերպով 70,000 դրամի փոխարէն ճ ճէմագի իւլ էվիլ 1276 ին տիրացած էր այդ գետինին:

3.— Թէ՛ յետոյ, ձիպրան Կարկուս ըսողքած էր Երուսաղէմի մէջ, և ստացած էր Պատրական սրուում մը՝ թէ հողը իրեն կը պատրականէր, բայց չէր կարողոցած զայն իրեն վերագարձնել առաջ, վասն զի Հայեալ շատ ազգեցիկ էին:

4.— Թէ՛ ձիպրան Կարկուս, 1302 ին, Յովհաննէս Պատրիարքի յաջորդ Եսայի Պատրիարքին Պոլիս գտնուած պահուու, Անատոլու Պատր-Ասքէրիի Դատարանին առջն Եսայի Պատրիարքին դէմ զատ բացո՞ւ և ձեռք բերած էր Անատոլու Գաւ-Ասքէրիէն՝ 1 ճէմագի իւլ էվիլ 1302 թուականով և Ֆէթվախանէն վասիրացուած իւլամ մը, որ նոյն հողին տէր կ'ընէր զայն:

5.— Թէ՛ Հայոց ազգեցութեան չնորդիւ Առութան Ապտ իւլ Համբատ Իրատէով մը արգիլած էր այս վճիռին զործազրութիւնը, և ձիպրան Կարկուսը ձիբրակալի ու դատապարտէլ տալով Յ տարուան բանարակութեան՝ աքսորած էր Պատմէմունի՛ ուր Յ տարի բանտը մնալէ յետոյ մեռած էր ան:

6.— Իրեն հետեանք այս ամբուստանութիւններուն, ձիպրան Կարկուսի Փառանդորդները կը պահանջէին՝ Անատոլու Պատր-Ասքէրիի իւլամի զործազրութիւնը՝ հողին իրենց անուան արձանագրուիլը, ինչպէս նաև վիասուց հասուցում:

\*

\*

Կարկուսի Փառանդորդաց այն ամբուստանութիւնը՝ թէ Պատրիարքարանի ազգեցութեամբ իրենց հայրը հարստահարուած է, Պատրիարքարանը հերքեց բա-

յէ ի բաց թէ՛ Նախնական Դատարանին և թէ՛ Հողային Դատարանին առջն՝ իր պաշտամանուերովը: — Երբ Հողային Դատարանը, իրենց այդ ամբաստանութիւնները հաստատող փաստաթուղթեր պահանձնեց Կարկուսի Ժամանգորդներէն, ասոնք կը ցան ցայց տալ միայն՝ Պէյ Օղու Իքինձի ձինայէթ Մահքէմէսիէն 16 Յունուար 1317 իւն (այսինքն Պոլոսյ մէջ Կարկուսի Դատը վերջացած ըլլալէ 10 տարի յետոյ) արձակուած վճիռ մը, որով մանրամասնորէն կը հաստատուէր, թէ Կարկուս իրօք իրած էր 5 րդ հատուածին մէջ յիշուած զատապարտաթիւնը, բայց ատափ, Պատրիարքարանի կողմէ Հողային Դատարանին ներկայացուած թուղթերէն յայտնի եղաւ որ՝ Կարկուս, մինչև իսկ բանտը գտնուած առան, աղոստ ձկուած էր վոխանորդով հետապնդելու իր անձնական զատերը: Կարծեցիւ ճնշումի մը խնդիրն ալ այս կերպով վերնալով՝ Հողային Դատարանը մերժեց Կարկուսի Ժամանգորդներուն այդ սուտ ու անստի ամբաստանութիւնը:

Դարով վերոյիշեալ 4 րդ հատուածին մէջ յիշուած Անատոլու Պատր-Ասքէրիին իւլամին զործազրելի ըլլալու կամ չրւալու հարցին, Պատրիարքարանի փառարանները յայտնեցին թէ՛ այդ իւլամը անգործադրելի էր, վասն զի Առութան կամայական մէկ Իրատէովը չէր որ չնջուած էր ան, ինչպէս Կարկուսի Փառանդորդները կը պնդէին, այլ կանոնուոր զատավարութեան մը Էնթարկուելէ յետոյ՝ ոչ զործազրելի հոչակուած էր ան: Պատրիարքարանը, այն ատեն (1302) այս իւլամին զործազրութեանը ընդդիմացած էր, սա հիմն վրայ, թէ ի՛նքն իսկ էր հողին բուն սեպհականատէրը: Այդ իւլամին զործազրելի կամ ոչ զործազրելի ըլլալու հանգամանքները քննելու զործը յահճնուած էր Պատրական Խորհուրդին: Պետական Խորհուրդը, խնդիրը մանրամասնորէն քննելէ վերջ, 23 Զապան 1303 թուական որոշումավը վճառած էր թէ՛ այդ իւլամը իրօք անգործազրելի էր, վասն զի անոնք Եսայի Պատրիարքին դէմ վճիռ կ'արձակուէր իրեն անհատի մը դէմ, առանց նը-

կատի առնուելու, թէ Պատրիարքը այդ հոգին Միհիթիվիլին էր միայն:

Մէջլիսի Թէտզիզաթն ալ կը հաստատէր սոյն պարագան իր սրոշուժովը, վերջ տալով իրեն նախապէս յանձնուած սոյն գատի վերաքննական Դատավարութեան, վասն զի նոյն ատեն՝ Եսայի Էֆէնտի (Եսայի Պատրիարք) վախճանած էր: Ռւսակ՝ Եսայի Էֆէնտի (Եսայի Պատրիարք) դէմ՝ անհատական հանգամանքով մը արձակուած այդ Խլամը ի մասին հոգի մը՝ որ իրեն չէր պատկաներ, չէր զօրեր ինքնին ընդդէմ Պատրիարքարանին՝ որ բռն սեպհականատէրն էր հոգին: Մնաց որ, Պատրիարքարանի փաստաբանները նկատի կ'առնէին գլաւառապէս, զատին վերաբերմամբ, Միհիթիր Զիմանի գոյութիւնը:

\*

\*

Դատը ձգձկելու և Մէջլիսը Թէտզիզաթի թուղթիրը ցոյց չտուլու մասին Կարկուուներու թափած բոլոր ջանքերուն հակառակ, և հակառակ այն պնդումներուն՝ թէ դատավարութեան իսկ պէտք չիկար՝ որովհետեւ իրենց խնդիրը նախապէս տըրուած Խլամի մը զործողութիւնն էր միայն, այնու ամենայնիւ Հողային Դատարանը՝ համոզում գոյացնելով Շուրայը Տէօվլէթին տրուած որոշման օրինաւորութեան մասին, 13 Փետրուար 1924 ին արձակեց իր վճիռը ի նպաստ Պատրիարքարանի, վերահաստատելով Շուրայը Տէօվլէթի վճիռը, և մերժելով իրեւ ոչ հաստատուած՝ Պատրիարքարանի դէմ կարկուուներուն բրած ամրաստանութիւնները:

\*

\*

Կարկուուի Ժառանգորդները՝ այս վճիռն դէմ դատը շարունակեցին Վերաքննիչ Ատեանին առջև: Բայց Վերաքննիչ Ատեանն ալ 29 Յուլիս 1925 ին արձակած իր վճիռովը հաստատեց Հողային Դատարանի վճիռը, յայտարարելով թէ այս խնդրոյն մէջ թէպէտ շատ մը մութ էիտեր կային, բայց Միրուրը Զիման ալ կոր, և նկատելով որ օրինական Միրուրը Զիմանի ժամանակամիջոցը անցած էր, և կարկուուները՝ չէին կրցած ապացուցել իրենց այն

ամրաստանութիւնը՝ թէ Պատրիարքարանի կողմէ ազգեցութիւն մը ի գործ զրուած ըլլայ իրենց դէմ:

Պէտք է հսկ զիտել տուլ, թէ Պաղեստինի մէջ Վերաքննիչ Ատեանը կազմուած է երկու անգլիացի և մէկ անգլացի դատաւուներէ: Վ. ճիբաները կ'արձակուին կամ միաձայնութեամբ, կամ ձայներու մեծամասնութեամբ: Այս վերջին պարագային, այն գատաւուրը որուն տեսակէտը կը տարբերի իր պաշտօնակիցներուն տեսակէտէն, պէտք է որ պարզէ իր պատճառաբանութիւնները յաւելուածական վճիռով մը, որ կը կցուի միհամասնութեան վճիռին:

Պաղեստինի Վերաքննիչ Ատեանի տեղացի Դատաւուրը, որ հմուտ ըլլալով արարելէն և տաճկերէն լեզուներու՝ կըրցած էր լիուլի և խորապէս ուսոււմնասիրել խնդիրը, իրաւունքի տեսակէտով Պատրիարքարանի հանդէպ առարկութիւն մը չունենալով հանդերձ՝ ձեւի մասին ստեղյան, իր պաշտօնակիցներէն տարբեր կարծիք մը յայտնեց: Իրեն համար Միրուրը Զիմանի խնդիրը իսկ չէր ներկայանար, վասնզի կարկուուներու առաջ բերած զատը՝ որևէ օրինական հիմ չունէր: Կարկուուներուն կողմէ ներկայացուած Մէջլիսի Թէտզիզաթի Մազպաթային ուսոււմնասիրութիւնը՝ ցոյց տուած էր իրեն, որ Կարկուուն Անաստոլու Պատը-Ասքէրիէն ձեռք բերած Խլամը անկանոն և խարդախալ էր, և բնաւ օրինական որևէ արժէք չունէր, Միրուրը Զիման եղած ըլլար կամ ո՛չ:

Տեղացի Դատաւուրին յաւելուածական վճիռին մէջ մանրամասնորին պարզուած էր այս տեսակէտան իր պատճառաբանութիւններով, և այդ վճիռը կը տրուեր ինպաստ Պատրիարքարանին:

\*

\*

Կարկուուները՝ Երաւառդէմի մէջ դատելնին կրսանցուցած ըլլալով, վերջնական Վերաքննութեան համար ուղեցին դատը տանիլ Լոնարույի Կոյսերական Մասնաւոր Ատեանի Դատական ձիւղին առջև: Իրենց հարուստ մէկ ազգականուիրն շահակից ընկելու փայլուն խոստամներով, կրցան անկէ զրամական կարեւոր օժանդակութիւն մը ապահովել, և ստոյօդ խնդրազիր մը

մասացանելով՝ Կայսերական Մասնաւոր Առանձինին, յաջողեցան 1 Յունիս 1926 ին ձեռք բերել Կայսերական Հրամանագիրը, որտեղ կը հրամայուէր դատը Լոնտրո փոխադրել, Կոյսերական Մասնաւոր Առեւանէն վերաքննուելու համար, ինչ որ ծանր բարգութեան մը առջև կը դնէր Պատրիարքարանը՝ այնքան զժուարութիւններէ և զանողութիւններէ ետք, որոնց ենթարկուած էր այս զատին շնորհիւ, ինչպէս ըստինք արդէն (\*):

Դատին պաշտպանութիւնը հակառակորդներուն կողմէ՝ այս անդամ ստանձնած էր Պաղեստինարնակ փաստաբան մը: Եւ որպէսզի կարեկցութիւն եւ բարեացակամութիւն արթնցնէ ի Լոնտրա, Ներկայացնցած էր դատը իրեւ խնդրանք մը Այրիի մը (Կարկուոփ որդուոն Այրիին) եւ իր որբերուն կողմէ՝ որպէս թէ մեծ զրկանք մը հղած էր իրենց: Մասուցուած այդ խնդրանքը — օրուն մէկ պատճէնը խնդրոյն ձեռք բերած էր Պատրիարքարանը — հաւաքածոյ մըն էր զրաբարութիւններու ու սուտ յայտարարութիւններու:

Այս խնդրանքին մէջ ո՛չ միայն կը կրկնուէին Կարկուուններուն Պաղեստինի Դատարաններուն առջև նախապէս ըրած անհիմն ամբաստանութիւնները, այլ և այս խնդրով հետաքրքրուած Շէրիի զատական զանազան կազմերուն կամ Կառավարական Պաշտօնատանց սխալ հանգամանքներ կը վերագրէր փաստաբանը, դէպքէր հնարելով, կամ բռն գէպքէրը խեղաթիւրելով կամ ծածկելով, թուականներ փոփոխելով, եւ յանդգնութիւնը կ'ունենար՝ իրը թէ սկիզբէն իվեր պատմականն ընելու Կարկուունն Դատին:

Բայս այսմ՝ Կարկուուններու կողմէ ներկայացուցուած այդ խնդրագիրը զիխաւորուածէս կը հիմուէր հետեւական լշնուու յայտարութեանց վրայ.

1.— Թէ Մահքէմէի Շէրիի 10 Բէպի

(\*) Զմունանք ըսկելու որ այս երկարատեւ զատին սկզբնաւորութենէն և անոր ամբողջ ահաւողութեանը ըրջանին՝ Կարկուունները, նոյն իսկ դատը Լոնտրա փոխադրելէ վերջն ալ, զանազան միջոցներ գործ ածելով, աւելի կամ պահան գումարներ կ'ուզէին՝ Պատրիարքարանէն՝ դատէն ձևնթագութ ըլլալու համար Բայց Պատրիարքարանը՝ վասահ իր զատին արգարութեանը՝ ամէն անդամ մերժած էր այդպիսի անզատաւքի համաձայնութիւն մը:

Իւ Սանի 1275 թուակիր Հէօճճէթով խընդուոյ աստրկայ զետինը Կարկուու գնած և աւէր զարձած էր անոր, բայց Յովհաննէս Պատրիարքանարկել տուած էր թէ՝ Կարկուու և թէ՝ այդ զետինը ծախողները, և որովհետեւ այն ատեն օրինական չէր եկեղեցական Մարմանոյ մը համար հողատէր ըլլալ, յիշեալ Պատրիարքը ուրիշի ձեռքով 75,000 զրուցի գնել տալով այդ զետինը, տիրացած էր անոր:

2.— Թէ՝ Կառավարական Գործադիր Մարմինը (?) յետոյ անուանած էր յատուկ Պօմիսօն մը, որուն կողմէ 5 Մուհարրէմ 1280 ին արուած տեղեկագրին մէջ յայտարարուած էր թէ՝ այն գնումը՝ որուն վրայ կը հիմուէր Երուսաղէմի Հայոց Պատրիարքը՝ անարժէք էր:

3.— Թէ՝ Կարկուու գատ բացած էր Երուսաղէմի Բաղաքային Դատարաններուն առջեւ:

4.— Թէ՝ Կարկուու Վերաքննութեան Դատ ալ բացած էր(?) և 1 ձէմազի իւ էվգել 1302 ին՝ Անատօլուի Վերաքննիչ Ատեմինը (?) հաստատած էր իր գնումին օրինականութիւնը:

5.— Թէ 21 ձէմազի իւ էվգել 1303 ին՝ կ. Պոլսոյ Շէրիի Բարձրագոյն Ատեմինը (?) հաստատած էր Անատօլուի Վերաքննիչ Ատեմինին Վէրիպը:

6.— Թէ՝ Հատ մը յետաձգումներէ վիրջ, Կարկուու յաջողած էր, 4 Աղօսթոս 1310 ին Երուսաղէմ յղել տալ Ինքայի հըրաման մը: Բայց այս հրամանին գործադրութիւնը արգիլուած էր՝ Սրդարութեան Գործոց Նախարարութեան կողմէ 18 Մայիս 1311 թուականով տրուած վարչական ուրիշ հրամանով մը (\*):

7.— Թէ՝ Հայիրը 1317 ին աքսորել տուած էին Կարկուուը ի Գասթէմունի, ուր և մենած էր ան 1322 ին (\*\*):

Դիտել կուտանք թէ սոյն յերիւրածոյ պատմականին մէջ յիշուած գէպքէրը ամելողնովին սխալ կամ խեղաթիւրուած են.

(\*) Սոյն խնդրագրին բոլոր սաայօզ համաձայներն ալ՝ միաւ մի իրենց արժէքին վերածաւ են մեր Պաշտօնառզականի յօդուածներուն մէջ, ինչպէս պիտի աեսնուի յետոյ:

(\*\*) Կարկուու բանտարկութեան պատճառն արգէն ի վերեւ պարզաւած են՝ իրեն զէմ այդ մասին արժակուած Վճիռին մէջ:

անոր մէջ յիշուած գատարաններն ու վարչական կազմակերպութիւնները՝ կամ բնաւ դուռը թիւն չեն ունեցած եւ կամ չինծու հանգամանքներով ներկայացուած են, եւ որեւէ յիշատակութիւն չկայ այն կարեսը փաստաթուղթերու մասին, որոնց համաձայն՝ կարկուուի կեզդ Հէօճճէթը ջնջուածէ 1276 ին երուսաղէմի Մէճիսի Քէպիրին տուած որոշումովը՝ և երուսաղէմի Մէճիսի իտարէն ալ 1302 թուականի Մազպաթոյով՝ յետ վերսին քննութեան՝ կարկուուի վերոյիշեալ կեզդ Հէօճճէթին ջընջուածը օրինական կը համարի: Զէ ակնարկուած նաև Պետական Խորհուրդի 22 նուպան 1303 ի Մազպաթային որոշումը, ուր կը մատնանշուէր Անտաօլու Գատը-Ասքէրին կողմէ տրուած տարօրինի Իւամին անգաւերութիւնը: Աւելի վարը պիտի չէտուի՛ մեր իրուունքը յատակօրէն լուսարանոց սոյն փաստաթուղթերուն կարեւորութիւնը: Բաց աստի, կարկուուններուն ի Լոնտրա մատուցած խնդրագիրը լի էր Մէճէլլէի մէջրերուններով, որոնք ուղղակի առնչութիւն մը չունէին բնաւ խնդրացն հետ:

Լոնտրայի մէջ իրենց գատը վարելու համար՝ կարկուուններուն Պաղեստինարնակ փաստարանին կողմէ նշանակուած անդիմացի փաստարանը անուանի և պատուաւոր անձնաւորութիւն մը ըլլալով հանգերձ, կարկուուններու այս միակողմանի կամ սուտ յայտարարութիւններէն աղջուած կ'երեւէր, եւ կը զործէր սխալ համոզումէ մը տարուելով:

\*

\* \*

Ատեղծուած այս լուրջ կացութեան առջև, Պատրիարքարանը՝ զիտակից ըլլալով Ազգին հանդէպ իր ունեցած պարտականութեան եւ վատահ իր իրաւունքին ու Բրիտանական արդարագատութեան, լիւալի զործ զրաւ իր բովանդակ ջանքերն ի պաշտպանութիւն իր գատին:

Աւստի Զեր Ամենապատուութեան նախականութեամբ Տնօրէն մողովի մասնաւոր Նիստակրուն մէջ հարցը ուսումնաւորուեցաւ և վիճարանուեցաւ իր ամէն կողմէրովը: Անյապազ արտեցան հետհետ որոշումները, և աղջուօրէն հետապնդուեցաւ անսնց ճշգիւ զործագրութիւնը:

Ա. — Գուշակելով որ հակառակորդներուն փաստաբանը կարելին պիտի ընէք խարզախելու համար Պաղեստինին դատարաններուն մէջ զոյութիւն ունեցող թըլթածքարները, անոնց բովանդակութիւնը համաձայններու գիտումով ի Լոնտրա կարկուուններու մատուցած խնդրագիրին, ուրչուեցաւ որ ամէն ջանք թափուի՛ թըլթածքարը իր ամրողութեամբ զրկուելու համար Լոնտրա, և թարգմանութիւնները մեծ զգուշաւորութեամբ համեմատել տալու փաստաթուղթերուն արարերէն և թուրքերէն բնագիրներուն հետո: Թարգմանութեանց ճիշդ ըլլալու հարցին կարեւորութիւը զիւրին կը հասկցուի, երբ յիշուի թէ ըստ կանոնի՝ այս թարգմանութիւնները կատարելու զործը կը վերաբերէ Հակառակորդ կողմին:

Բ. — Գիտակ ըլլալով որ Լոնտրայի Կախուննական Մասնաւոր Ստեանի Դատաւեան ձիւզը, իրեն ներկայացուած բոլոր դատերու վերացնութեան մէջ, նկատողութեան կ'առնէ ոչ միայն զտտին օրինական կէտերը, այլ նաև արդար բնոյթը, որոշուեցաւ, վաւերացեալ փաստաթուղթերու ձեռով ներկայացնել՝ զատին ի սկզբանէ անտի ունեցած բոլոր պարողանները, որպէսզի Կայսերական Մասնաւոր Ստեանը կարենայ խնդրին խելամտիւ կատարեալ զիտակութեամբ:

Ա. կէտին մասին Պատրիարքարանը ստիպուեցաւ բուռն պայքար մղել: Հակառակորդ կողմի Պաղեստինի փաստաբանը՝ թղթածքարը կազմող 90 կտոր փաստաթուղթերուն մէջէն՝ միակողմանի ընտրութեամբ՝ միայն 30 կտորի ցանկ մը պատրաստած էր, եւ կը պնդէր որ Լոնտրա զրկուելիք թղթածքարը բարկանար միայն այդ 30 կտորներէն: Հարկ եղաւ զինքը Դատարան կոչել, ուր Պատրիարքարանի պահոննաւումին փրայ, թղթածքարին պարունակած փաստաթուղթերը ամերողջութեամբ և միաս մի քննուեցան յատկագիւ կազմուած զտտական Գօմիսինի մը առջն, եւ որոշում ձեռք բերուեցաւ, որ զոյութիւն ունեցող փաստաթուղթերու մէջէն կարեւորագոյն նկատուած 77 կտորներէն կազմուի Լոնտրա զրկուելիք թղթածքարը: Այս որոշումը ձեռք բերելու համար պէտք եղաւ երեք ամիս մաքատիլ, և

Դաստիարակություն առ առ այս վեց երկուր նվազաւոր նույնիրեց:

Եօթը հարիւր էջերէ բաղկացած արարքերէն և թուրքերէն որյն զատորոշուած փաստաթուղթերը ճշգիւ թարգմանելու խնդիրն առ աւելի գմաւարութեամբ լուծաւեցաւ, և մեծ վէճեր բացաւ Պատրիարքարքանին և հակառակորդ կողմի փաստամանին միջեւ: Այս վերջինը ջանք կ'ընէր միշտ թարգմանութիւնները խեղաթիւրելու, բայց Պատրիարքարքանը՝ որ ի ձեռին ունէր որյն թղթածրարին անպիտերէն անըստգիւաթ թարգմանութիւնները, կրցաւ խայտառակել հակառակորդ կողմի փաստարքանին խարգախ թարգմանութիւնները: Դործը վերսին Դատարան ինկաւ, և Հարկ եղաւ 18 ամսուան մէջ 30 անգամ դատարան ներկայանաւ, որպէսզի թղթածրարին ճզգիւաթ թարգմանութեան հարցը — որուն ամբողէս կապուած էր դատին ըստարքը — լաջող լուծում մը գտնէր ի գոհացումն Պատրիարքարքանի արդար պահանջումներուն:

Գալովք Բ. էէտին՝ Պատրիարքարքարանը հոգը մը աղերսազիր ներկայացնելով Մահքէմէի Շէրիֆին՝ վերջապէս յաջողեցաւ վնասուի և զանել տալ Մահքէմէի Շէրիֆի 1275-1280 թուականներու հին տոմարները, և ստանուալ անոնց պարտնակած արձանապութիւններուն վաւերացեալ պատճէնները: Այս կերպով երեան հանուեցան անցեալին մէջ տեղի ունեցած վաւերական դէպքեր և կազմուեցաւ բուն իրազութիւնները պատճէլուող յաւելուածական թղթածրար մը, որուն մէջ յայտնապէս հաստատուած են հասեեալ պարագաները.

1.— 5 ձէմազի եւ էպէլ 1276ին (1858) երուսաղէմի Հայոց Յովհաննէս Պատրիարքը 75,000 զրուցի կը գնէ կառավարութեան կողմէ աճուրդի հանուած հողը՝ որ կը գտնուի յերուսաղէմ, Բառ-Եւ-Մէյտան կոչուած տեղը: Այս հողին նախկին սեպհանատէրներն էին՝ երուսաղէմի մերձակայ Լիֆթա կոչուած զիւղէն 18 գիւղացիները:

Յովհաննէս Պատրիարք օրինաւորապէս տէր կ'ըլլայ այս հողին, և ոյն թուականէն, այսինքն 73 տարիներէ ի վեր, երուսաղէմի Հայոց Պատրիարքարքանին սեպհանութիւնը կը գտնաւ նոյն դատինը,

որուն վրայ Հայոց Պատրիարքարանը քանի մը մեծ չէնքեր կառուցանել տուած է: Յետոյ, ոչ Կարկուռ եւ ոչ առ իր ժառանգորդները նոյն գետինին ձեռք չեն դրած բնաւ:

2.— Պատճառը, որուն համար Լիֆթայի 18 գիւղացիները որյն գետինը կառավարութեան միջոցաւ ծախու հանած էին, ոյն եղած էր որ՝ Կարկուռ կեղծ Ճէօճճէթ մը ցոյց տուած էր, որուն մէջ այս 18 գիւղացիներէն 9 ին անունները կը յիշուին, բայց մնացեալ 9 սեպհանատէրինուն անունները չէր կրցած ստուգիւ, կամ չէր ուզած միշել զանոնք՝ անչափահաս ըլլաւնուն պատճառու: — այս Ճէօճճէթին մէջ կ'ըսուէր թէ, Կարկուռ այս գետինը կնած էր 6000 զրուցի փոխարէն:

Հողին բուն սեպհանատէրիը, այսինքն Լիֆթայի այդ 18 գիւղացիները խըմբովին Կառավարութեան կը բողոքեն ուղղակի, կամ խնամակալներու միջոցաւ: Ասոր վրայ Կառավարութիւնը կը կաչէ Կարկուռը երուսաղէմի Մէճլիսի Քէպիրին առաջեւ, ուր երբ գետինին սեպհանատէրին բուն հատ երես երեսի կը բերուի՝ Կարկուռ կ'ուրանայ իր արարքն ու կեղծ Ճէօճճէթին գոյութիւնը: Կառավարութիւնը սակայն, քննելով Մահքէմէի Շէրիֆի տոմարները՝ երեան կը հանէ որ իրօք կայ հոն արձանագրութիւնը այցպիսի Ճէօճճէթի մը, զոր Կարկուռ խարգախութեամբ ձևոք բերած էր համոյտամար զրագիրի մը մեղսակցութեամբը: Այս արձանագրութիւնը կը չնջուի: Բայց Կարկուռ, հակառակ իր բանտարկուելուն, եւ զինքը զատապարտող աղիներեւ ապացոյցներուն՝ կ'ուրանայ իր քով զտնուող Ճէօճճէթի մը զոյութիւնը, և կը մերժէ յանձնել զայն: Ասոր վրայ, Հողին բուն սեպհանատէրներէն չափահանութեան կը իրենցմէ անչափահաս եղողներուն խնամակալները՝ Մահքէմէի Շէրիֆին արտօնութիւն ոտանալէ յետոյ՝ կը իրենց կառավարութենէն, որ հողը աճուրդ գտնակայ և փախարժէքը իրենց յանձնէ, զանողի կը վախնային որ Կարկուռ՝ ի ձեռին ունեցած այդ կեղծ Ճէօճճէթով՝ կրնար ապազիրին նորանոր զժուարութիւններ յարուցանել իրենց գէմ:

3.— Կառավարութիւնը, այն թուականին ուր զոհացում կուտայ Լիֆթայի 18

գիւղացիներու սոյն արգար պահանջումին, միաժամանակ աճուրդի հանել կուտայ նաև ուրիշ զետին մը, որ կը գտնուեր երուսաղէմի մէջ Դամասկոսի զրան մօտ, և յայտնի կ'ըլլար որ Կարկուռ՝ այս վերջին գիւղինը 6000 զրուցի քնած էր, ասանց յարգերու Սրազի Գանձնամէմի զետին ներու առուծախի վերաբերմամբ պարտազրած պաշտօնական նոր ձեւակերպութիւնները:

Դամասկոսի զրան այս զետինին համար էր որ՝ Կարկուռ քանի մը տարի վերջ, 1280 ին, յաջողած էր Երուսաղէմի Մէջիւսի Քէպիրէն ձեռք բերել զիր մը՝ սա յայտարարութեամբ որ՝ եթէ միայն Եէրիաթի հիման վրայ քննուեր զործը՝ իր այդ նախկին Հէօնձէմը պէտք էր գտւերական նըղատել, Կարկուռ այնպէս մը յերիւրած էր զործը, որ այս զրութեան մէջ չէին յիշատակուած ո՛չ հողին դիրքը, և ո՛չ ալ սահմանները: Կարկուռ Դամասկոսի Դրան կողմի գետինին թղթածքարէն այս վերը առնելով՝ տարիներ յետոյ Պոլիս, Անատոլու Գատը-Ասքէրիին պիտի ներկայացնէր, մեր հողին վերաբերեալ թուղթերուն կցելով զայն, իրուն նոյն հողին վերաբերող վաւերագիր մը:

4. — Հազլիան 1286 ին (1266), Կ. Պոլոյ իտալական գեսպանին բողոքին վըրայ, Կարկուռ կ'աքսորուի Երուսաղէմէն: Պատճառն այն էր որ՝ Կարկուռ, շարունակելով իր խորդախութիւնները, 1200 ոսկիի մուրհակ մը պատրաստած էր, և անոր ներքի կեղծած էր Երուսիալո Արիէլ անուն իտալահպատակ հրեայի մը ստորագրութիւնը: Կարկուռ, իր այս նենգութեան համար, թէև մէկ տարուան բանտարկութեան դատապարտութիւն կը կրէ, բայց իր ի գործ զրած միջոցներուն չորհեւ կարելի ըլլար գատարանին զնիոր զործադրել Երուսաղէմի մէջ: Եւ սակայն Պոլոյ իտալական գեսպանին բողոքին վըրայ, Կարկուռ՝ կայսերական իրաւուգ Պոլիս կը տարուի, և հոն վերաքննուելով զատը, յանցանքը կը հաստատուի, և մէկ տարուան համար կը բանտարկուի: Բանտէն ելլելէ յետոյ՝ շ'արտօնուիր Երուսաղէմ վերադառնալ: Բայց Պոլոյ մէջ հատկանշէ կը յառաջանայ իրքի Հարդեռ փաստարան, և քսան տարի յետոյ վերստին մէջտեղ

կ'ելլէ, եւ այս անգամ՝ Հարդեռ անդամ ականավոր, ու մեր Պատրիարքարանին սեպհականութիւնը խելերու համար նոր փողձերու կը ձեռնարկէ:

5. — 1302 ին Եսայի Պատրիարք, որ յաջորդած էր Յօվհաննէս Պատրիարքին, Կատիգորի Պոլիս երթաւ՝ Երուսաղէմի վանքին պարտքը կարգադրելու յոյսավ, Կարկուռ, որ ամէն տեսակ խարզախ գործերու մասնակցերով՝ ազգեցիկ զիրք մը գրաւած էր այն տաեն, կը կարձէ թէ բարեկէտ տափթը ներկայացնած է իրեն, ուստի կը փութայ աղերսագիր մը մատուցանել Պապը Մէջէյլսթին: Եւ որովհեաե իր քով պահած էր յանձնել չուզած կեղծ Հէօնձէթը, որու մասին խօսեցանք վերե, և զոր չնշած էր Մէջիլսթ Քէպիրը, այս անգամ կը գործածէ այն գիրը՝ զոր 1280 ին ձեռք բերած էր Մէջիւսի Քէպիրէն՝ Դամասկոսի զրան մօտի զետինին համար, ինչպէս բացարկեցինք քիչ առաջ Յ Հատուածին մէջ: Այս զրութիւնները կը կցէ իր աղերսագրին, և հետապնդելով զործը, կը յաջողի Թէթփախանէն հանել տալ հրաման մը՝ որպէսզի ինդիրը յանձնուի Անատոլու Գատը-Ասքէրիին, որուն հետ կ'երել թէ Կարկուռ համաձայնած էր գաղտնապէս:

Անատոլու Գատը-Ասքէրին անմիջապէս կոչնագիր մը ուղղելով կը հրամայէ որ Եսայի Պատրիարք ներկայանայ իր գատարանին ուզնէ: Հականակ անոր որ Անատոլու Գատը-Ասքէրին ձեռնհաս չէր այս զրութ տեսնելու, Կ. Պոլոյ Պատրիարքարանը սեղեկութիւն ստանալու համար՝ Անատոլու Գատը-Ասքէրիին մօտ կը զրկէ իր տաճկերէնի քարտուղար Կարապետ էֆէնտի Մաչառութեանը: Այս կերպով Ազգ Պատրիարքարանը սխալ քայլ մը կ'առնէ, վասնի Անատոլու Գատը-Ասքէրին, Կարապետ էֆէնտի ներկայութեանը, զատագրութիւն մը ձեւակերպելով՝ անձամբ Կարկուռին կարգալ եւ բերանացի թարգմանել կուտայ արաբերէն լեզուով շարադրուած վերափեալ թուղթերը, և յետոյ կը հարցնէ Կարապետ էֆէնտիին՝ թէ ի՞նչ պիտի պատասխանէր ասոնց զէմ: Կարապետ էֆէնտի կը պատասխանէ թէ՝ այդ գետինը Երուսաղէմի վանքին սեպհականութիւնն է, և Պատրիարքը անսր Միւ-

թէվէլին է միայն, թէ՝ այդ հողին վերասըրեալ թռողթերը կը գտնուին երռուազէմ, և պէտք է որ ատկից բերուելով դատարանին ներկայացնին, և նկատողութեան առնուեն։ Անատօլու Գատը - Ասքէրին ի նպաստ Կարկուոփին Իքքարի մը հանգամանքը հազցնելով այդ պատասխանին, իր տոմարին մէջ արձանագրի կուտայ՝ թէ Կարապետ էֆէնտին եքրար մը ըրած է, ու կը հրամայէ՝ ըստ օրինի ստորագրել առոր ներքեւ։ Կարապետ էֆէնտի կը միշտէ ստորագրել Բարերախտարար, Անատօլու Գատը - Ասքէրին Մուտափինը, որ ուզգամտած մըն էր, և չէր կրնար մեղսակից ըլլալ այսպիսի անարդարութեան մը, տոմարին մէջ արձանագրութիւն մը չգած էր, յայտարարող թէ՝ Կարապետ էֆէնտին մէրժած էր այսպիսի Իքքար մը ըրած ըլլալ, և ընդդիմացած էր ստորագրել անոր տակ։

Այսու հանգերծ, Անատօլու Գատը - Ասքէրին, շարօւնակելով իր սկսած ապօրիւնի դատավարութիւնը, Կ'արձուկէ իր վրձիոը 1 Ճէմազի Խւլ կվել 1302, որով կը հրամայուի՝ Կարկուոփին յանձնել Պատրիարքարանին սեպհական այդ գետինը։

6. — Այսպիսի անիրաւութեան մը առջեւ Ազգ, Պատրիարքարանը երկու խլնդրագրեր կը ներկայացնէ, մին՝ Կայսեր, և միւսը՝ Շէյխ Խւլ Խոլամին ուղղեալ։ Այս խնդրագրերով կը բողոքուի Անատօլու Գատը - Ասքէրին զործած անարդարութեան գէմ։ Շէյխ Խւլ Խոլամին մատուցուած խընդրագրին կցոււած էր, Խլամին մէկ պատճէնը և խնդրուած անոր վերաքննութիւնը։ Ասոր վրայ Խլամը կը յանձնուի Մէճլիսի Թէտպիգաթը Շէրիին՝ պէտք եղած քննութիւնը կատարելու համար։

Պատրիարքարանին կողմանէ Անատօլու Գատը - Ասքէրիին զէմ եղած այս ծանր ամրատանութեան առջեւ Մէճլիսի Թէտպիգաթը Շէրիին առաջին զործը կ'ըլլայ՝ Երռուազէմի Մէճլիսի Խտարէին միջոցաւ տեղուոյն վրայ քննութիւն կատարել տաւ, ճշդելու հոմար՝ թէ ո՞վ էր հողին սեպհականատէրը։ Վճռական կ'ըլլայ այս քննութեան արդիւնքը՝ կը հաստատուի որ հողին նախկին բուն սեպհականատէրելը, որոնք 26 տարի առաջ կառավարութեան ձեռքով ծախու հանած էին զայն, իրօք

